


**1861**

P. K. F.



~~1303~~

~~1494~~

~~1794~~



ԳԱՐԱԿ  
ՎԵՐՁԻՆ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՅ  
ԲԱԴՐԱՏՈՒՆԻ



# ԳԱԳԻԿ

## ՎԵՐՋԻՆ ԱՐԴԱՅ ՀԱՅՈՅ

ԲԱԴՐԱՑԱԽԻՆԻ

ԹԱՅՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Կ ՀԻԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ԳՐԱՑ

Ա ԿԱՐԱՊԵՏ ՏԵՂՄԱՆ Ա ԿԱՐԱՊԵՏ ՏԵՂՄԱՆ  
Տ Ա ԿԱՐԱՊԵՏ ՏԵՂՄԱՆ Ա ԿԱՐԱՊԵՏ ՏԵՂՄԱՆ



ՅԱՐՈՒԱՆԴԵՄ  
ՖԱՌԱՆԴԱԿԱՆ ԱՆՎԱՐԱՆ ԱՆՎԱՐԱՆ  
ՄԱՆՈՒԿ ՅԱԿԱՆ ԱՆՎԱՐԱՆ

1872

25 Մելություն. 1899 ամկ.

Գ Ա Կ Ա Բ Ե Կ Ա Բ Ե Կ Ա Բ Ե  
Ո Ա Կ Ա Բ Ե Կ Ա Բ Ե Կ Ա Բ Ե

59. 11000 miles. 1800 miles.

0. 0. 10. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0.

1000 miles. 1000 miles. 1000 miles.

0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0.

0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0. 0.

SPRINGFIELD.



181

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս · ԷՀՄԻԱՃՆԻ

S. S. ԳԵՂՐԳՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԿ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

S. ԵՍԱՅԵԱՅ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ · ՊՈԼՈՅՑ

S. ՄԿՐՑՉԻ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

# Յ Օ Ղ

ՅԱՌԵՐԱՋ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵՄԵՉՔԵԱ ՊԱՍՏԻ ՖՈԲ

մանօնից մաս մէստովնեւ չափ ու ուժանառական-  
• ԵԱՎԳՈՎՅԱ մ. լոյ, ուս զըմ պարզագույն առ-  
քիմուն քառու կ կառավար ուշին պատճեալ ուն-  
տարդոց մասին և բոլոր դավի մեռու մօյլը դաշտուն  
ուղար մեխուա քշօր գօն ու կըսմակ է. Ա  
• Փոք կ սատեաս լարաց սար ու սըսնոր և Յ  
• Առաջ պատեաբ աւարաւախուզ տարին կ ԱՀ  
• Առաջ ՝ վիզու տամարդու և մըսաց բանուց  
• Առաջ ուստիրդ օտաձնութ կ պիքալուս լիւ  
• Է ի բարեաւար օնս կարդ ուսաց չարից մանեւ-  
• Շնու, բայ ցմա կըսաւածոյ պիքարդուս ու լ  
• Առաջ լու լուսին կ մինեաց մարտառար ուն-

ԵԿԱՑՈՒՅՑ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

**Թ**ԱՅՏՐԵ հրահանգի վարժոց մի է , ուր կը կրթուին մըտքեր , կը վառին սրտեր , և սրտի զգացումներ կը շարժին : Ժամանակը իւր արդար դատակնիքը հոն կը դրոշմէ առաքնելոյն ու ամբարշտին հակատը : Լուսաւորեալ աղքեր միշտ յարգեցին թատրը , քանիլի աղքային զարդոցումն անգ ակներեւ տեսան : Բայց աղքաց այս զարդացումն արդարեւ այն թատրը միայն կարող է առաջ որոյ հիմնը ժողովրդոց բարուց ու վարուց ու զգութեան համար ճշմարիտ բարոյականութեան վերայ հաստատուած է : Կազին է այն աղք , որ առանց թատրը առանց գելթ աղքային մասնաւոր հանգիսից կ'ապրի : Հայրենեաց զգացումն մարած է այն աղքի օրոփի մեջ , որ իւր նահարտակաց անմոնհ անտանի աղքային հանգէնիքով պատուել չը փափագիր : Զուրկ է մարդ 'ի հանճարոյ , դուրկ 'ի ճշմարիտ ըստաց , երբ իւր հայրենեաց բարերար ու սուշտագան արիներու հոհատակութեան հանգէնոր կը տեսնէ , և արտասուը մի չը թափիր : Եզկելի է այնպիսին , անզկայ արարած մարդկութեան խմբին մեջ :

**Ե**ւ որովհետեւ մեր աղքն ալ մի քանի տարիէ հետէ թատրական աղքային հանգիսից կարեւորութեան յարգը ճանչնալով՝ կը շարժի , համարձակութիւն ստացայ ըստ մերում կարի այս թատրերութեանը . յօրինել , և Ս . Ուխտիս Կախագահ Ամեն . Տ . Տ . Եսայի Արքազան Պատրիարք Հօր Ճեռամբարտ նույնիրել Վանակայլ Անուարացի . Աշքեան Յակոբ է . Քէնտիի գերտաստանի անուան , որ Ս . Սիօնի ուսումնարանի յառաջադիմութեան համար իւր երկու հաղար Օսմանեան ու իի կատարնի բարերար հանգիստացւ անգ սկատսպարեալ աղքային մանկուցն \* :

Թատրերգութեանս սկատմական նիւթն այս է :

**Յ**ովհաննէս—Սմբատ կը մեռանի , և երկու տարի նախարարաց անմիտութեան համար թագաւորական ամթուը սկարար կը մնայ : Խոկ Վեռա Սարդին իշխանն Սիւնեաց՝ աղքին անիշխանութեանը սկատէհ միջոց համարելով՝ կը կազմատէ արքունի դանձը , և կը խորհի Յունաց ձեռամբ թագաւորել : Խոկ կայսրն Յունաց

\* Տէս 'ի Սիօն ամսաթերթ , տարի 2 . թիւ 11 :

Եթեայէլ երբ կը լսէ մեր Յովիշաննէս անխոչէմ արքային մահը ,  
անմիջապէս կը պահանջէ արքայանիտս և հոյակապ Անիքաղպը :  
Կը մերժէն չայք : Ուստի կարոքը վերջապէս կը ստիպուի հարիւր  
հաղար սդւոյ չափ բանակ խրկել ՚ի չայս : Քանի միշտածակ  
մամբ Յոյնք զայտառան բաւական աւերելէն վերջը՝ հուսկ ու  
րեմն կը հասանին ՚ի գրունտ Անոյ և կը բանակին : Կը սրտմանին  
չայցք : և կը ժողովին առ ծերունին Վահրամ սպարապետ  
Պահլաւունի : Քաջազն չայք կը ճակատին Ծիրակայ գաշտին  
մէջ , կը զարմուին , կը յաղթէն և կը ցրուեն յունական բաւ  
նակը : Սակայն Սարգիս չը վհատիր , այլ այնուհետեւ աւելի  
կը կրկնապատկէ իւր ջանքը թագաւորելու համար , և կը յա-  
ջողի նախարարաց և Անոյ բնակչաց մէծ մասը որաւալ : Սա-  
կայն Վահրամ կ'աճապարէ , և ազգին այն նախարարաց հետ միա-  
ցած՝ որք գեռ շէին միաբանած Սարգսի հետ , կը յօրդորէ դկա-  
թողիկոն Պետրոս թագաւոր օծէլ դժագիկ , որ Սարգսի դա-  
ւաճանութենէն սարսափահար՝ թաքթաքուր աստ և անդ կը  
չընէր : կը հաւանի կաթողիկոսը : Խակ Գագիկ հնաբքով մի գաղտ  
յԱնի մտնելով կ'օծանի թագաւոր չայսոյ : Խակ Սարգիս երբ կը  
լսէ Գագկայ թագաւորելը , կը սարսափի . և ժողովելով իւր  
համախոհները՝ յԱմուրն նեղբին կ'ապառատանի : Այս է պատ-  
մութեան ճշգրիտ նկարագիրը \* :

Այս պատմութենէս փոքր ինչ շեղած եմք , և Սարգս  
սի առւած եմք յանդդնութիւն՝ խնդրել կաթողիկոսէն որ  
վինին թագաւոր օծէ , և այս անհնար շէ փառասէր և ազգա-  
գաւ վատի մի համար : Խակ Պետրոս կաթողիկոսի հայրենեաց  
հուռատարմաբար ծառայութեան վերայ զանազան տարրեր կար-  
ծիքներ թէեւ կան , սակայն մեք առաւել Մատթէոս Ուռհա-  
յեցոյ հետեած եմք , որ միշտ գովութեամբ կը խօսի : Որուն  
ձայնակից են զրեթէ բոլոր յետագայ գարուց պատմիչք :

Վերջապէս եթէ մեր այս Երկասիրութիւնը դոյզն ինչ  
յարդ ստանայ ոււսումնաթէր ազգայններէ , մտադիր եմք նաեւ  
չայտառանի նոյն գալու ազէտալի անցքերը զատ զատ ողբեր-  
գութիւններ յօրինելով՝ հետպհետէ հրատարակել եթէ խրա-  
խոյն ու յոյն զմեղքաջալերէ . . . :

\* Արիստ . Լատտ . Գ.Լ . յ. : — Մատթ . Ուռհ . Մատն Ա .  
Տ.Զ—Տ.Թ : — Միքայէլ Չամչեան , Հատ . Բ :



## ԱՆՁԻՆՔ

ԳԱԳԻԿ, Բագրատունեան լեզվին աբբայ :  
ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ, կաթողիկոս Հայոց :  
ՎԱՀՐԱՄ. ՊԱՀԱԱԼ, սպարապետ Հայոց :  
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Պահլաւ իշխան :  
ԱՊԻՒԱՏ, հաւատարիմ իշխան մեծ :  
ՎԵՍՏ ՍԱՐԳԻՍ, իշխան Սիւնեաց :  
ԴԵՐԵՆԻԿ, Նախարարը, կուսակիցք Աարգսի  
ԱԲԱՍ, մատնչի հայրենեաց :  
ԿՈՍՏԱՆԴԻՏ, ղօրապետ բանակին Յունաց :  
ԵՄՐԱՆ, իշխան :  
ԱՇՈՏ, Հայ սպայ :  
ՊԱՐ Հայ մանկուոյն :  
Նախարարը, իշխանկ, ժողովուրդը և զինուորք :

# ԳԱԳԻԿ

ՎԵՐՋԻՆ ԱՐԲԱՅ ՀԱՅՈՅ

ԲԱԳԻՐԱՏՈՒԻՆԻ

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.



Յանի . յԱմուբն ներքին : Արահի մի սրմոց վերաց Դ կան  
կերեւի փոշոտ թուր մի : Ի հետուաս կը նշմարին Անոյ  
կաթուղիկէին աշապատկները , ուր կը ծառանի հագրա-  
տունեան տան խաչանիշ դրոշը : Ուշին հերի անուի ծառա  
ղարդ ձեմելի վայրեր , ուր դաշտնե ծագկոցի :

ՏԵՍԱՐԱԿ Ա.

ՎԱՀՐԱՄ

Առաջ, ահա ամեն ուստեք Պարսք և Ալիւթք  
հեղեղի նման կը թափին , և հայրենեացս կո-  
րովի մանեկունքն ՚ի սուր և ՚ի հուր դատելով ,  
կը ապառնան զայաստան բովանդակ աւերել և  
իսպառ քանդել : Բարե՛ , այն երկիրն՝ որ քա-  
ջաց երկիր և գոռ դիւցազանց որորանն էր , այն  
երկիրն՝ որ երբեմն իւր անմիւ նահատակաց  
արեամբն ողողելով , մարդկութեան պարծա-  
նաց միակ սրբավայր հանդիսացաւ , կը հեծէ նա  
այսօր , կը հեծէ թշուառութեան և աղետից

սահկալի լծին տակ : ՎՇ, զպոյ գելթ հայկական  
քաջ սիրտ մի , որ իւր հարց նուիրական դրոշն  
պարզած՝ հսկոյաբայլ յառաջանսոյ թշնամի բա-  
նակաց գեմ, և ոգի ՚ի բոլին պաշտպանէ իւր այս  
հայրենի երկրի դարաւոր ազատութիւնը :

ՎՇ, քանի քանի անգամ ես, ալեւորա Վահ-  
րամ, Հայկեան փառաց պաշտպան քաջասիրա-  
զաւակաց պարագլուխ հանգիսացած , անվե-  
հեր վաղեցի ջաղսել այն ամբարտուան գլուխ-  
ները , որք հայհայելով հարցու Աստուծոյն սուրբ-  
անունը , կը ժալրհեին հայրենեացս որբանուեր  
հողը սոնակուել և արեամբ հեղեղել : Դուք  
կը միշէք անշուշտ , ով աստղեր , այն օրը , ո՞ր  
փառաւոր , յոր ես ՚ի ձի տշտանակեալ , սաղա-  
ւարտ ՚ի գլուխ , վահան ՚ի կուրծս , և մերկ  
թուր ՚ի ձեռին , Ապահունեաց լերանց բարձր  
գագաթէն ազատօրէն գուացի պարակականն և  
սկիւթական ահեղ բանակաց . ՎՇ ամբարիշաք,  
կացէք ո : Արասափեցան նոքա այս իմ ահաւոր  
ձայնէս , և դոլ ՚ի սիրտ թաւալագլոր անկեալ ՚ի  
գետին , ՚ի քթմելական չարաչար սատակեցան :

Այսօր , ով թշուաւութեանս , հայրե-  
նեացս անտերունչ վլճակէն սոքա ոգի առնկալ ,  
աւանիկ կրկին կը խլուտին , և կրսկին քանդն ու-  
աւեր ամեն ուրեք սիրել : Ծայց ոչ միայն սո-  
քա , եղուկ , ահաւասիկ Խաչին երկրագու-  
ժողովուրդ մի , Փրկչին հաւատացեալ ազդ  
մի , փոխանակ Աստուածութեան և մարդկու-  
թեան իրաւանց նախանհախնդիր այս ընտրեալ

Ժողովրդեան աղատութիւնը պաշտպանելու ,  
սա եւս սյօր կըսպառնայ հայ աղքայնութեան  
նախատինք՝ գերութեան ահոելի գրոշն ամ  
բողջ Հայաստանի աւերակաց վերայ ծածանել:  
Բայց կացէք , անմիտք , կացէք , քանզի ծե-  
րունին Վահրամ դեռ կենաց շունչ կը չնչէ .  
կացէք , թշուանք , քանզի դեռ Վահրամայ  
երակաց մէջ կ'եռայ այն վեհ արիւնը , որ քա-  
նիցս հոսեցաւ ՚ի սէր հայութեան : Աչ , դեռ  
այս ալեւոր ճակատուս վերայ վատութեան  
սեաւ բիծ մի ընդունած չեմ . դեռ կարող եմ  
աղքաց իրաւանց թշնամի ճիւազքդ յաշար-  
հէս ջնջել : Դու , յաւիտենակա՞նդ Օօրութիւն,  
վկայ լեր . դու , վկայդ յաւերժական , լուր .  
կ'երդնում յանմահութիւնդ , որ սիստի պաշտ-  
պանեմ զայաստան , պիտի վազեմ դարձեալ  
պատերազմի մահաշուկ դաշտը , հոն աղա-  
տութիւն սիստի գոռամ , և շանթահար սիստի  
իջեցունեմ՝ ՚ի դժոխս այն յունական գոռող գր-  
լուխները , որք իշխեցին մինչեւ Անւոյ Հայաս-  
տանեայց այս հոյակապ քաղաքի պարսպաց առ-  
ջեւ հասնիլ :

---

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԱՀՐԱՄ , ԵՄՐԱՆ

---

ԵՄՐԱՆ

ՏԵՐ ԻՄ :

## ՎԱՀՐԱՄ

Դուք էք, աղնիւ Եմիսն :

## ԵՄՐԱՆ

Եյն, Տէք սպարապետ :

## ՎԱՀՐԱՄ

Թշնամի բանակեն ի՞նչ լուր ունիք :

## ԵՄՐԱՆ

Թշնամին իւր անիզաւ պահանջմանց վերաց  
դեռ կը պնդէ, և կը պառնայ վազիւ անշուշտ  
Ենւոյ աւերակաց վերաց իւր յաղթական դրօշը  
սպարզել, եթէ . . . :

## ՎԱՀՐԱՄ

Հոգ չէ, խօսէ :

## ԵՄՐԱՆ

Եթէ յամառիմք շընդունել կայսեր այն ձայ-  
նը, որ կը մերժէ Գագկաց թագաւորութիւնը,  
և Ենիի գրաւումը խոտիւ կը պահանջէ :

## ՎԱՀՐԱՄ

Երբէք . թագին օրինաւոր ժառանդին Գա-  
ղիկէ միայն :

## ԵՄՐԱՆ

Բայց մեր այդ արդար սպահանջմամբ, Տէ՛ր,  
Հայրենեաց բոլորովին կարծանման թերեւս  
պատճառ լինիմք :

## ՎԱՀՐԱՄ

Ինչո՞ւ :

## ԵՄՐԱՆ

Վասնզի Դադիկ ատելի է Յունաց :

## ՎԱՀՐԱՄ

Բայց սիրելի Հայոց :

## ԵՄՐԱՆ

Ինանի՞ր է այդ .քանզի կը տարակուսիմ, թէ  
Հայք կարողանան պաշտպանել զԴադիկ :

## ՎԱՀՐԱՄ

Հայք, կարողեն, լշմրան, պաշտպանելը զ  
Դադիկ .քանի որ կ'եռայ իւրաքանչիւր Հայ եւ  
բակաց մէջ Հայկայ սուրբ արիւնը, կարող  
յաւիտեան :

## ԵՄՐԱՆ

Հաւատոն, Տէ՛ր, սաւեցաւ այդ արիւնը.  
Վհատեցան նոյն խիլ քաջ սրտեր, խոնարհեցան  
ովսարհյունական կայսրութեան :

ՎԱՀՐԱՄ

Թող աշխարհ խոնարհի, թող աշխարհ անիւ  
բաւին վատօրէն երկրպագէ, սակայն Ա ահրամ՝  
երբէք (յորին մասնանիլ) կը տեսնե՞ս դու, Եմ  
բա՛ն, սա թուրը, սա ահեղ թուրը:

ԵՄՐԱՆ

Այս, այդ փոշոտ թուրը

ՎԱՀՐԱՄ

Աը յիշէք, քանիցս դա փայլած է, և քանի՛  
ամբարիշտ գլուխներ յերկիր թաւալած:

ԵՄՐԱՆ

Կնթիւ գլուխներ:

ՎԱՀՐԱՄ

Վ աղիւ, քա՛ջ, դարձեալ դա սլիտի փայլի,  
և ծերունին Ա ահրամ սլիտի վազէ:

ԵՄՐԱՆ

Ուր:

ՎԱՀՐԱՄ

Պատերազմի դաշտը:

ԵՄՐԱՆ

Ինչու:

ՎԱՀՐԱՄ

Կայծակնահար պատժել այն բանակը, որ  
յանիրաւի յանդդնած է պաշարել զնի:

ԵՄՐԱՆ

Իսկ եթէ պատերազմի այդ գաշտի մէջ իս-  
նաս ու փուռւիս, ի՞նչ պիտի ընէ այն ժամանակի  
Հայաստան:

ՎԱՀՐԱՄ

Օափի պիտի զարնէ:

ԵՄՐԱՆ

Իսկ որդիքն հայրենեաց:

ՎԱՀՐԱՄ

Յիս ակնապիշ՝ պաշտպանել զՀայաստան  
պիտի ուսանին:

ԵՄՐԱՆ

Եւ այն ատե՞ն:

ՎԱՀՐԱՄ

Պիտի բարձրանայ Հայաստան:

ԵՄՐԱՆ

Եւ այնուհետե՞ւ:

ՎԱՀՐԱՄ

Օաղկօք պիտի սկսեկն Հայ մատունը շիրա

միս ցուրտ մարմարեայ խազը , և թագաժառ  
ուանդ Գագիկ իշխանիս երախտագէտ բիբըն  
արտասուօք սփիտի թանան միշտ գերեզմանիս  
արիւնլուայ հողը , վասնզի շատ սիրեցի զԳա-  
գիկ , և առաւել շատ զայաստան :

## ԵՄՐԱՆ

Կնողատոնւմ սէր :

## ՎԱՀՐԱՄ

Այս , ով Եմրան , ինչ քարեղէն սիրտ է այն՝  
որ իւր երկրի աւերակները կը դիսէ , և այնոււ-  
հետեւ կենաց արեւուն հայիլ կ'իշխէ . կեակը ,  
զգայունի մի համար դառն է . դառն և անտա-  
նելի արդարեւ իմ համար : Այս , Եմրան , ( թու-  
րը առաջն յորմէն . ) սա թրով , սա թրով վաղիւ  
պատերազմի բաղդը սփիտի վճռեմ :

## ԵՄՐԱՆ

Երկինք :

## ՎԱՀՐԱՄ

Թող աշխարհ զարմանայ , թէ լոկ մի չայ  
իւր ազգային իրաւանց պաշտպանութեան  
համար Անւոյ սլարսպաց տակ փառաւորապէս  
անկաւ :

( Անկու կը Յեայընէ )

ԵՄՐԱՆ ( յեայէն բոնելուն )

Հանդարտէ , Տէր իմ , կ'աղաչեմ , մի վաղ-  
վաղէր այդպէս . . . .

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ, դեռ հանդարտիմ, դեռ ժուժամ, երբ թշնամւոյն անողօրմ գնդերն զայաստան աւելել կը յանդգնին :

ԵՄՐԱՆ

Խոհեմութիւն, Տէր, խոհեմութիւն :

ՎԱՀՐԱՄ

Թաղղ զիս, թող, որ երթամ գոնէ ազդատոհմիս քաջ զաւակները ժողովել, որպէսզի փութամ նոցա հետ ՚ի միասին գնալ ՚ի դաշտ մարտին և անդ . . . :

ԵՄՐԱՆ (ԴԵՐ ՅԵԿԵՐ ԲՈՆԱՃ)

Համբերութիւն, Տէր, կ'աղացնմ, համբերութիւն :

ՎԱՀՐԱՄ

Կը զարմանամ, Եմրան, թէ ոյս պահուն դուք էք, որ զիս կ'արդելուք արիւն թափելէ ՚ի սէր եղբարց, դուք՝ որ քանիցս իմ հետ արիւն հոսած և շատ նահատակութեամբ փայլած էք :

ԵՄՐԱՆ

Վասնզի, Տէր սպարապետ . . . . :

ՎԱՀՐԱՄ

Եմրան, ապուշ է այն մարդ, որ իւր եղ

բարց աղետից վերսայ անտարբեր կը նայի . ան  
զգայ է նա՝ որ կը խնայէ իւր արիւնը . . . :  
Բայց սանաձայն կը լսեմ, Երկինք, Ո. Հայ-  
բապետն է :

ԵՄՐԱՆ (մէկուսի)

Այս, նա ինքն է :

(մէկնի)

---

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՎԱՀՐԱՄ

---

ՊԵՏՐՈՍ

Այսպէս, Տէր սպարապետ, թշնամին մեր  
անմիաբան ընթացքէն ցժ ստանալով, հասաւ  
մինչեւ մայրաքաղաքիս պարսպաց տո չեւ . այ-  
ժըմ, Տէր, ակնապիշկայ ՚ի քեզ Հայաստան  
համօրէն, և ձեր օդնութեան կողկողագին կը  
կտրօտի :

ՎԱՀՐԱՄ

Այս . Տէր հայրապետ, աղետափ է Հայ-  
աստանի վիճակը, և մեծ իւր վիշտը. բայց ի՞նչ  
կարեւոր օդնութիւնն կարող եմք հայրենեաց  
ընել, երբ համօրէն նախարարք մեր և իշխանք  
աղբային այս տխուր աղետից վերսայ խսպառ

անտարբեր և անհոգ կ'ասլրին։ Ոչինչ կտրող  
եմք առնել, չայր, ոչինչ, բայց միայն լոկ ար-  
տասուել և ապա . . . :

### ՊԵՏՐՈՍ

Տէր զօրապետ, Աստուած և Հայաստան մե-  
նէ լոկ հառաջանք չեն խնդրեր, և ոչ մեր հարք  
ու հաւք իրենց արիւնաներկդերեզմաններէն ար-  
տասուք, այլ վրէժ, վրէժ ՚ի թշնամեաց, վրէժ  
այն ամեն յանձանց՝ որք զայն կը տառապեն։

### ՎԱՀՐԱՄ

Կը խոստովանիմ թէ Երկինք զայդ կը պա-  
հանջէ, և հայրենիք ակնդէտ կ'սպասէ մեր  
արդար վրէժինդրութեան աւուր . չայր,  
այն փառաւոր աւուր մեք միշտ սպատրաստ եմք։

### ՊԵՏՐՈՍ

Այն օրը, ձեր անմահութեան օրն է .

### ՎԱՀՐԱՄ

Եցիւ թէ եւ հայրենեաց փրկութեան ու  
անդորրութեան երջանկաբեր օրն լինէր . ուրա-  
ւութեամք սիմակ փակեմ աչկունքո, չայր։

### ՊԵՏՐՈՍ (ՅԻՒՂԵԱԼ)

Պաշտպանեմք զայաստան, Տէր սպարա-  
պետ, սպաշտպանեմք զանտերունի Հայաստան։  
Աստուածոց և մեր խոջմտանաց ձայնն է այս .

ՎԱՀՐԱՄ

Դուք արդէն քաջ գիտէք, Հայր, թէ քանի քանի անդամ պաշտպանեցի զայաստան և արքայանիատ մեր այս պերճ Անի քաղաքը ։ Բայց այսօր, Հայր, ոչնչ կարող եմ առնել, բայց միայն թէ լի արդւնո թափել և իյնալ միայնակ ։ Հայր, այս իմ ուխտ է և նպատակ ։

ՊԵՏՐՈՍ

Ոքանչելի ուխտ ։

ՎԱՀՐԱՄ (ՅԻՒՂԵԿԱԼ)

Կը աեսնէք, Հայր, սա դրօշը, սա դրօշը որ կը ծածանի Կաթուղիկել աշտարակաց վերայ Ճիշդ այդ դրօշը՝ որ քանի քանի անդամ պարզած թռայ ՚ի մարտ, նոյնը կրկին վաղիւ բացած պիտի թռչիմ ։ Հայր, եթէ մեռանիմ, այդ թռղ պատանիքս լինի ։ ։ ։ ։

ՊԵՏՐՈՍ (ՎԵՆ ԷՅԱԼԵԼ)

Արդեանկ, արժանաւոր սրդեակ հայրենեաց, դառչք քեզ պատանի, այլ անմահ անուանդ վառք այս բառերը կրադ նու իրական դրօշը պիտի լինի, ՎԱՀՐԱՄ ՓՐԿԻՉ ՀԱՅՐԵՆԵԱՅ ։ Յի՛, այս մեծ վառքը Հայաստան միայն քեզ պահած էր, ուստի ահա այսօր Հայաստան դքեզ կրկին իւր որդւոց զօրապետ կը կարգէ ։ կ'ընդունիք, այս ծանր բայց մեծ պաշտօնը ։

ՎԱՀՐԱՄ

Խ՞նչ, դեռ կը տարակուսիք անձնանուիրու-  
թեանս վերայ, ոչ թէ զօրապետ, այլ սոսկ զին-  
ւոր ծառայելու պատրաստ եմ։ Այս, Հայր,  
պատրաստ եմ։

ՊԵՏՐՈՍ

Ուրեմն խնդութեամբ ձեզ կ'աւետեմ, Տէր  
սպարապետ, թէ նոխարարք և աղառք միմեանց  
հետ հաշտեցան։

ՎԱՀՐԱՄ

Երկինք, ի՞նչպէս։

ՊԵՏՐՈՍ

Քանիզ սրբա լու խմանալով՝ թէ անմիտւ-  
թիւնն է ազգին թշուառութեան բուն սպատ-  
ճառը, միաբանութեամբ այսօր ձեր հրամա-  
նաց դոնի մի ակնարկին կըսպասեն արծուօքին  
թուանիլ՝ ի դաշտ մարախն, և անդ աներկիւղ  
ճակատիլ թշնամի բանակաց դէմ։ Այսա հա-  
մար է որ զիս, Տէր, զիս՝ պաշտօնեայս խաղա-  
ղութեան և սիրոյ Աստուծոցի՝ առ ձեզ պատ-  
դամաւոր առաքել փութացին։

ՎԱՀՐԱՄ

Կը խոսանամն արդարեւ, Հայր, Համա-  
հաճ հաւանաւթեամբ պաշտպանել զինի եւ  
զայտասահն։

## ՊԵՏՐՈՍ

Այս, Տէր սպարապետ, և կ'երդնուն աւ  
մենային յօժարութեամբ :

## ՎԱՀՐԱՄ

Այսպէս, հայրենեացո քաջակորով որդւոց  
հեա միասին ես պիտի արժանանամ ուրեմն սը-  
րանալ՚ի գաշտն Ծիրակայ, ուր թշնամին բանա-  
կած հայհոյել կը համարձակի Հայ աղդայնու-  
թեան առաքինի անունը : Ով ցնծութեանս,  
այս, հոն պիտի վազեմ, ուր պիտի փայլի այս  
իմ հատութուր՝ որ երկար ատենէ ՚ի վեր վո-  
շտած ՚ի կախ կը մնայր որմոց վերայ, և թշնա-  
մին սարսափմամբ հոն պիտի լե՛ Ա ահրամայ  
այս որտապին գոռումը . “Ի՞նչ յանդունդս,  
հրէշք մարդկային” :

## ՊԵՏՐՈՍ

Իսկ Հայաստան այնուհետեւ յաղթական  
օրհներգութեամբ զձեղ, Տէր սպարապետ,  
միշտ պիտի փառաւորէ : Կաց առ այժմ, քիչ  
մը պահէն վստահացիր, որ նախարարք և ա-  
զատք խմբովին աստ գումարելով՝ պիտի երդ-  
նուն հաւատարմաբար ծառայել Աստուծոց և  
աղդին :

( Խէնի )

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

Ողջն ձեզ, ո հայրենի դաշտք և բլուրք.  
 ողջն և ձեզ, գերեզմանք քաջաց, ողջն ձեզ  
 Վաղիւ գեռ արեւուն լցոսք ձեր վրայ չը սփռը  
 ւած՝ աշխոյժ ձիուս ոտից դոփիւնը պիտի լը  
 մէք, և հրաժեշտի այս վերջին աղաղակս պիտի  
 թնդացունէ զձեզ, “Կաց բարեաւ, ով Հայ  
 աստան, երկիր փառաց”։ Դուք պիտի հի  
 անայք և զարմանայք, երբ զիս, ծերունիս Վահա  
 բամ, կայծակի նման փայլատակեալ տեսնէք  
 թշնամի անթիւ գնդաց մէջ. և “Հայաստան,  
 Հայաստան, գոռարով, տեսնէք քաջութեամբ  
 պաշտամանելք զհայրենիս։ Իսկ եթէ հոն ինձ  
 իյնալ պէտք ըլլայ, գերեզմանք քաջաց, հոն  
 ուր հազարաւոր տարիներէ ՚ի վեր քանի քանի  
 դիւցազունք արիւնլուայ փոռւած մեռան,  
 սրտագինս կը ինդրեմ, որ ցուրտ աճիւնս ձեր  
 սուրբ ծոցոյն մէջ ամիսիկէք, որպէս զի երբ այն  
 հրաշալի օրն՝ յոր աղատութեան շեփորն պիտի  
 հնչէ, և հայկական յետագայ սերնդեան որ-  
 դիքն իրենց նախահարց շրբմները կոխմբաւով,  
 աղատաբար պիտի որոտան, “Օ արթիք, հարք  
 մեր և հաւք, զարթիք, քաջիք Վասեաց”։ Եւ  
 ’ի դարուց անտի ննջող դիւցազուն կամախք»

ներն զարթելով՝ ձայնեն առ որդիս իւրեանց,  
“Յառաջ, որդեակիք, յառաջ, աստ եմք մեքոն  
Աղաղակ մի եւս այն պահուն ձեր ծոցէն թող  
բարձրանայ. “Եցտ է Ա ահրամ, աստ, որդեք  
քաջաց, յառաջ”։ Եւ թող խրախուսութիւնու  
քա այն ժամուն, և յօժարութեամբ ոյն մա-  
հուամբ մեռանել թողը լուսան, որով մեռան իւ-  
րեանց հարքն ու հաւք։

### ՏԵՍԱՐԱԿ Ե.

ՎԱՀՐԱՄ, ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ

### ՍԱՐԳԻՍ

Այս, Տէր սպարապետ, կը խոռագովանիմթէ  
մեծ է մարդ, երբ ’ի սէր իւր ազգային իրաւանց  
կը գործէ և կը մեռանի. սակայն, Տէր, ձեղիսկ  
նաեւ յայտ է, թէ առաւել մեծ է մարդ, երբ  
առանց կաթիլ մի արիւն հեղլոց կը ջանայ իւր  
հայրենեաց բարօրութեան հնար գանել։

ՎԱՀՐԱՄ

Ճշմարտութիւն մի է այդ. սակայն, իշ-  
խան, ասա, միթէ առանց արեան ու մահուան  
իսրող եմք ղհայրենիս բարօրել։

ՍԱՐԳԻՍ

Այս :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչպէս :

ՍԱՐԳԻՍ

Խորհիլ և խոհեմաքար գործել :

ՎԱՀՐԱՄ

Դեռ խորհիլ, երբ թշնամին մայրաքաղաքիս  
առջեւ բանակած կը յանդգնի սպառնալ . . . :

ՍԱՐԳԻՍ

Հաւատա՛, Տէր, խոհեմութեամբ աւելի  
դեռ կարող եմք զայաստան փրկել, քանթէ  
պատերազմական յանդուգն դիմադրութեամբ :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչպէս :

ՍԱՐԳԻՍ

Բանալ Անցյ դուները օրինաւոր դաշամբ :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ դաշամբ :

ՍԱՐԳԻՍ

Կայսրը թողընտրէ թագաւորը :

ՎԱՀՐԱՄ

Յածանամիք այդչափ :

ՍԱՐԳԻՍ

Յածութիւն չէ այս, այլ հայրենեաց օդոի  
համար փաքք զիջումմի :

ՎԱՀՐԱՄ

Յածութիւն չէ, երբ մարդ իւր աղքային մի խաւունքը փախանակ պաշտպանելու՝ վատաբար կը խոնարհի :

ՍԱՐԳԻՍ

Արդիկ պարտին երբեմն դիսպաց համեմատ գործել :

ՎԱՀՐԱՄ

Երբէք . որ և իցէ դիսպաց մէջ պարտաւոր են մարդիկ արդարութեան համեմատ անխուսվ գործել :

ՍԱՐԳԻՍ

Տէր սպարապետ, երբ դէպքն անցարմաք է, խոհեմութիւնը կը պահանջէ, որ մարդիկ դիսպաց համաձայն շարժին :

ՎԱՀՐԱՄ

Իշխան Ախունեաց, մարդկութեան հարազատ զաւակի մի վայելչէ բնաւ դիսպաց նայել և լսայնմ խարդախ ընթացք ունենալ :

ՍԱՐԳԻՍ

Տէր սպարապետ, հաւասար, երբ կը յիշեմ Յունաստանի ահաւոր զօրութիւնը, կը դ գտմ, որ դէպք ու միջոցք մէր համար ձախող են, ուստի . . . :

ՎԱՀՐԱՄ

Յունաստանի զօրութիւնը յիշելով՝ ամօնք

Հայոց , Երբ գործելէ դադարիմք : Իշխան ,  
քանի որ արդարութիւնը մեր կողմն է , քանի  
որ Աստուած մեղ հետ հաշտ է , մեղ կը մնայ  
միայն գործել , գործել և մեռանիլ :

## ՍԱՐԳԻՍ

Բայց , Տէր . . . :

## ՎԱՀՐԱՄ

Տէր Աիւնեաց , ծաղկելի ապուչներ պիտի  
լինիմք , եթէ յիմար անմոռութեամք մեր այս  
հայրենի դարաւոր իրաւունքը դիպաց կամբազ  
դին զոհեմք :

## ՍԱՐԳԻՍ

Տէր , առ այժմ զիջանիմք , վասնզի . . . :

## ՎԱՀՐԱՄ

Իշխան , կը զարմանամ՝ թէ ինչո՞ւ սյդքան  
զիջումընել կը փափագիք :

## ՍԱՐԳԻՍ

Հաւատա՛ , Տէր , վասնզի հայրենեաց՝ շա-  
հըն ու օդուար զայս կը պահանջէ :

## ՎԱՀՐԱՄ

Ի՞՞նչ :

## ՍԱՐԳԻՍ

Յարգել խաղաղութիւնը :

## ՎԱՀՐԱՄ

Բայց թշնամին ահա կը մերժէ :

## ՍԱՐԳԻՑ

Վ ասն զի չեմք ընդունիր թշնամւոյն խաղաղատիրական պայմանը, այլ կը սկսեմք :

## ՎԱՀՐԱՄ

Օանիր են :

## ՍԱՐԳԻՑ

Ոչ ոյինչափ :

## ՎԱՀՐԱՄ

Ի նդդեմ արդարութեան են :

## ՍԱՐԳԻՑ

Ոչ :

## ՎԱՀՐԱՄ

Արդարութեան դէմ չէ, երբ ազգին իրառունքը կը բռնաբարուի :

## ՍԱՐԳԻՑ

Ի՞նչ իրաւունք է այդ :

## ՎԱՀՐԱՄ

Եզր դՊագիկ արքայ կ'ուղէ, կայսեր ինչ :

## ՍԱՐԳԻՑ

Վ ասնզի անխորձ պատանի է, սորա համար է, որ կայսրը չը կամիր :

## ՎԱՀՐԱՄ

Կայսեր ինչ. ազգին վասիագն է Գագկայ թագաւորութիւնը :

## ՍԱՐԳԻՍ

Սակայն, Տեր սպարապետ, Եթէ մերժեմքը  
կայսեր ձայնը, յիշե՛ միանդամ, թէ ի՞նչ պիտի  
դառնայ Հայաստան :

## ՎԱՀՐԱՄ

Ի՞՞նչ :

## ՍԱՐԳԻՍ

Երեան ծով մի :

## ՎԱՀՐԱՄ

Կմենեւին :

## ՍԱՐԳԻՍ

Կմենեւին . չը գիտէ՞ք միթէ, որ Յունաստան  
այնուհետեւ մեղ խեթիւ պիտի նայի, և  
պիտի սպառնայ . . . :

## ՎԱՀՐԱՄ

Մի յուսուր :

## ՍԱՐԳԻՍ

Ի՞նչու :

## ՎԱՀՐԱՄ

Վասնդի Յունաստան պիտի սարսափի մեր  
զօրութենէն :

## ՍԱՐԳԻՍ

Բայց Եթէ Յունաստան անսարսափ վագէ  
ի Հայս, ասա՞ , ի՞նչ պիտի ընէ մեր վեշտասա-  
նամեայ թաղաւորը :

ՎԱՀՐԱՄ

**Ճակատաբաց պիտի սրանայ ՚ի մարտ :**

ՍԱՐԳԻՍ

**Տղոյէ մի այդպիսի քաջութիւն կը յուստահա :**

ՎԱՀՐԱՄ

**Այն, վասնզի Գագիս քաջասրառութիւնը  
արդէն թէ ինձ և թէ ազգին ծանօթ է :**

ՍԱՐԳԻՍ

**Բայց կը յիշե՞ս, որ Յունաստան հզօր է, իսկ  
Հայն տկար և անզօր :**

ՎԱՀՐԱՄ

**Հայք երբէք տկար չեն. Երբ Յունաստան  
գոռայ մեր վլայ, ամբողջ Հայաստան սուր պի-  
տի առնու, և . . . :**

ՍԱՐԳԻՍ

**Ո՞ի կարծեր այդպէս. Հաւատա՛, Տէ՛ր,  
հզօր է Յունաստան, և Հայաստան մեր ան-  
խոհեմութեան սլառուղը պիտի քաղէ, եթէ մի-  
անգամ երեւինք պատերազմի դաշտի մէջ :**

ՎԱՀՐԱՄ

**Կ'ափշմ, իշխան, կ'ափշմ ձեր երկշուա սրա-  
սի վերայ, երբ ձեր այդ վհատանաց խօսքերն  
չը լսեմ :**

ՍԱՐԳԻՍ

**Ե՞ս երկշուա :**

ՎԱՀՐԱՄ

Եանք քս վկայեն , եթէ . . . .

ՍԱՐԳԻՍ

Տէր սպարապետ , սիրո մի ունիմ , սիրո ,  
որ միշտ պատրաստ է արիւն թափելու ՚ի սէր  
եղբարց . սակայն կը կամիմ և շատ կ'ըղձամ , որ  
մահս հայրենեացո օդտառէտ լինի և ոչ անօ-  
գուտ :

ՎԱՀՐԱՄ

Եթէ քո սիրո կը թրթռոյ այդպիսի վաեժ՝  
զգացմամբ , գիտցիր , իշխան , որ այդպիսի սրբ-  
ուել հազարաւոր ու բիւրաւոր կան , որք ՚ի պա-  
հանջել հարկին աներկիւղպիտի սրանան ՚ի Ըե-  
րակ , և ՚ի սուր պիտի սպառեն այն բանակը ,  
որ պաշտրած է ղենի :

ՍԱՐԳԻՍ

Ո՞հ , զիւրին միթէ կը կարծես յունական  
այն սոսուար բանակի յաղթելը :

ՎԱՀՐԱՄ

Ես յու :

ՍԱՐԳԻՍ |

Տէր սպարապետ , յիշէ՛ միանդամ մեր հայ-  
րենեաց վիճակը , ազդային այս տիսուր վիճակը :

ՎԱՀՐԱՄ

Ե՞նչ տիսուր վիճակ է այդ :

## ՍԱՐԳԻՍ

Ենմիութիւն, սորա համարէ, որ միշտ կ'առ  
սեմ, թէ դէպքն առայժմ մեզ ձախողեն, ուս-  
տի խաղաղութիւնն յարգելը, ազգին շահա-  
ւէտէ :

## ՎԱՀՐԱՄ

Ոչ, չայք անմիաբան չեն, չայք սիրով մի-  
ացած են. նախարարը և իշխանը միմեանց հետ  
այսօր հաշտուած են :

## ՍԱՐԳԻՍ ( այլայլած )

Երկինք, ի՞նչ կը լսեմ. Տէ՛ր սպարապետ, ի-  
րան, ճշմարիտ էք :

## ՎԱՀՐԱՄ

Եյո՛ միացան նոքա . և վազիւ պատերազմա-  
կան փողք պիտի հնչեն 'ի Ծիրակ, և հայկա-  
կան շեփորն անշուշտ յաղթութիւն պիտի ա-  
ւետէ չայոց :

## ՍԱՐԳԻՍ

Վլավիշութեանս. (Բարձր) Տէ՛ր սպարապետ,  
ով այդ մեծ գործն այդպէս շուտ ՚ի գլուխ  
հանեց :

## ՎԱՀՐԱՄ

Չայրապետը :

## ՍԱՐԳԻՍ ( կեղծ անունով բար )

Վլանձութեանս, երթամուրեմն թուր առ-

նուլ, սաղաւարտ դնել, զբահ զգենուլ, անվեհեր վազել՝ ի Երակ, և անդ մեռանիլ . . . :

ՎԱՀՐԱՄ (ՅԵՒԶԸ ԲԱՆԵԼՈՒ)

Կաց առայժմ, վասնզի այժմն պիտի լսես  
նախարարաց ու իշխանաց ուխտն ու երդումք

ՍԱՐԳԻՍ

Երան :

ՎԱՀՐԱՄ

Այս. նոքա աստ' իներկայութեան Հայրա-  
պետին պիտի երդնուն : Բայց ով Աստուած,  
ահա գան նոքա, տես, իշխան, որպիսի ուրախ  
ու զուարթ դիմօք. տես Հայրապետը . . . :

ՍԱՐԳԻՍ (ԽԵՂԱԿԻ)

Եղուկ, չար ծեր :

## ՏԵՍԱՐԱՆ 2.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՎԱՀՐԱՄ, ՍԱՐԳԻՍ,  
ԱՊԻՐԱՏ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ:

ՊԵՏՐՈՍ

Ահաւասիկ, Տէ՛ր սպարապետ, նախարարք,  
իշխանք և ազատք Հայոց առ ձեզ գալ վու-  
թացին, որպէսզի հրաւեր կարդան ձեզ՝ իւ-  
րեանց հետ ՚ի մի սպաշտապանել զայն և զայ-  
աստան :

### ՎԱՀՐԱՄ

Հայր Հայաստանեաց, մեծ է ուրախութիւնս, և անպատճեմ դնծութիւնս, երբ հայրենեացս քաջազն աղատք սցգապէս մի սրտիւ. և մի ոգւով միացած հրաւեր կը կարդան ինձ թըռչվէլ՝ ի մարտ : Քանզը, պատրաստ էք ինձ հետ յօժարութեամբ. ՚ի մեռանել :

### ԱՊԻՐԱՏ

Այս, Տէր սպարապետ . քանզի անտանելի է մեզ այսուհետեւ կենաց սիւք ծծել, և մեր եղբարցն ուրքեց հառաչանքներն լսել : Այս, Տէր զօրապետ, ձեր հրամանին միայն կ'սպասեմք հայութեան աղստ դրօշն պարզած թռչել՝ ի մարտ, և կ'ուխտեմք կամ զհայրենիս աղատել և կամ մեռանել քաջութեամբ :

### ՎԱՀՐԱՄ

Այդ և իմ է ուխտ, քանզը, բայց մինչեւ ցարդ կարծեաց անհամաձայնութիւնը կաշկանդած էր զիս գործելէ . միթէ նախատինք չէ մեզ Հայոցս թշնամւոյն մինչեւ Անւոյ պարսպաց առջեւ հանիլլ :

### ԿԱԽԱՐԱՔ

Այս, նախատինք յաւխունական :

### ՎԱՀՐԱՄ

Բայց այսօր նախառանաց այս բիծը որբելու համար, գիտեք, քանզը, ի՞նչ ընելու է . միու

թեամբ վազել, յօժարութեամբ սրանալ թշնաւ-  
մեաց վերայ, և անխնայ կոտորել Յունաց այն  
զօրաբանակը, որ իշխեց մեր հարց երկիրը մո-  
լեգին յարձակմամբ կոխել:

### ՆԱԽԱԲԱՐՔ

**ՏԵՐ**, կ'երդնումք ամենայն սոռքը սրտիւ,  
մեռանիլ՚ի սէր ազատութեան հայրենեաց :

### ՍԱՐԳԻՍ

Եւ ես իմ եղաց հետ, **ՏԵՐ** սպարապետ:

### ՎԱՀՐԱՄ

Ուրեմն և ես կ'երդնում արեանս մինչեւ  
վերջին կաթիլլ ձեղ հետ պաշտպանել զ՞այ-  
աստան :

### ՊԵՏՐՈՍ

**ՎԿ** քաջք, ձեր այս միութեամբ, գիտցիք,  
որ դարձեալ զայաստան պիտի բարձրանայ, և  
Երկինք զձեղ պիտի օրհնէ և պսակէ : Իսկ ես՝  
Վանահին փառաց խոնարհ պաշտօնեայս՝ այժ-  
մէն խակ աւանիկ աստուածային օրհնութիւնս  
կ'ընձեռեմ ձեղ : (Օ՞ն, որդեակը իմ, ծունք  
դրէք . (կը ծնրէն) : “**Օ** օրացն զբազուկս սոցա,  
Կստուած բարերար, և տուր սոցա կարողու-  
թիւն կործանել զբանակս թշնամեաց և պաշտ-  
պանել զիրաւունս ազատութեան մերս հայրե-  
նեաց : Եւ ՚ի բարձրութենէ ախոռոյ քոյ, **ՏԵՐ**,  
տարածեալ ՚ի վերայ սոցա ամենազօր աջ քո, պա-

Հեաւ զսոսա անփորձ ՚ի վտանգաց , և բարձրա-  
ցն զսոսա ՚ի վտառս Աստուածութեանդ և ՚ի  
պատիւ Տանս հայկազնեան :

( յոդն կ'Ելնեն )

### ՎԱՀՐԱՄ

Արդ , աղնիւ եղբարք , սրատրասա կացէք ,  
այս երեկոյ գեռ արեւն իւր մարք չը մտած  
Շաղկոցի դրանեն անցանելով , կուռ զինուք  
գումարեցէք Ծիրակայ գաշտի մէջ : Եւ վազիւ  
գեռ արեւուն ճառագայթները Անւոյ աշատ-  
րակաց վերայ չը փայլած՝ միահաղոյն յարձակ  
մամբ պատերազմին բաղդը բաջութեամբ վրձ-  
ռենք :

### ՆԱԽԱԲԱՐՔ

Ամենայն հաճութեամբ :

( կը մէնին )

### ՏԵՍԱՐԱՆ Է .

### ՎԱՀՐԱՄ


### ՎԱՀՐԱՄ

Ահա ուրախ ու զուարժէ կը ցնծամ , կը ցըն-  
ծամ գովելի գեացմամբք . կը ցնծամ , վասնզի այս  
իմ ծերութեան աւուրց մէջ ալ կ'արժանանամ  
հայրենեացո մի ծառայութիւն մասսւցանել :

ՎՎ Երկնք, այս երջանիկ աւուր համար էր, որ  
 զիս մինչև ցայսօր կենդանի պահեցիր Ա ահուան  
 կը փափագէի երբեմն, կը տրտնջայի կենացս  
 համար, երկար բայց դառն կենացս համար,  
 վասնզի եղբարբս 'ի ցաւս կը հեծէին, վասնի  
 անկարեկիր աչօք չէի կարող գիտել նոցա ար-  
 տասութը: Իսպ այսօր կ'զգամ; կ'զգամ; որ ան-  
 թողի մեղք մի է Եղեր տրտունջս, վասնզի եր-  
 կնից նախախնամական: Ա ջը զիս այս աւուր  
 պահել տնօրինած կը տեսնեմ, այս աւուր՝ որ  
 պէսզի իմ հինաւուրց երակացս մէջ նոր խանդ-  
 բորբոքելով, մղէ զիս 'ի դաշտ մարաին. ուր  
 թշնամին 'ի սուր սպառելով՝ յայտնեմ, քարո-  
 զեմ աշխարհի, թէ երկնից գլժութեան ամե-  
 նազօր Ա ջն գեռ հովանի է Հայաստանեացց  
 վերայ, հովանի յաւիտեան: Ա ահկանացնեք,  
 մարդկութեան դուք թշուառ զաւակներ, մի  
 յուսահատիք, մի տրտնջայք բնաւ, երբ ա-  
 նողորմին լուծը զձեղ կը ճնշէ. դէպ 'ի երկնք  
 նայեցէք, նայեցէք, Հաւիտենականին բարբառն  
 անտի ձեղինչ կ'որտայ. «Որդեակք, հաւա-  
 տաւոր որդեակք, ես Աստուած ձեր եմ, Աս-  
 տուած հզօր, Աստուած գլժած»: Այս, Եա  
 հզօր է, կարող սէդ գլուխներ ջաղխելու: Եա  
 գլժած է, գլժած և միսիթարիչ վշտալից սրտե-  
 րու: Աւրեմն բացէք ձեր սրտերը, բացէք, և  
 ձեր օրհնութեան աղօթից անոյշ խունլը դէպ  
 'ի յերկին ծխեցէք. և գիտցիք, որ անդէն ձեր  
 փրկութեան օրն արագապէս ովտափ հանի: Իսպ

ահա ի՞նչ կը տեսնեմ; ( Դեպ ՚ի պատուհանը գնալով )  
ով խնդութեանս , զինուորք կը գումարին .  
Օսողկոցի դրան առջեւ դրօշեր են , որ կը ծաւ  
ծանին . օրհնեալ լինիք դուք , Հայաստանցի զաւ  
ակներ , օրհնեալ յաւիտեան : Բայց այդ ովէ  
է , որ ծառուղւոյն մէջ խռավոյոց դիմօք կը<sup>քայլէ</sup> . կնճիռ կը նշմարեմ դօրա Ճակտի վերայ.  
ափան , նա ինքն է , նա ինքն իշխանն Արևետց  
Վեստ Ապրգիս : Տէր Կստուած , կը խօսի ,  
բայց ի՞նչ արդեօք . . . ստկայն ժամանակին իմ  
համար սուզէ , երթամ՝ իսենեակն զրահուց , և  
զրահավառ պատրաստ կենամ՝ դնալ ՚ի մարտ :

( կը մէկնի )



## ՏԵՍԱՐԱԿ Հ.

Ա ԵՍՏ—ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ ( Ճառապաղոյն մէջ )

Ահա կը գումարին , աւազ , ով կը յուսար  
թէ ծեր մի , չար ծերուկ մի նախարարաց մէջ  
կարող պիտի լինի միութիւն հաստատել : Ա-  
ւազ , երբ միանգամ սա բանակի վերայ ակնարկ  
մի կը ձգեմ , երբ կը յիշեմ , թէ սոքա այսօր  
միայն Վահրամայ մի ակնարկաւն պատրաստ  
են ամեն զսհողութիւն յանձն առնուլ , կը յու-  
սահատիմ : Հզուկ , կ'զդամ , կ'զդամ ահա , թէ ՚ի  
զնւր տածեցի այս սրտիս մէջ այն իղձը . — Թա-

գաւորել, այն թագ կտակել չայսց վերայ։ Ե՛  
 նիծեալ օրեր, օրե՛ր, յորա Վնւոց արքունեաց  
 մէջ իբր արքայ գուռողաբար սիրալով՝ կը յու-  
 սայի, թէ օր մի նախարարաց անմիութեան  
 շնորհիւ կարող պիտի լինիմ չայ արքունական  
 գահուն վերաց շքեզօրին բազմիլ։ Աակայն այ-  
 սօր ոչնչացան ամեն ինչ, յօդս ցնդեցան ակըն-  
 կալած փառացս գեղեցիկ յոյաերն։ վասնզի նա-  
 խարաբը և ազատք միացան, միացան չայք ա-  
 մեն, և սպարապետութեան պաշաօնն ահա  
 բացարձակ կը վարէ իմ ամեն ջանից հակառակ  
 ախոյեան այն ծերը, որոյ Վահրամ անունը  
 արդարեւ սրտիս սարսափի միշտ կ'ազդէ։ Վկ  
 թշուառութեանս, ո՞վ կը յուսար, թէ դէպք  
 այսպէս յանկարծ կը փոփոխին։ ո՞վ կը յուսար,  
 թէ Օազիոցի դրան առջեւ հայկական ահեղբա-  
 նակ մի յանկարծ պիտի դումարի։ Վհ, կը յու-  
 սահատիմ, երբ կը խորհիմ, թէ այսուհետեւ  
 գործելէ պիտի դադարիմ։ այն, կարող պիտի  
 չը լինիմ գործել ՚ի փառս Վիւնեաց տան։ Վհ,  
 եթէ գէթ մի յցս ունենայի, յցս ունենայի՝ թէ  
 վաղիւ եթէ չայք իսկ յազմեն, այն յազմութիւ  
 ապագային մէջ ինձ օդտաւէտ պիտի լինի, սիրով  
 պիտի յօժարէի սրանալ պատերազմի դաշտը, սա-  
 կայն գէթ այդ յցն ալ չ'ունիմ, վասնզի այսուհե-  
 տեւ հակառակորդքս պիտի բարձրանան, պիտի  
 յաջողին զիս իսպառ կործանել վասնզի այդ յազ-  
 թութեամբ աշխարհ պիտի սիրէ զնոսու, պի-  
 տի գրիէ զնոսու։ Վկ բազդ, անիծեալ բազդ

• . . բայց ով զարմացմանս , ահա նախտրաք  
և տեարք աղատք , որք խմբովին կը գան . գը-  
նամ ուրեմն սոցա հետ միտնալ և երթալ ՚ի  
մարտ , որպէս զի կասկած չը տամ նոցա , թէ  
Ապրդիս թշնամի է հայրենեայ , կամ փառասէք  
միտումներ ունի , որոց յաջողիլը Յունաց ձեւ  
ռամք կը յուսսայ . Բայց ով Յըկինք , ահա և  
Վահրամ , որ ներքին Ամրոյն որահին մէջ իւր  
վահանը կը զննէ :

( կը մէկնէ )

## ՏԵՍԱՐԱՆ թ .

### ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ ( լըտեավառ )

Եյն , այս այն վահաննէ , ( վահանը զննէլով )  
որ քանի քանի պատերազմաց մէջ զիս անվկանդ  
պահեց . այս այն վահաննէ , որ հայրս ինձ  
պարզեւեց , երբ ճակատաբաց կը գուտայի Ուա-  
սիսի բլոց դադաթանց վերայ . այս այն վահանն  
է , որ ահա վազիւ դարձեալ կուրծքիս ապա-  
ւէն և որտիս պահապան արժանացած Շիրա-  
կայ մէջ պիտի փայլի : Վիլ Աստուած , կրկին կը  
նորագեմ ոյն իմ ուխտը , ուխտ զօր ՚ի մանկու-  
թեան ուխտեցի . այս վահանը գրկած պիտի մե-  
ռանկիմ , այս արիւնկուայ վահանը յետագայ զա-  
ւակաց թող միշտ յիշեցունէ , թէ Վահրամ այս  
վահանը գրկած մեռաւ . . . բայց ահա Ամրան

ՏԵՍԱՐԱՆ Ժ.  
ՎԱՀՐԱՄ, ԵՄՐԱՆ

## ԵՄՐԱՆ

Տէր սպարատես, գնդերն պատրաստ են,  
և ձեր գալստեան միայն կըսպասեն :

## ՎԱՀՐԱՄ

Եւ ես պատրաստ եմ քաջ . . . ( Գողոց յայներ  
կը լսուին ) բայց այդ ի՞նչէ, վողոց ձայներ կը լս-  
ուին :

ԵՄՐԱՆ ( պապուհանեն նայելով )

Եզդային տոհմային գնդերն են . Տէր, ա-  
հա նախարարք և ազատք Օռազկոցի դրան առ-  
ջեւ կը գումարին . տե՛ս, ահա Ա . Հայրապե-  
տը խաչ՝ ի ձեռին որպիսի հաստատ քայլիւք  
նոցտ կ'առաջնորդէ :

## ՎԱՀՐԱՄ

Աստուած պսակէ զձեզ, ով հայութեան  
ընտրեալ զաւակներ . Յաւիտենականին խորանը  
ձեր ազատավայրը սլիտի լինի : ( կը լսունակուին  
Գողոց յայներ . ) Քաջդ Եմրան, ահա գոռան  
փողք, հնչեն շեփորք, ծածանին դրօշք . Եր-  
թանիք մահուան այն հովիտը, անմահութեան  
այն ուղին, երթանիք, հոնէ մեր պսակը :

## ԵՄՐԱՆ

Երթանիք, Տէր, երթանիք՝ ի վեժ արեան  
հարց մեր և եղարց . . . :

## ՎԱՀՐԱՄ

Երթանք աներկիւղ, զի Երկինք է մեղ հրա-  
կող, հայրենիք օրհնող, իսկ Հայք համայն մեր  
համար աղօժող, երթանք : ( իւ ստարիանան փողը-  
բու Յայելը . ) Գոռացէք դուք, ով ազատութեան  
փողեր, գոռացէք, քանզի ձեր գոռումը քաղ-  
ցը է միշտ հայրենասէր լսելեաց : Եւ դուք  
բացուեցէք, ով հայութեան փառք դրօշներ,  
վասնզի հայ աչկունիք 'ի ձեզ պիշ, անխոռով մե-  
ռանիլ պիտի փափադին 'ի սէր մեր Հայաստան  
հայրենեաց :

( իւ Թինին )

## ԱՐՍՐՈՒՄԾ Բ.

Ի գաշտն Շիրակայ, ուր բլրակ մի: Ստորեւ բլրոյն Վահ-  
րամաց, Սարդսի և Հայ նախարարաց վրաններ կան Յան-  
դիման Հայոց բանակին Յունաց բանակատեղին է: Խորին  
լուս թիւն:

— առաջնաւոր —

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՊԵՏՐՈՍ (՚ի ծունը ՚ի վերայ բլրոյն)

Աստօնած բարերար, դու, որ հարիւ-  
րաւոր տարիններէ ՚ի վեր աշխարհատած նա-  
խախմամական աջդ ընդհանուր Հայոց վերայ  
տարածած՝ բարձրացուցեր զայտաստան ոքան-  
չելի փառօք: Դու, որ Հայկայ, Վարդանայ,  
Վահանայ և այլ շատ հայկական քաջընտիր նա-  
հատակաց եւանդուն սրտերն աստուածայինն  
սիրաբորբ հրով վառելով, ետուր նոցա կար և  
ոյժ պահել ու սրաշտպաննել խաչիդ երկրպագու-  
այս աստուածասէր ժողովուրդը: Դու, որ ՚ի  
սկզբանէ անտի անքուն աչօք դիտելով այն սրբ-  
տի խորերը, որք լրիկ մնջիկ Աստուածութեանդ  
ձօնելով աղօթից մրմունջներ, արիւնաներկ սե-  
ղանոց վերայ փռուած Աստուած, վասն քո  
մեռանիմք, այս աղաղակը դէպ յերկինս ար-  
ձակելով գլութիւն կը հայցէին, գթութիւն

այս խղճալի ժողովրդեան համար : Դուք , որ ՚ի  
սէր այս նահատակաց քանիցս ողորմեցար Հա-  
յաստանեաց , մոռացար միթէ այս քո քանա-  
ւոր քրիստոնեան հօտը , մոռացար այս քո ըն-  
տրեալ ժողովուրդը : Տէր , ահա այս ժողովրդեա-  
նըդ աստուածավիառ ասձարներն են , որ այսօր  
կը կործանին , Անմահիդ ձօնեալ խորաններն են ,  
որ կը քանիդին . ՚ի հուր կը մատնին քաղաքներ  
ու տւանեներ , ՚ի սուր կը մաշն աստուածանը-  
ւէր սրտեր , և ամեն ուստեք գթութիւն , այս  
լաբահառաջ հծծիւնը խոռն ընդ ողքս միշտ  
կ'արձակեն Անմահիդ Աթուր : Եւ արդ՝ ով  
Տէր , Տէր գթած , յայց ել մեղ , յայց . և հաշտ  
ակամք հայեաց այն քանուկի վերայ՝ որ վատահ  
յանունդ գումարեալ կայ . ՚ի գաշտավայրիս Շի-  
րակայ : Եւ գթալիր մի ակնարկաւդ , Տէր ,  
քարձրացն զայտստան ՚ի փառս իւր նախնի ,  
և զմեղ Հայաստանեայքս պահպանեա ՚ի խը-  
նամն Աստուածութեանդ այժմ և միշտ և յա-  
ւիտեանս յաւխտենից :

## ՏԵՍԱՐԱՆ Բ .

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՆԻԿԱՆ , ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ

### ՊԵՏՐՈՍ

Պահպան Տէր , գուր արդէն գիտեք , թէ  
Անւոյ կաթողիկէի մէջ մանուկ մի կ'ասպի , թա-  
գաժառանդ մի մանուկ :

ԳՐԻԳՈՐ

Այս, քաջին Աշոտաց որդին իշխանն Դագիկ:

ՊԵՏՐՈՍ

Դիտէք, որ հայութեան միակ յօյան այսօր  
նա է, նա մնաց մէջ աբքայական տան վերջին  
շառաւիղ. Եթէ նորս կեանքը, բայց քա՛ւ լի-  
ցի, վտանգի, ի՞նչ տիտի լինի Հայաստանի  
պիճակը:

ԳՐԻԳՈՐ

Խեղձութիւն սոսկալի:

ՊԵՏՐՈՍ

Ահա այդ է միայն, որ զիս կըսախալէ, Խչ-  
խան, առաջարկել ձեզ խնդիր մի:

ԳՐԻԳՈՐ

Խ՞նդ:

ՊԵՏՐՈՍ

Ազգին ապագային օգտաւէտ խնդիր մի:

ԳՐԻԳՈՐ

Պատրաստ եմ, Հայր:

ՊԵՏՐՈՍ

Այժմ այս պահուն ՚ի կաթողիկէն գնալ,  
և անտի առնլով զԴագիկ՝ վութալ ՚ի հջնի:

ԳՐԻԳՈՐ

Դժուարին է խնդիրդ, Հայր, արդարեւ-  
ծանը, ո՞հ . . . :

## ՊԵՏՐՈՍ

**Ա**լլ զարմանամ:

## ԳՐԻԳՈՐ

Հայր, արդարեւ դժուարին . քանզի անտառ  
նելի է ինձ գնալ ՚ի Ռջնի, և անդ հանդստուր  
թեան մէջ կալ, երբ եղեարքս աստ արիւն կը  
թափեն, կուրծք կը տան վտանգաց, և հուսկ  
կը մեռանին: Հայր, մի թախանձէք զիս ընդուռ  
նել այդ ծանր ծառայութիւնը, կը խնդրեմ:

## ՊԵՏՐՈՍ

Հայր հայրենեաց օգուար զայս կը պահան-  
ջէ . զայս կը պահանջէ և Գագկոյն:

## ԳՐԻԳՈՐ

Հայր, սիրու մի ունիմ, սիրու, որ միշտ զայս  
կըզձայ . — մեռանիլ վասն հայրենեաց: Հայր,  
այս խղձը բուռն է, չեմ կարող զապել:

## ՊԵՏՐՈՍ

Հայր, Եշտան, յիշեցէք միանգամ, որ Հայ-  
աստան իւր մայրական ծոցոյն մէջ արքայ ոկան  
տան թշնամի անգութ իմ մի կը սնուցանէ :

ԳՐԻԳՈՐ ( ԴԻՄԻԵԼ)

Ո՞լէ այդ:

## ՊԵՏՐՈՍ

Վ եստ Ոարդիս:

## ԳՐԻԳՈՐ

Տէր Առառած :

ՊԵՏՐՈՍ

Հայութեան այս ներքին թշնամին ամենայն  
ջանիւ դարանք կը լարէ միշտ Բագրատունեան  
տան դէմ, և կը չտնայ Յունաց ձեռամբ թա-  
գաւորել : Աս ինքն էր, Խշան, որ Յունաց  
գաղտնի առաջնորդելով մինչեւ Կիւց պարա-  
պաց առջեւ նոցա ընթացքը գիւրացուց : Աս  
ինքն էր, որ նախարարաց մէջ անմիտթեան ու-  
րոմ ցանելով ազգին աղէաքն կրկնապատկեց :  
Ուստի հակառակ Ասրդսի ճգանց մտադիր եմք  
ԴՊագիկ թագաւորեցնել, եթէ . . . . .

## ԳՐԻԳՈՐ

Աւրեմն Գագիայ կետնքն Հայաստանի էր-  
ջանիկ ապագայն է :

ՊԵՏՐՈՍ

Այս, Գագիայ կետնքն կախումն ունի ազ-  
գին վերակենդանութիւնը : Խշան, մինչեւ  
ցոյսօր նա անյայտ ու աննշան կետնք կը վա-  
րէր, մինչեւ ցարդ ոչ ոք կրցաւ կասկածիլ, թէ  
Կիւց կաթողիկէի մէջ արքացանին մի մանուկ  
կասպի :

ԳՐԻԳՈՐ

Այս :

ՊԵՏՐՈՍ

Հայոց այսօր Հարկ է Գագկայ անտի մեկնիլ  
վասնզի ո՞վ գիտէ , թերեւս Արդիս կասկածի ,  
կասկած մի հերիք է , նա կարող է իւր համա-  
խոհից ձեռամբ մարեւ թագաւորական տան  
այն միակ ձրագը , որ է Գագիկ :

ԳՐԻԳՈՐ

Հայր , արդարեւ խորամնեկ է Ա եսու , և  
սոսկալք անդութ :

ՊԵՏՐՈՍ

Օ այդ քաջ գիտելք է , Խշան , որ այժմ  
կըստիպէ զիս խորհիլ Գագկայ կենաց տպահո-  
վութեան վերայ . այս , Պալմւ տէր , կը կաս-  
կածիմ , որ բացակայութեանս առթիւ Արդակի  
փառասիրութեան թերեւս Գագիկ զոհ լինի ,  
և . . . :

ԳՐԻԳՈՐ

ՎԵՐԿՄԻՆՔ , դեռ այսպիսի ամբարշտաց կը  
խնայե՞ս . ո՞ւր են վրէժինդիր շանթերդ , Տէր :

ՊԵՏՐՈՍ

Երկնից գաղտնեաց քննութիւնը մեզ անկ  
է : Երկայնամիտ է Աստուած : Ո՞եզ պարս է  
միայն գործել , գործել ՚ի սէր արդարութեան :  
Ե՛կ ուրեմն , որդեակ , եկ , երթանք Այսուրեանի  
եզրը , ուր ձիաւորաց գունդ մի ձեր համար  
պատրաստած եմ : Կ'երթաս Անի , կ'առնուս

զԴագիկ, կը տանիս ՚ի Շնի, և անդ մեր այն  
հաւատաքիմ գնդաւն զնա կը պահպանես, մինչ  
չեւ . . . :

Գ.Բ.Գ.ՈՐ

Հայրենեաց օգտին կը զիջանիմ . . .  
բայց, Հայր, տես, ահա Արդիս իւր վանի  
մէջ որպիսի խռովացաց դիմօր կը շըջագայի:

ՊԵՏՐՈՍ

Մեր յոյն, որդեակ, Ըստուածէ, թող  
անիրաւն արդարոյն կորստեան համար միշտ  
դարանիր լարել խորհի, իւր լարած որոգայթի  
մէջ ինք միայն կ'իյնաց:

Գ.Բ.Գ.ՈՐ

ԵՆՍԱՐԱԿՈՅ :

(ՀՀ ԽԵՂԻՆ)

ՏԵՍԱՐԱՆ Գ :

ՎԵՍՏ—ՍԱՐԳԻԱ

ՍԱՐԳԻԱ

Ի զո՞ւր աշկունքս մասկել կը ջանամ, ՚ի զո՞ւր  
քունն մահցուաց հանգտուութեան երկնապար  
գեայս շնորհը՝ քանիցս օդնութեան կը կոչեմյոգ  
նագաստակ մարմնոյս : Հոգք և անձուկը զիս կը

ձնշեն, տագնասղալից խորհուրդներեն, որք անշ  
 դադար մնացա մէջ կը յուղին, և աղեկեղ ցաւ  
 միէ, որ զիս կը հալէ և կը մաշէ: Դակ ըդեղիս մէջ  
 յուղեալ մնատանջական վարանաց և տատամ  
 սութեան Հեհեռութերն ի՞նչպէս նկարագրեմ,  
 գլուխս դդմի մի կը նմանի, անպիսան ու դա-  
 տարկ դդմի: Կը ծիւրիմ, կը մաշիմ, կը մորմո-  
 քիմ, բայց ինչո՞ւ. — վաղիւ թերեւս յաղթեն  
 չայք, այս է ահա մնածմանս գլխաւոր ա-  
 ռարկայն, այս պատիս յուղման բուն պատճառը:  
 Վ անդի այն ժամանակ երբ հայկական շեփորն  
 աւետէ չայց յաղթութիւնն, ի՞նչ պիտի լինի  
 իմ ճակատագիրը. — յուսահասնութիւն: Վ անդ,  
 ցրասաւոց կայլակներեն, որ ճակտէս կը հո-  
 սին, վհատութեան կայլակներ. (յետք Շեղ ՚ի  
 ճակառը գանելը) անիծեան ճակատ . . . ճա-  
 կատ, դու որ մինչեւ ցայսօր աննկուն մնա-  
 ցիր ՚ի վտանգս, այսօր վհատանաց քրտունք  
 կը հոսես: Վ ախոն, ծեր մի, զառամ ծեր մի յալ-  
 թեց ինձ, տհագին բանակ մը մի ժամնւան  
 մէջ գումարեց: Ի՞նչ կարող եմ ընել յայսրմ-  
 հետէ, ոչ ապարէն ոչինչ, այս ոչինչ: Դժո-  
 մեմիմ Վ տհրամաց հետ, բայց գժտութեանս  
 արդիւնքն ի՞նչ պիտի լինի, ոչ ապարէն ոչինչ.  
 Թշնամւոյն կողմն անցնիմ, և այդ ոչ ապարէն ո-  
 չինչ, վասնդի առանց իմ չայք կարող են յակ-  
 թել. նախարարաց մէջ գժտութիւնն ձգեմ, բայց  
 այդ եւս անհնարին, վասնդի մի գիշերոց մէջ ի՞նչ  
 պէս կարող եմ այդ մէծ գործն ՚ի գլուխ հանել:

Աւազ, երբ բաղդն է հակառակ, և դիսլը-  
ւածն է անյարմար, ի՞նչ կարող է ընել մարդ։  
—ոքինչ . . . : Բայց յոյս մի այսօր միայն ունիմ,  
սպասել պատերազմի վախճանի : Այնուհետ-  
աւեւ պիտի ջանամ, պիտի ջանամ բուռն զօ-  
րութեամբ ղնախարարսն շահել և թագաւո-  
րել։ Բայց ժողովուրդը կը հնազանդի, դիւրին  
է միթէ ժողովրդեան աչքն եւս շլացունելլ .—  
ոչ, անհնարին : Կոքա պիտի ըստ հնազանդին  
ինձ, արեան ծովու մի մէջ պիտի խղղեն զիս,  
և . . . չնչին յոյս :

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ ԵՒ ԱԲԱՍ

~~ՍԱՐԳԻՍ~~

Ոչ այդպէս, Տէր իշխան, ամենայն յօժա-  
րութեամբ չայք պիտի հնազանդին ձեզ, եւ  
չայաստան ձեր թագաւորութեան բարեբաս-  
տիկ օրերն վայելելով պիտի ցնծայ :

~~ՍԱՐԳԻՍ~~

Կը խաբիս դու, Աքաս, կը խաբիս . կը  
յիշես դու այն ծերունին, այն դժոխային կա-  
խարդ ծերուկն, որ իւր ոսքն միանդամ՚ի գե-

տին զարմելուն՝ անթիւ բանակներ կարող է  
մեր գէմ ոսոխ յարուցանել:

ԱԲԱՍ

Ա ահրամ:

ՍԱՐԳԻՍ

ՈՒ:

ԱԲԱՍ

Հապա ովի:

ՍԱՐԳԻՍ

Կաթողիկոսը:

ԱԲԱՍ

Եփանս, չէի կարծեր բնաւ թէ Եղատ Սար-  
դօի արի սիրտն երբ! ք վեհերոտութեան տեղի  
կրնայ տալ, միթէ կարող չէմք դնա մի հարուա-  
ծով ոչընչացունել:

ՍԱՐԳԻՍ

Ոզորմելի՛ մարդ, դիւրի՞ն դու կը կարծես  
միթէ Կաթողիկոս մը՝ խուժանի Աստուած մի  
ոչընչացունելը. յիշ՛ մրանդամ, թէ այդ մի հա-  
րուածով քանի գլուխներ թաւալադլոր ՚ի գե-  
տին պիտի իյնան, քանի արիւնահեղութիւնք,  
քանի զոհողութիւնք պիտի լինին. ոչ թէ Հայք  
համայն, այլ և մեր ընտանի գերդաստանք խել  
սոսկալով պիտի վախչին մենէ, և վրէմինդրու-  
թեան կայծակը ամենուռա պիտի սպառնայ մեղ-  
մահ:

ԱԲԱՍ

Այս, վսոնցի պաշտելի՛ Հայրապետն ամե-

նայն Հայոց, և սրբատիղծ կը համարուի այն  
ձեռք՝ որ կը ծանրանայ նորա վերայ :

## ՍԱՐԳԻՍ

Երաս, խոհեմութիւն մեզ պիտոց է, այն,  
մե՛ծ խոհեմութիւն . այդ ծերունին մեր կողմը  
որսալու սրարտիմք նորս ամեն ջանիք թափել:

## ԱԲԱՍ

Ենէնարին . վասն զի նա ջերմ ողոշոպան է  
Գաղղիոյ :

## ՍԱՐԳԻՍ

Եւ ոչ թէ միայն նա, այլ և Վահրամ:

## ԱԲԱՍ

Ծայց դուք պիտի թագաւորէք, այս մեր  
իղձն է :

## ՍԱՐԳԻՍ

Քանի որ Գաղղիկ կենդանի է, անկարելի :  
Երաս, խնդիր մի ունիմ, մահու և կենց խըն-  
դիր մի :

## ԱԲԱՍ

Վկայ է Եստուած, թէ պատրաստ եմ կա-  
տարել եթէ ձեռնհաս եմ :

## ՍԱՐԳԻՍ

Թունաւորել զԳաղղի՛ : Եյս գաղտնիք մի  
է, և վատահ եմ՝ թէ ոչ ոք պիտի կասկածի ձեր

վերայ, ըստ որում դուք ձեր խելացի ճարաւարութեամբն ժողովողեան առջեւ Քաղբատունեան տան կուսակից համարուած էք մինչեւ ցարդ :

## ԱԲԱՍ

Դժուարին :

ՍԱՐԳԻՍ (Կը Ճնշե)

Արաս, տե՛ս, Այսնեաց իշխանը ոռքդ ինկած որպիսի աղաջաւոր դիմօք կը խնդրէ : Արամս, յիշէ ապագայ կեանքդ, յիշէ երջանկութեամբ լի կեանքդ :

## ԱԲԱՍ

Իշխան, ըստ գիտե՞ս միթէ, թէ Գաղիկ երկուարիէ ՚ի վեր անցայտ է, և ոչ ոք ունի նորա կենաց ու մահուան վերայ և ոչ մի տեղեկութիւն :

## ՍԱՐԳԻՍ

Ոչ, Արաս, Գաղիկ անցայտ չէ, ամենայն խուզարկութեամբ որոնելէս զինին նորա թաքստեան տեղին գիտուածով մի հուսկ կըցայ գտնել :

## ԱԲԱՍ

Օ արմանալի ! . ո՞ւր :

## ՍԱՐԳԻՍ

Դիտէք, Անոց կաթողիկէ եկեղեցւոյ ա-

ջակողմեան գասուն մի անկիւնը , սեւազգեստ  
իբր ժառանդաւոր պատանի մի ամեն առաւօտ  
կ'աղօթէ :

ԱԲԱՍ

ԱՅԻ :

ՍԱՐԳԻՍ

Հայրապետին բբաց սիրավիր ակնարկը՝ գե-  
տամձ էք , երբէք նարա վրայէն քը հեռանար :

ԱԲԱՍ

ԱՅԻ :

ՍԱՐԳԻՍ

Այն սեւազգեստ պատանին , այն ազօ-  
թաւորը քաջին Աշոաց միածին զաւակ Գա-  
գիկն է :

ԱԲԱՏ

ՈՇԵՑԴ Աստաւած , ուստի ճանաչեցիք :

ՍԱՐԳԻՍ

Երէկ առ Հայրապետն գնացի , որպէսզի  
խորհրդակցիմ իւր հետ աբքունի գանձուն նեղ  
վիճակի և բանակի պարենի գժուարութեան հա-  
մար . տեսոյ յանկարծ , որ նա ՚ի կաթողիկէն  
կ'իջնէր , լրտեսեցի զինքն . և ահա կաթողիկու-  
ունոյն պատանւոյ ճակաան համբուրելով՝ իւր  
հրամեշոը կը յայտնէր ու կ'օրհնէր . ճանցայ  
որ այս որտառնին նոյն խակ ինքն Գագիկ էր :

## ԱԲԱՍ

Եթէ այդպէս է , այս գիշեր նորա արեւը  
պիտի մարի , և . . . :

## ՍԱՐԳԻՍ

Ով ու բախտալթեանս :

## ԱԲԱՍ

Այս , Գագիկ պիտի իյնայ . . . Տէր Ու-  
նեաց , կը հաւատայք այս իմ խօսքիս :

## ՍԱՐԳԻՍ

Ոհշու-չու :

## ԱԲԱՍ

Ուրեմն ալ հարկ չըկայ երկար խօսելու , ահա  
կ'երթամ . . . որպէսզի երբ հարկը պահանջէ ,  
կարող ինիս առանց մի խոռովութեան թաղաւ-  
որել . մի յուսահատիք բնաւ , յաղթութիւնը  
միշտ մերն է . եթէ չայք յաղթեն , դիւրին է  
մեզ գարձեալ նախարարները որսալ և բատ հա-  
ճյս մեր ամեն ինչ տնօրինել , իսկ եթէ Յոյնք ,  
գուք արդէն թագաւոր էք , վասնդի Կայսեր  
խօսուումն է այս :

## ՍԱՐԳԻՍ

Աբաս , խոհեմութեամբ չարժէ՛ , ամեն  
ճարտարութիւն , ամեն միջոց , վերջապէս ամեն  
հնար ՚ի գործ գնել աշխատիմք , մինչեւ որ մեր  
նպատակին հ սսնի իք : Այս գիշեր մեր գիտաւ-  
որութեան խոզնդոտից մեծն ձեր շնորհիւ պի-

տի վերնայ , այս , Գագիկ պիտի իշնայ : Ի՞սոյց ,  
Աբաս , ջանացիր խոհեմութեամբ միայն գործել :

### ԱԲԱՍ

Ենհոգ եղիք , կաց բարեաւ . . . վազիւ պա-  
տերազմէն վերջը՝ յԱնի կարող եք զիս տեսնել :

( Կ. Դ. Խ. )

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԵՍՏ-ՍԱՐԳ.ԻՍ

ՍԱՐԳ.ԻՍ

Պնա՛ , ով մեծ մարդ , զոհագործութեան  
գործիք մի եօ դու , քե՛ւ արդարութիւնը պի-  
տի յաղթանակէ , թէեւ խիղճս ուլ կը վկայէ ,  
թէ զոհողութեան մէջ արդարութիւն չը-  
կայ : Ի՞սոյց ի՞նչ է արդարութիւն , ով դո-  
րա վերայ ճիշդ գաղափար մի ունի . — ոչ ոք :  
‘Դորա անունն է միայն , որ կը լսուի , խեկ գոր-  
ծադրութիւնն . — երեկք : Փառասիրութիւնը  
մարդկանց բնական է , զայս ովկիրնայ ուրանալը,  
բայց առանց զոհողութեան փառաւորութիւն  
եղած է , կրնայ լինիլ , յուռան խեկ կարելի՞ է :  
Ո՞իոյն կործանմամբ միայն միւս մի կարող է

կանգնիլ, և այս աշխարհիս անցուդարձն է :  
 Ի այցեք սպատմութեանց թերթերը, բացեք, և  
 միանգամ ակնարկ մի ձգեցեք աշխարհի այն ա-  
 մեն ականաւոր մարդկանց վերայ, և գիտցիք,  
 թէ սպա ի՞նչպէս բարձրացած են : Ի այցեք, և  
 իմացեք, թէ սոցա ո՞ր մին առանց իւր նր-  
 մանին զսհելու բարձրացաւ : Արդ՝ քանի որ այս  
 սյսպէս է, քանի որ փառասիրութիւնը մարդ-  
 կանց բնական է, քանի որ արդարութիւնը մարդ-  
 կան փառասիրութեան միշտ զոհ կը լինի, ու-  
 րեմն անհրաժեշտ հարկ է Ախոնեաց իշխանի և ո-  
 գործել ՚ի փառս իւր, վասնղի նկըն եւս մարդ-  
 կային անհատ մի է, և ենթակայ փառասիրու-  
 թեան : Այս, չեմ կարող զանձնս խաբել, փա-  
 ռաւորութեան կը բաղձամ . թագ, այս իմ  
 փառքն է, այս փառքն ուրիշ յափշակած մի-  
 ջոցին չեմ կարող անտարբեր մնալ . ոչ, կարող  
 չեմ երբեք զոհել այս թագն Գագկայ, թող  
 մեռանի Գագկիկ, որպէսզի փառաւորուի Ազա-  
 տըն Ապրդիս :

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱԵՍՏ-ՍԱՐԳԻՍ, ԴԵՐԵՆԻԿ

## ՍԱՐԳԻՍ

Դուք էք, Իշխան, բարի է ուրեմն ձեր գո-  
 լուսու :

ԴԵՐԵՆԻԿ

Այն, վասնզի ձեղ, Իշխան Արևնեաց, աւել  
ալիք մի ունիմ:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ աւետիք :

ԴԵՐԵՆԻԿ

Կենդանի է Գագիկ :

ՍԱՐԳԻՍ

Այդ է ձեր աւետիք :

ԴԵՐԵՆԻԿ

Այն: Իշխան, մինչեւ ցարդ նորա թաքրս-  
տեան աւելին կ'որոնի՛նիք, մինչեւ ցայսօր կը-  
կարծէնիք, թէ Գագիկ թերեւս մեռած լինի,  
կամ տարաշխարհիկ լքեալ պանդուխու օտար  
աշխարհաց մէջ. բայց այսօր Գագիկ կենդանի  
կ'ապրի Ենւց կամողիկէի մէջ:

ՍԱՐԳԻՍ

Հոգ չէ . երեկ և այսօր կենդանի էր, բայց  
այսուհետեւ ոչ:

ԴԵՐԵՆԻԿ

Կը զառանցէք, Իշխան, վստահ էք :

ՍԱՐԳԻՍ

Վստահ եմ, վասնզի Աբասայ վըէմինդիք  
բազկէն ոչ ոք կարող է մահուանէ խուսափել.  
Իշխան, յերկինս նայէ, ի՞նչ կը նշանակես:

ԴԵՐԵՆԻԿ (Նայելով)

Աշինչ :

ՍԱՐԳԻՄ

Այս պահուն հագի մի յերկինս կը սլանայ,  
այս պահուն մարդ մի կ'ինայ . . . այս Գա-  
գիկն է, մեր ամեն ջանից խոքնդոս Գագիկն է:

ԴԵՐԵՆԻԿ (զարմանօք)

Խոչպէս :

ՍԱՐԳԻՄ

Դիպուածով մի Գագիկայ թաքստեան տե-  
ղին իմացայ, և համոզուեցոյ թէ Գագիկ վրէժ  
խնդրութենէս փախած տպահով կ'ապրէք,  
ուստի կոչելով զլբաս, յայտնեցի նմա ամեն  
ինչ, և փութացուցի զնա գնաւ և զԳագիկ ըս-  
տանանել:

ԴԵՐԵՆԻԿ

Երդարեւ ժիր էք, իշխան, միր և զգաստ:

ՍԱՐԳԻՄ

Եւ այս պահուս վատահ եմ, որ Գագիկ  
մահուան յետին ճգնաժամին մէջ կը տառապի:

ԴԵՐԵՆԻԿ (աղաղութեամբ)

Ո՞ի յուսացք :

ՍԱՐԳԻՄ (աղջւղով)

Խոչչ, զը յուսամը:

ԴԵՐԵՆԻԿ

ԱՅՆ, մի յուսացք, երբէք :

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչպէս, Իշխան, Աբաս կը դաւէ՞ ըզ  
մեղ :

ԴԵՐԵՆԻԿ

Հարազատ է Աբաս, բայց ի՞նչ օգուտ, բաղդն է իւր հակառակ, վասնզի մեր հակառակորդաց տեսութիւնը և ժրութիւնը մենէշատ տւելի լինելուն համար Պագիկ դեռ պիտի ապրի :

ՍԱՐԳԻՍ

ԵՐԻՌԻՔ :

ԴԵՐԵՆԻԿ

Տէր Այսնեաց, հաղիւ թէ արեւն կրսկաէր մարն մանել, կը շըշէի սա բլին վերսց . տեսայ յանկարծ, որ մարդ մի գաղտ կ'աղօթէր :

ՍԱՐԳԻՍ

ՈՎԷՐ այդ :

ԴԵՐԵՆԻԿ

Հայրապետը : Հաղիւ թէ բոպէ մի անցաւ, ահա նշմարեցի մի մարդ, որ յուշիկ քայլիւք դէալ ՚ի Հայրապետը կը գայր . Ճանցայ, որ սա եւս Պրիդոր Պահլաւն էր :

ՍԱՐԳԻՍ

ՈՎ հիացմանս :

ԴԵՐԵՆԻԿ

Անդ գաղտ խօսակցեցան միմեանց հետ :

ՍԱՐԳԻՍ (ալևուժիւ)

Ի՞նչ խօսակցեցան :

ԴԵՐԵՆԻԿ

Հայրապետը կը կասկածէր, թէ Գագկայ  
թաքստեան տեղին թերեւս ձեր սուր տեսու-  
թենէն կամ ժրաջան խուզարկութենէն վրիպած  
ըլլինի, ուստի յորդորեց զՄրիգոր դնաւ յԱնի,  
և զՄրիգիկ անտի տանիլ ՚ի Շնի :

ՍԱՐԳԻՍ

ՈԵԿՆԵցան Գրիգոր :

ԴԵՐԵՆԻԿ

Զիաւոր մի աղատագնդաւ մեկնեցաւ :

ՍԱՐԳԻՍ

Եփսոս, աղատեցաւ Գագիկ, վասնղի ան-  
հնար է Երասայ զՄրիգիկ գտնեւ Անւոյ մէջ :

ԴԵՐԵՆԻԿ

Հոգ չէ, երբ լինի Գագիկ սուսերահար  
պիտի իյնայ, հերիք է՝ որ այժմ ճիշդ տեղեկու-  
թիւն ունիմք նորա կենաց վերայ :

ՍԱՐԳԻՍ

Կը վհատիմ, Իշխան . Հաւատա՛, երբ կը  
տեսնեմ բաղդին մեր դէմ մասնաւոր հակառա-  
կութիւնը, կը վհատիմ իսպառ :

ԴԵՐԵՆԻԿ

ԴՈՒՔ կը վհատիք :

ՍԱՐԳԻՍ

Վասնզի Ըագրատունի տան Երկնիք պաշտաման կը տեսնեմ :

ԴԵՐԵՆԻԿ

Աը սխալիք .ո՞չ, Երկնից պաշտամնութիւնը այդ ամբարիչտ տան համար չէ : Ի՞նչ, Երկնիք այդ տոննը պաշտպանէ . . . Ըագրատունի տունն պիտի կործանի, և այդ կործանումն մի այն Դերնկայ ձեռամք պիտի լինի :

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչպէս :

ԴԵՐԵՆԻԿ

Ուարդ մի կոյ, որոյ Գուրգէն անունը ձեղ արդէն ծանօթ է : Այս մարդը մեղ հաւատարիմէ, այնպէս չէ :

ՍԱՐԳԻՍ

Այս :

ԴԵՐԵՆԻԿ

Ահա կ'երթամ յէնի, և կը յղեմ զնա 'ի Բջնի :

ՍԱՐԳԻՍ

Յետոյ :

ԴԵՐԵՆԻԿ

Դուք արդէն գլուխէք, որ Գուրգէն իւր կեղծաւոր ընթացիւքն թէ Ըագրատունեաց և

թէ Պահլաւունեաց շատ սիրելի է : Կը մոնէ 'ի  
բջնի , զԴագիկ կը դտնէ , կը մտերմանայ , եւ  
ասլա օր մի պատեհ միջոց դտնելով՝ կրապանա-  
նի զԴագիկ , որով կը մարի Շագրատունի տան  
կանգման յուսոյ վերջին ճրագը :

### ՍԱՐԳԻՍ

Բայց եթէ . . . :

### ԴԵՐԵՆԻԿ

Անխոռով կաց . ժողովուրդն ու Վրիգոր եր-  
բէք սկսուի չը կասկածին Գուրգէնայ վերայ ,  
վասնզի Գուրգէն կեղծաւորաբար հող ու մո-  
խիր ցանելով իւր գլխոյն վերայ , Վրիգոր Պահ-  
լաւայ հետ լալով պիսի թաղէ Դագիայ արիւ-  
նոտ դիակը : Ճամանակը սուղէ , Խշան , կաց  
բարեաւ . ահա կ'երթամ . . . անշուշտ լեր ,  
յաղթութիւնը մերն է , վասնզի հզօր եմք :

( Ա. Թինի )

### ՏԵՍԱՐԱՆ Է .

#### ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ

### ՍԱՐԳԻՍ

Արդարեւ ճշմարիա ասացեր , ով քաջդ  
Դերենիկ , թէ հզօր եմք . այս պահուն երբ մը-  
տացս մէջ կը ներկայացունեմ ընդարձակ զօրու-  
թեանս մէն մի ճիւղերը , կը հիանամ . իսկ երբ  
ամքաւ հարստութեանս վերայ տկնարկ մի կը

ձգեմ, կը զարմանամ ու կ'ասկչիմ: Ովլ միթէ ձեւ  
 ուն կրնայ ամբառնալ իմ մեծ զօրութեանս  
 դէմ: — ոչ ոք: Ծագաւորական գանձուն գան  
 ձապետ, Տէրութեան առաջին նախարար, Աիւ-  
 նեաց Տան իշխան՝ երբ այսպէս բարձր դրից  
 մէջ հզօրեղապէս կը սիրամ, ով կարողէ միթէ  
 ախցեան ինձ կանգնել. — ոչ ոք: Արդ՝ երբ  
 այսպէս զօրութեամբ հզօր, հարստութեամբ  
 կարող ամենայնի, ալ ի՞նչ հարկ կայ ինձ տա-  
 տամնելու . — ոչի՞նչ: Օազրելի ապուշ մի պի-  
 տի լինիմ, եթէ տարակուսանաց մի բառ թու-  
 թուլեմ ապագայ յաջողութեանս վրայ: Ծագ,  
 այս ակնկալութիւնս է, թագ, այս իրաւունքս  
 է, վասնզի հզօր եմ. աշխարհի այս ճակատա-  
 գրին մարդիկ պարտին խոնարհիլ. “Իրաւունքն  
 հզօրաց” . սկզբունք մի է այս, համաշխարհա-  
 կան սկզբունք . փառաց, վայելից, վերջապէս  
 ինչ որ երջանկութիւն է, յուսացող բիր մի՝  
 պարտի միշտ ՚իստ ակնապիշ լինել, վասնզի ան-  
 հնար է՝ որ առանց այս սկզբունքն գործադրու-  
 թեան, մարդ կարօղանայ բարձր զօրութեան  
 մի տէր լինել: Առվարդ բարձրացան գերդաս-  
 տանք, սովաւ փայեցան և անմահացան մարդ-  
 կային անհատք, սովաւ ուրեմն թող բարձրա-  
 նայ Տունն Աիւնեաց, և սովաւ թող փառաւ-  
 որուի Աղատ Աարդսի մեծ անունք. վասնզի  
 հզօր է նա, ուստի իր իրաւունքն է մեծանալ  
 ՚ի փառս, և անմահ կալու մնալ մինչ և ցդարս  
 անվախճան: (Երդոց յայներ կը լսուին) Բայց ձայն

կը լսեմ, Արկիմիք, Հայ զինաւորք են, որք կ'եր-  
գեն. ահա և Եշման, փորձեմ այս մարդը,  
թերեւս կարող լինիմ որսալ իամ գէթ վը-  
հատել:

---

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ ԵՄՐԱՆ

---

### ԵՄՐԱՆ

Կը լսէք, Տէր Այսնեաց, զինւորք կ'երգեն:

ՍԱՐԳԻՍ

Այս, իմաստ պրատառուց:

### ԵՄՐԱՆ

Արդարեւ, Տէր իշխան, սրտիս զգացման  
թելերն կը թրթուան, երբ՝ Քաղցր է մահ վա-  
սին հայրենեաց ո այս խօսքը կը լսեմ:

ՍԱՐԳԻՍ

Այս, Իշխան, քաղցր է մահ, երբ հայրե-  
նիք երախտագէտ է. բայց մեր հայրենիք Հայ-  
աստանէն երախտագիտութիւն յուսալ, մեծ  
յիմարութիւն:

### ԵՄՐԱՆ

Ի՞նչ կը խօսիք, Տէր իշխան, կը մեղանէք,  
երախտագէտ է միշտ Հայաստան:

ՍԱՐԳԻՍ

Արբէք, այլ ընդհակառակն է ապերտիստ:

ԵՄՐԱՆ

Ալ սիսալլըք, քաւ լիցի ։ ։ ։ ։ ։

ՍԱՐԳԻՍ

Ե՞ն կը սիսալիմ. Իշխան, մինչեւ ցայսօր հէնք  
և աւազակը երբ այսպէս կարկտի նման կը տե-  
ղան ՚ի Հայս, չեղաւ միթէ գէթք քաջ Հայ մի-  
որ պաշտպանել կամեր իւր հայրենիքը:

ԵՄՐԱՆ

Խիստ շատեր:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ եղաւ նոցա վախճանը:

ԵՄՐԱՆ

Փառաւոր մահ:

ՍԱՐԳԻՍ

Տիաներ մահ:

ԵՄՐԱՆ

Ամենեւին:

ՍԱՐԳԻՍ.

Ամենեւին. Երբ այդ քաջերն մահուան  
դաշտի մէջ մեռան, ի՞նչ ըրաւ Հայաստան,  
դիակը:

ԵՄՐԱՆ (Պարմանօք)

Ի՞նչ:

ՍԱՐԳԻՍ

Ապուշներ են ասելով, նոցա նահատակու-  
թիւնը դառն ժայխտով մը դիակը:

## ԵՄՐԱՆ.

**ԱԱՀԱՅԻՑՔ** . . . .

## ՍԱՐԳԻՍ

Ե՞ս կը հայհօյեմ. մեռան նորա, այնպէս  
չէ. ի՞նչ եղաւ նոցա յիշատակը :

ԵՄՐԱՆ (պաղութեամբ)

**ԱՐԲԻՆՈՍ աւերակներ :**

## ՍԱՐԳԻՍ

Իսկ նոցա վարձըն ու պսակ :

## ԵՄՐԱՆ

**ԴԵՐԵՂՄԱՆ մի :**

## ՍԱՐԳԻՍ

ԴԵՐԵՂՄԱՆ. և ոչ ափ մի հող, և ոչ ցուրտ  
քար մի նոցա մահարձան կանգնեցաւ, ափ  
սոս . . . .

## ԵՄՐԱՆ

ԴՇՄԱՐԻՍ հայրենասիրի մի գերեզմաննե ա-  
պագայ սերնդեան երախտագէտ սիրան է, իսկ  
նորա մահարձանն ու կոթողն անմահութեան  
նոցա օրհնութեան մրմնւջներն են :

## ՍԱՐԳԻՍ

Ապագայ ժողովրդեան օրհնութիւնը թող  
նոցա անմահական կոթող լինի, հոդ չէ, այդ  
ձեր համոզումն է: Բայց ասա, գեթ նոցա  
մահուան վիճքը լուծեց Հայատան մինչեւ  
ցայսօր :

ԵՄՐԱՆ

| ուծեց և պիտի լուծէ :

ՍԱՐԳԻՍ

Բայց թշնամին ահա կըքալէ :

ԵՄՐԱՆ

Վատերու առաջնորդութեամբ . . . .

Սակայն վաղիւ Հայաստան հրաշք պիտի գործէ , որով անշուշտ եմ, թէ վատք ամօթահար պիտի սատակին :

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ հրաշք :

ԵՄՐԱՆ

Պատի լուրի հայկական շեփորի յաղթութիւն գոռալը :

ՍԱՐԳԻՍ

Բայց այդ յաղթութենէ ի՞նչ արդիւնք պիտիքաղէ Հայաստան, գիտէք :

ԵՄՐԱՆ

Ի՞նչ :

ՍԱՐԳԻՍ

Յունաստանի ապագայ վսէմինդրութիւնը

ԵՄՐԱՆ

Ճող չէ , ապագային մէջ թող Յունաստան որոտայ , ապագայ Հայաստանի որդիքն , եթէ հայրենեաց հարազատ գաւակներ լինին , մեղնը ման կարող են զՅունաստան պատժել : Իշխան , ապագային խնդիրը ապագայ ժամանակաց թող մնան , առ այժմ մեր պարտըն է գործել՝ի փր-

կութիւն հայրենեաց : Կաց բարեաւ , ժամանակն ուշ է . բանակին հսկողութիւնը ի՞նչպէս գիտէք մեզ յանձնուած է . պաշտօնս զիս 'ի գործ կը կոչէ :

( կը մէկնէ )

### ՍԱՐԳԻՍ

Դնա՛ , անպիտամ'ն մարդ , Բագրատունի տան կուսակից ողորմելի մարդ : Բայց ի՞նչ կը տեսնեմ , ահա կաթողիկոսն ու Ա ահքամ , որք կը խօսակցին . 'ի զո՞ւր կը խորհրդակցիք դուք , չարամիտ ծերք , յաղթութիւնն իմ է , վասնզի հզօր եմ . Հանգիստ ննջեմ ուրեմն :

( կը մանէ իւր վըանէ ներշնակողնուը )



### ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԿՈՍ , ՎԱՀՐԱՄ

### ՎԱՀՐԱՄ

Այս քո աղդասիրական ջանից արդիւնքն է , ով միացան Հայք , և միակամ սրտիւ ասու 'ի Ծիրակ համախմբիւթութացին 'ի պաշտպանութիւն հայրենեաց :

ՊԵՏՐՈՍ

Որդեակ իմ , աշխարհիս վերայ մարդիկ միշտ միմեանց բարերարելու պարտաւոր են : Ո՞նչ է մարդ , երբ իւր եղբարց թշուառութեան վե-

բայ կարելցելով՝ ի սէր նոցա կը գործէ և կը մեռանի : Որդեակ, հանրութեան համար գործելն առաքինութիւն է : Որդեակ, հանրութեան համար մեռանին անմահութիւն է : Երանի այն մարդոյ, որ այս վեհ զգացումն իւր սրտի մէջ կը կըէ և 'ի գործ կը դնէ :

#### ՎԱՀՐԱՄ

Այդ վեհ զգացմամբ է, որ ահա այսօր դուք, Հայր, 'ի դաշտ մարտիս դիմած էք :

#### ՊԵՏՐՈՍ

Որդեակ իմ, կը տեսնե՞ս դու այս խաչը, զայս Երկինք մեղ յանձնեց, զայս կրելու համար : Ասրա վրայ փշեցին մեր հայրերն իրենց հոգիները, և զատ ներկեցին իրենց արեան կաթիլներովը, Այս, որդեակ, այս զգացմամբ միւ այն աստ եկած եմ այսօր . բարձրացունել այս խաչը մեր բանակի վերոյ, միշեցնել մեր հայրենասէր զաւակաց իրենց հարց անձնանուիրութիւնը այս առւրբ խաչի համար, և ապա մեռանիլ թերեւս և ինձ այս խաչը գրկելով . այս է պաշտօնա, որդեակ իմ, այս և իմ ուխտ :

#### ՎԱՀՐԱՄ

Անձ է պաշտօնդ, նուիրական է ուխտ, Հայր, բայց . . . :

#### ՊԵՏՐՈՍ

Որդեակ իմ, աշխարհիս բոլոր վայելքներն անցաւոր են, և աշխարհս իսկ ունայն, մարդու

այս ունայնութեան հովտի մէջ նետուած ծառիկ մի է, որ կը փթթի և շցտ կը թառամի. բայց կայ պարտականութիւն մի, որ զմարդն կ'անմահացունէ. — սիրել զԱստուած, սիրել զքնիերն . . . սէրը անմահ է, որդեակ, և հետեւաբար անմահ այն մարդ, որ կը զահի սիրայ սեղանոյ վերայ. մեր ուխտը, որդեակ, սիրել է, և ահա այս ուխտը կատարելու համար պիտի չը խնացեմ արիւնս. զի ուր սէր և արդարութիւն, հոն յոյս և փրկութիւն, և ուր մահ վասն սիրոյ, անդ և անմահութիւն:

#### ԳԱՀԻԱՄ

Ո՞հ, որչափ է քաղցր է, չայր, սիրոյ սեղանոյ վերայ ողջակիզելն ու պատարագիլը:

#### ՊԵՏՐՈՍ

Չաւատա՛, որդեակ իմ, երբ մանուկ էի կը յարդեի զաշխարհս, բայց այժմն ոչ աշխարհս թշուառութեան ծով մի է, ուր մարդս իբր կոհակ մի կը ծփի: Այս ընդարձակ ծովու մէջ մեք կը տարութերիմք, մեր յօյն միմիայն Երկինք լինելով, ահա այս գթած Երկինքն էր, որ տեսնելով մարդկան ազդի թշուառ վլճակը, 'ի գութ շարժեալ՝ գիտե՞ս, որդեակ իմ, ինչ զարմանալի սքանչելիք գործեց. ինքն ալ ո՞հ, խոնարհեցաւ, ինքն ալ իբր կոհատկ մի այս արտասուաց ծավու մէջ նետուեցաւ և սկսաւ ծրագիլ. ով անպատում խոնարհութիւն, ով սէր.

՚Եա ՚իսէր մարդկութեան վշտաց և թշուառութեան խաչն ուսն առած՝ իբր ողորմելի էակ մի բարձրացաւ անարդանաց խաչի մի վերայ, և մեռաւ Անմահը մեր համար, որպէսզի սովորեցնէ մարդկանց վշտաց գոհութեամբ համբերել։ ՚Եա մեռաւ, բայց իւր վերջին կտակը սուեղաւ. « Ուահացուք, զիրար սիրեցէք »։ Ո՞եր հայրերն ալ, որդեակ, զայս քաջ գիտելով՝ սիրեցին զիրար, պաշտպանեցին իւրեանց ազգն ու կրօնը, և « Կստուած, մէր ո աղաղտկելով՝ մեռան։ Ուստի մէք՝ նոցա որդիքս պարտիմք հետեւիլ նոցա շաւղաց, և չը թողուլ երբէք մեր յետագայ սերնդեան ողէտք և վիշտք, և նախատանաց կնիք նոցա օրհնեալ ճակատուց, ո՛հ, կնիք գերութեան և թշուառութեան։

### ՎԱՀՐԱՄ

Ո՞եր յետագայ սերնդեան այդպիսի դառնաղէտ ապագայ մի չը թուշց համար է, որ այսօր, Հայր, ահա ՚ի դաշտ մարտիս դիմած հոգի աւանդել ուխտած եմք։

### ՊԵՏՐՈՍ

Ո՞եր հայրերը, որդեակ, զայդ խորհելով վաղեցին ՚ի գտանդս մահու. և Արդարութիւնը յաղթական պսակ հիւսեց նոցա վեհ ճակատուց։

### ՎԱՀՐԱՄ

Կը հաւատամ, Հայր, կը հաւատամ եւ

կ'երանեմ այն տմեն անձինքն՝ որք ՚ի ուշը եղալը անկան:

### ՊԵՏՐՈՍ

Յերկրի Երանութիւն մի՛, խոկ յերկինս ան-  
թառամ պատկ մի է վարձք առաքինի նահա-  
տակաց :

### ՎԱՀՐԱՄ

ՎՀ. Երկինք արդեօք այդ մեծ փառաց զմեղ  
պիտի արժանացունե՞ . . . .

### ՊԵՏՐՈՍ

Այս՝, որդեակ, ձեր քիրտն ու արիւնն Երկ-  
նից հաճոյական զօհեր պիտի լինին, և . . . .

### ՎԱՀՐԱՄ

Վնշուշտ եմ, անշնուշտ, որ Երկինք զմեղ  
այդ մեծ փառաց պիտի արժանացունե :

### ՊԵՏՐՈՍ

Յուսով միշտ ասլրիմք, ով որդեակ իմ, յու-  
սով փափագիմք այն աւուր, յոր Յաւիտենա-  
կանը զմեղ պիտի օրհնէ . . . հանգստացիր,  
որդեակ իմ, և անկասկած ննջէ, քանզի դիշե-  
րց կէս շոշանը դրեթէ մօտ է:

( ԿԸ ԲԵՒՆԻ )

ՏԵՍԱՐԱՆ Ճ.

ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

ՈՒԿՆԵցաւ, գնաց որդեգորսվ հայրն իմ սիւ  
ըելի։ Ով, խանդ մի է, որ ահա այս պահուս  
սիրտս կը վառէ, աւիւն մի է, որ ծեր երակաւ  
ցը մէջ հուր կը շնչէ. կը զգամ ահա, որ վաղիւ  
ազգիս զաւակաց պարագլուխ արժանացած  
աստ և անդ պիտի թռչիմ, սրտեր վառելու,  
հոգիներ բորբոքելու, վեհերուաներ խրախուսե-  
լու։ Դուք, ով չայկայ զաւակներ, դո՞ւք չայ  
փառաց նախանձախնդիր զաւակներ, վաղեցէք,  
քանզի փառաց է այդ ասպարէզ. անվեհեր շա-  
հատակեցէք, ցուցէք թշնամեաց ձեր քաջայազմ  
բազիի անպարտելի զօրութիւնը, և իմացուցէք  
նոցա, թէ չայք կարող են մեծամեծս գործել,  
կարող յաւիտեան։ Ի այց ահա Աշոտ. (առ Աշոտ)  
քաջ, վաղիւ սեղան տո՞ւր պատրաստել, և կա-  
նուխ հրաւեր կարդա չայրապետին և մեր հա-  
մօրէն եղբարց, գալ և անդ վերջին անգամ գի-  
նի ըմալել՝ ի փառս հայրենեաց։

ԱՇՈՏ

Պատրաստ եմ, Տէ՛ր։

(Կ Ջինի)

## ՎԱՀՐԱՄ

Այս, Հայաստանի դաւակներ, սեղան պիտի պատրաստեմ ձեղ, ուր դուք վերջին անգամ գինի պիտի ըմպէք ՚ի կենդանութիւն հայրեննեաց, և ապա վառ սրախւ հայկական պատերազմի շեփորաց ձայնի ընկերանալով “Յառաջ, յառաջ” աղաղակելով պիտի թուիք և սրանայք կոտորել այն բանակը, որ Հայ ազգայնութեան դարաւոր իրաւունքը բռնաբարելու համար՝ ի Հայաստան արշաւել իշխեց: (յուղալ) Ով Աստուած, Աստուած, այն բաղձակի ժամուն ըստ Հայաստան տուր մեղ յիշել. Աստուած, այն անձկակարօտ պահուն՝ դու զՀայաստան հաշեաց յիշել. Աստուած, այն փառաց ժամուն դու զՀայաստան բարձրացն, հովանաւորեա՛, պահպանեա՛ միշտ և յաւիտեան:

(Կը մինե իւր վրանի ներդին ի՞ով)

## ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Ի գաշտն Շիրակայ , 'ի բանակին հայոց , յանդիմանն բանա .  
կին Յունաց :



## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

Առսկառէ գիշեր . ապուշ պիտի լինէի , եւ  
թէ Աքարչին անսահման զօրութեան վերայ ջ  
ղարմանայի : Ոիթէ տիեզերաց անհունութիւ-  
նը դիտող մահկանացու բիբ մի կարողէ ուրա-  
նալ հզօր և ամենակարող էի մի գոյութիւնը .  
Երբէք : Երկինք և երկիր , աւանիկ և սա լոյն  
բնութիւնը կենդանի վկայք են նորա գոյու-  
թեանը , վկայ նաեւ երկնից սա կապուտակ  
ծովու մէջ լողացող անթիւ լուսեղէն աշերն՝ որք  
զմեղ կը դիտեն , զմեղ , որ զիրար յօշուելու  
սպատրաստ արեան ծարաւի կատաղի գազանաց  
նման՝ արշալուսոյ ծակման կ'սպասեմք : Աւաղ ,  
տիեզերաց այս սքանչելի դաշտի մէջ վսեմ ա-  
րարածը խել բնութեան գերագոյն Աքարչի  
բարձր սպատգամաց ջ հնազանդելով զիրար ա-  
տելու , զիրար մերժելու , և որ սոսկալին է , կը

յանդգնին մինչեւ անգամ՝ վիրար փողոտելու  
 խողսողել։ Բայց դու վեայ ես, երկինք, վեայ  
 այդ ըւսաւոքք, որ խաղաղութիւնը հաստա-  
 տուն մնալու, և մարդկային անմեղ արիւններ  
 չը թափուելու համար չ'ամցանիք բնաւ մեր  
 այս անողօքելի թշնամիներէն զայն խնդրելու։  
 Բայց նոքա մերժեցին, մերժեցին մեր աղացա-  
 նաց խաղաղասիրական ձայնը, և իրենց թրերը  
 'ի պատենէ մերկանալով, ցուցին մեղ՝ թէ պատ-  
 րաստ են արդարութեան սահմանը ոտնակո-  
 խել և արեան հեղեղով լուանալ ամբողջ զայ-  
 աստան։ Ոչ, դուք, վարք, դուք դեռ կա-  
 րող չէք արդարութեան ձայնը խղդել. (Երբը  
 ժամանակ) տեսէք սա արենակաթ թուրք, տե-  
 սէք և յիշեցէք, թէ քանի քանի անգամ ձեր  
 հարց պարանոցաց վերայ շողալով՝ քանիցո դի-  
 աթաւալ յերկիր կործանեց ամբարիշտ մար-  
 միններ. քանի քանի անգամ սա անիրաւ որը-  
 տեր միսեցաւ, որք հակառակ արդարութեան  
 կ'իշխէին մեր այս նուիրական երկրի սահմանը  
 ոտնակոխել։ Աղօրմելիններ, դէպ 'ի արշալոյս  
 նայեցէք. Հայոց երկնից առաւօտեան աստղի  
 նայեցէք, նա ձեզ ճանապարհ պիտի բանայ,  
 նա ձեզ պիտի առաջնորդէ 'ի դժոխա, վայ ձեզ  
 յաւիտեան։ Այս, այն պահուն պիտի աղա-  
 ղակէք հեծկոտալով. «Ով զմեղ խաբեց, թէ  
 Հայք վաս են, ով զմեղ դաւեց թէ Հայք  
 կնատ և որդիք վատաց են»։ Այն ժամանակ  
 դուք աշխարհի քարտղ պիտի լինիք, թէ Հայք

դիւցազուն հարց զսւակներ են, զաւակներ, ոքք կարող են ՚ի պահանջել հարկին բանակներ կործանել և գնդեր տապալել:

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՎԱՀԱՄ, ԱՇՈՏ

ԱՇՈՏ

Տէ՛ր սպարապետ, սեղաննե պատրաստուածէ, Հայրապետն ու Վագիրաս, Համօրէն նախարարք և իշխանք անդ այժմս ակմբեալ՝ կըս պասեն միայն ձեր գալստեան:

ՎԱՀՐԱՄ

Լաւ . բայց արիդ Աշոտ, Թշնամւոյն բանակը լրտեսող քաջերն եկա՞ն:

ԱՇՈՏ

Այս, Տէ՛ր:

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ լուր կայ:

ԱՇՈՏ

Յշնամին ամենայն պատրաստութէամբ արեւուն ծագման կըսպասէ, որպէսզի բարանօք և մեքենայիւք կործանէ մոյրաքաղաքին պարփառ:

ՎԱՀՐԱՄ

Փութա՛ ուրեմն , քաջ , պատուիրել մեր յառաջապահ գնդաց , որ կուռ զինուք կազմ ու պատրաստ լինին , որպէսով երբ մարտագուռ պատերազմական փողք հնչեն , յանկարծ յարձակին թշնամի գնդաց վերսոյ :

( Կ Ե Ւ Խ Ի Ւ Խ )

ՏԵՍԱՐԱՆ Գ .

ՎԵՍՏ - ՍԱՐԳ.ԻՍ

ՍԱՐԳ.ԻՍ

Ահա նախարարք և իշխանք կը գումարին . Հսն կը գումարին , ուր Վահրամ հրաւիրած է : Բարեկ , նոքա՝ որ երեկ միմեանց խեթիւ կը հայէին , այսօր ամենայն սիրով կը ժողովին և կաթոգին սիրով միմեանց ձեռնը կը սեղմեն : Ովեղիելիութեանս , երբ կը յիշեմ սոցա միութիւնը , մութ ամալ մի կարծես ճակտիս վերայ կը պատի , և զիս կը ճնշէ . իսկ երբ կը մտածեմ , թէ սոցա միութիւնը ապագային մէջ իմ դիտաւորութեանս կատարման արգելք սիստի լինի , ոհ , իսպառ կը յուսահատիմ : Բայց ի՞նչ կը խօսիմ , ե՞ս յուսահատիմ , ե՞ս , Ոիւնեաց իշխաննս . ոչ , երբէք մողէս կ'անցունեմ այդ բառը : Ոիսցայք դուք , Հայք , Հոդ չէ . բանակ կազմեցիք , հոդ չէ . բայց Ամրգիս՝ արին Ամր-

գիս անդուլ պիտի գործէ , պիտի ջանայ պառակտել ձեր այդ նորոգ հաստատեալ միութիւնը , վերջապէս պիտի ջանայ ամեն ձիութափել , մինչեւ որ իւր ակնկալած փառաց հասնի Այս , պիտի աշխատիմ ամեն կեղծաւորութիւն , ամեն ցածութիւն , ամեն ինչ յանձնառու մինիլ , մինչեւ հասնիմ այն աւուր , այն աւուր՝ որ թագաւոր Հայոց բառելու մեծ բարեբազգութիւնը պիտի ունենամ . այնուհետեւ աշխարհ պիտի աեսնէ դիս բարձր գաղափարներով տուգորեալ մի մեծ մարդ , ոչ թէ լոկ Հայ աստան , այլ ամբողջ Ասիա պիտի խոնարհի արքայական գահուս պատուանդանի : Վ այնուցա , որ պիտի յանդգնին ձեռն ամբառնալ ըստանաչել իշխանութեանս օրինաւորութիւնը . Կրակ պիտի թափեմ , հրհեղեղով պիտի լափեմ նոցա երկիրը , և հուսկ վրէժինդիր բազկաւս շանթահար պիտի գլորեմ . յանդունդս գմոխոց խակ դու , ով Դագիկ , և դու ով Վ ահրամ , եթէ ոչ այսօր , գիտցիք , որ ոչ անագան սուսերահար պիտի իյնաք , վասնվի ակնկալած փառացս խոցնդուտ դուք եղած էք միշտ , և կը մինիք մինչեւ ցարդ : Իսայց ահա Հայրապետնու Վ ահրամ , նախարարք և իշխանք գումարած են . երթամնոցա հետ միանալ , որպէսզի կասկած ըստամ , թէ Ասրդսի սիրան ազգին միութեան փափագող չէ :

( Ա Բ Ի Ա Կ Ի Ա )

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՎԱՀՐԱՄ, ԱՊԻՒԱՏ,  
ՍԱՐԳԻՍ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՔ

### ՊԵՏՐՈՍ

Որդեակը իմ, դուք, որ աստ համախմբեա-  
լով ուխտած էք քիչտ ու արխմն չը խնայել՝ ի  
բարօրութիւն հայրենեաց, վատահութեամք  
կը կրկնեմ, թէ Հայաստանցի երախտագետ  
մատունք խնդագին դիմօք փառաց դամինիք պի-  
տի հիւսեն ձեր ազատ ճակատուց, երբ դուք  
ձեր նահատակութեան ուխտն կատարելապէս  
՚ի գլուխ հանել աշխատիք :

### ԱՊԻՒԱՏ

Ո՞ւր սկարտքն է այս, որ կը կատարեմք, Հայր,  
ազգային փառաց նախանձախնդիք հարազատ  
որդւց մի ակնկալութիւնք սին փառք ու պը-  
ռակը չեն, այլ ապագաց սերնդեան օքհնու-  
թիւնք :

### ՊԵՏՐՈՍ

Այս, հայրենիք ովտի օքհնէ զգեղ, որ-  
դեակը իմ, ըստ որում դուք նորա հտմար մե-  
ռանիւ ուխտած էք : Այս մահը, որդեակը իմ,  
այս մահը անմահութիւն է . այս ճշմարիտ  
փառք մի է, ձեզ Երկինք փառք, իսկ հայրե-  
նիք ձեր վարձքն ովտի լինի :

ՎԱՀՐԱՄ

Ալ հաւատամբ ձեր այդ բանից, ով չայր,  
մեր արիւնը չայսատանցի անապատ և անզգայ  
սրտեր թող արդիւնաւորէ, մեր արեամբ չայր  
աստան թող ստանայ կեանք ու յարութիւն,  
մեր արեամբ փրկեալն չայրենիք զմեզ թողօր  
հնէ. օն արդ ուրեմն, չայր, (բաժակը լեցունեւ  
լը) հաճեցէք այս բաժակը 'ի սէր հայրենեաց  
ըմպել:

ՊԵՏՐՈՍ (Բաժակի յիշեալն)

Ի փրկութիւն չայսատանի կ'ըմպեմ այս  
բաժակը, և կը մաղթեմ, որ Արկինք իւր հո-  
վանաւորութիւնը տարածէ ընդհանուր չայրոց  
վերայ, և աղատէ մեր թշուառ հայրենիքն ա-  
նողորմ թշնամիներէ, և կը խնդրեմ, որ Կոտ-  
ւած բորբոքէ սիրոց հուրը ամեն չայ սրտերու  
մէջ. (խմբը) 'ի կենդանութիւն և 'ի փառս  
ձեր, որդեանկը:

ՎԱՀՐԱՄ

Այդ օրհնութեամբ, չայր, կարծես նոր  
զօրութիւն մի է, որ կ'զգամ, և ծեր երակացս  
մէջ երիտասարդական եռանդուն արիւնս է, որ  
եռալով այս աղաղակը շրթէս թուչել կը տայ,  
ո՛չ սէր քա, չայսատան՞ն :

ՆԱԽԱՐԱՐ (խմբը)

Ի փառս քո, չայսատան՞ն :

## ՊԵՏՐՈՍ

ԵՐՅԱՆԻՄԻՒ օր :

ՍԱՐԳԻՍ (յանիալու գալով)

ԸՆԿՐԱՊԱՐՄԻ օր :

## ԱՊԻՐԱՏ

Դուք, Հայր, դուք, Տէ՛ր սպարապետ,  
և դուք, քաջ իշխանիք, կը յիշէք անշուշտ այն  
օրը, այն նույրական օրը, երբ Ոկիւթք եւ  
Պարսք և այլ հիւսիւսային խուժադուժ աղզք  
սրով և հրով արձակ համարձակ յառաջ քալե-  
լով՝ արեամբ կը լուսային զայտաստան : Կը յի-  
շէ՛ք, երբ Հայք առ հասարակ թշնամեաց կա-  
տաղութենէն սարսափահար՝ վոխանակ քաջու-  
թեամբ նացա գիմագրելու վախիստ եղջերուաց  
նման լեզապատառ կը վասխչէին ապաստանիլ  
լերանց խորչերու և ծմակներու մէջ, ահա մի  
հայկական գնդաւ յանկարծ երեւեցաւ ՚ի մի  
ձեռին դրօշ և ՚ի միւսումսուր այն արին, զոր  
երբեմն Հայտաստան մերժած էր ու հալածած :

## ՎԱՀՐԱՄ

Դիւցազուն Հայ մի էր :

## ԱՊԻՐԱՏ

Վակերախտն Հայտաստան զնա մերժած էր :  
Ծայց իւր այս ներդաղմիտ օրդին՝ իւր աքսորա-  
նաց վայրէն լսելով թշնամւայն յարձակումը՝ իւր  
քաջնատիր հաւատարիմ սպայից հետ ՚ի ձի աշ-

տանակեալ իւր աքսորանաց վայրէն արծու ինման  
ահա սրացաւ , և “ Աստուած ընդ մեզ , որդիք  
Մասեաց , որդիք քաջաց ” գուալով՝ վառեց  
վհատեալ սրտեր . և ինքն անդ ՚ի խոտն թրշ  
նամւցն “ Հայաստան , վասն քո մեռանիմ ” .  
գոչելով՝ անկառ : “ Դուք , նորա նահաակու  
թեանց և արութեանց համբաւը լսեցիք , բայց  
ոչ նորա այն հայրէնասիրակոն նուագը՝ զօր եր  
գեց իւր հրամեշտի վերջին օրը : “ Դուք , արի  
զինւորք , դուք , որ նորա այն նուագն ուսաւ  
նելով , քանի քանի պատերազմաց մէջ նոյնը  
երգեցիք , դուք , որ այն նուագաւն քանի քա  
նի սրտեր վառեցիք , օն , երգեցէք :

( ՚ի խորոց պետականի կ'երգեն զննորք : )

## ՆՈՒԱԳ

Ո՞վ , խանդ ահա յիս բորբոքի , խանդ հայրենեան ,  
Որ հայրենեաց ՚ի սէր վառէ զիմ սիրտ Հայկեան .  
Եւ նոր իմն արդ յիս արծարծեալ խրախոց այսօր .  
Հրաւէր կարդաց այս իմ սրտի հրբատոշոր :

Սրանալ ՚ի Հայաստան ,  
Ողջունել զնայաստան :

Ո՞հ , քանի յոյժ , քանի գառն է ՚նդ օտար երկնիւք ,  
Ընչել ծծել հետ պանդխտին կենուառիթ սիւք .  
Երգնում այժմիկ , երգնում յարեւ մեր վեհ քաջաց ,  
Այք գոհութեամբ մեռան ՚ի փառո Հայրենեաց :

Երթալ ՚ի Հայաստան ,  
Համբուրել զնայաստան :

Ուստի ահա ևս նիստ ՚ի ձի սրտիւ աղատ ,  
Հայք , ձեզ միայն , ձեզ որսամբ բաց ՚ի ճակատ ,

Այս լոկ ձեզ, որտի հասոք եղբարքը պանդուխտ,  
Բարեաւ կացջիք, զի անձկայրեաց այս է իմ ուխտ :

Վաղել՝ ի չայաստան,  
Գրկել ո՞հ, զչայաստան :

Ուխտ, զօր ուխտեաց անձն իմ և սիրտ, հետ և թըշուառ,  
Մինչ ընդ եղբարսդ եր իմ կենցաղ լալեացդ ՚ի վայր .  
Յուշ ձեզ, եղբարք, զօր երգեի եռ ընդ ձեզ միշտ,  
Անկարեկիր մի կալընդ մեր համազգեաց վիշտ :

Այլ գնալ՝ ի չայաստան,  
Բափոփել զչայաստան :

Ուստի երթամ, զի հայրենեան այրէ զիս հուր,  
Մեր հայրենեաց զաւերակօք փարիլ արխուր .  
Գընամ այսօք, ո՞հ, զիմցօղել զառքեալ շրթունք  
Աղենաբուզիս 'ի մեր վըճիտ աղբերց յակունս :

Անդ երգել զչայաստան,  
Անդ օրհնել զչայաստան :

Գնամ յօյս ՚ի սիրտ, համբոյր ձօնել կարօտագին  
Ցուրտ սափորաց՝ ուր քաջ հարց մեր աճիւնք հանդչին .  
Ո՛ տայր հիփիս, զի այս աւելւն սրտատուչոր  
Զնոյն առներ, զնոյն տզբեր 'ի ձեզ այսօք :

Թռշիլ՝ ի չայաստան,  
Թաղիլ՝ ի չայաստան :

Ով, յնծագին յայնժամ թռեայց 'ի չայաստան,  
Եւ կաթոգին արձակեցից ընդ ձեզ զայս բան .  
“Ով հայրենիք, սրգիթ քո եմք, սրգիթ նժդեհ ,  
Ուրբ 'ի հեռուստ լալով սրացան գետ 'ի յայս գեհ :

Զքեզ գրկել չայաստան,  
Զքեւ փարիլ չայաստան :

Իսկ սոք ձիօյս երբ կոխեցեն ըղհարց մեր հող,  
Ուխտեմ այժմէն, անկեալ պագից եռ աչք 'ի ցող  
Զերկիր մեր հարց, զերկիր ուր հազբու անկան մեռան  
Երկնի առեալ օրհնութեան փառ ու յերկնս թըս ան :

Գոշելով, “չայաստան” ,  
Օրհնեալ լեր յաւիտեան :

Իսկ թէ անդ ոք վաս և օսար 'ի հարցն իմ հող  
Մահ ըսպառնալ ժըսպրհեցի աղդել յիս դող ,

“Դնձ ասու, անմիտ, որստացից անդէն տնահ, ,

Վասն հայրենեաց ազատութեան միշտ քաղցր է մահ:

Զի մեռանիլ միայն

Եկի ՚ի Հայաստան, :

Եւ մեռայց գոհ . . . այլ չեւ աշկունիքն իմ կափուցեալ,  
Կողկողագին զիմ արիւնոս բաղուկ պարզեալ,  
Ուրախութեամբ արձակեցից զայս սրտի ձայն.

“Ես մեռանիմ յօժարութեամբ քո վասն միայն,

Ո՞վ Հայաստան, ո՞վ Հայաստան,  
Եսիսահարցն իմ փառոց տապան, :

### ԱՊԻՐԱՏ

Վա մեռաւ, բայց Հայաստան նորա այս  
նոռագի վերայ այս տողերը միայն յաւելլուց .  
Երգեցէք:

Առաջ արին, երիւլարին ահա անդէն մորակ ՚ի կուշտ,

Սրացաւ թռաւ վասն հայրենեաց զոհիլ անշուշտ,

Ո՞վ, մեռաւ նա, Հայաստանեայց այն եղեւ քաջ նահատակ,

Այլ յիւր ՚ի գլուխ անմահութեան նա ընկալաւ փառաց սլըսակէ  
Քանզի այս ետ մեղ յոյս  
Փրկիչ մեր Տէր Յիտու:

### ՊԵՏՐՈՍ

Որտաշարժ նոռագ:

### ԱՊԻՐԱՏ

Վայպէս, նա չարեաց փոխան իւր հայրենեաց բարիք հատուցանելով՝ մեռաւ . բայաւ Հայաստան իւր այս զաւակը, բանզի քաջ իմացաւ, որ յանիրաւի դատապարտած էր զնա յոյրսորս: Ուստի ո՞վ քաջը, և մեր ամեն խէթ ու քէն առ ոչինչ համարելով՝ մեռանիմք վասն հայրենեաց, գիտելով՝ որ Երկինք և հայրենիք մեղ

վարձահատոցց են . օն , և դուք , արի զինւորք ,  
ըմպեցէք այդ բաժակները :

ԶԻՆԻՈՐՔ (ԽՄԵԼՐՎ)

Ի փա՛ռս քո , Հայտատա՞ն :

ԶԱՅՆՔ ՚ի խորոց պեսլարանին

Փութացէք , օն , Յայնք դրօշնին բացած  
յարձակեցան մեր յառաջապահ գնդին վերայ :

### ՎԱՀՐԱՄ

Յայնք կը յառաջանա՞ն . օն , Եղբարք , յա-  
ռաջ . ժամէ արդ գիւցազնաբար կռուելով՝  
փառաց արժանանալ . (Վաղելվ) կացէք , վատոր-  
դի Շիւզանդեան եզկելի զաւակէք . քայլ մի ևս  
մի իշխէք առնուլ , քանզի Վահրամ , սոսկալին  
Վահրամ , զձեղ դիաթաւալ յերկիր պիտի  
գլորէ : Թշուանոք , դէպ յառաւօտեան աստ-  
ղը նայեցէք , դէպ ՚ի արշալցս նայեցէք , և ձեր  
ճակատագիրը հոն կարդացէք :

(ԿԸ ԹԵՒԻՆ)

### ՊԵՏՐԱՄ

Ողջն քեզ , ով Հայատան , մի դու հայիր  
ալ այսուհետեւ յուսահատ աջօք Ռարատայ  
բարձր արտեւանէն , այլ բերկրութեամբ տես  
զաւակացդ անձնանուէր նահատակութիւնքն  
որ ՚ի Շիրակ , և գիտցիք՝ որ Շարձրելոյն ամեւ  
նազօր աջն հովանի է միշտ քո վերայ , և շրթու-  
զուր երբէք զբեզ անխնամ և լը բեալ :

(ԿԸ ԹԵՒԻՆ)

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ

Հայոց քաջեր, թշնամին ահա կը քալէ, գիւղազն Հայեր, թշնամւոյն սուրն ահա կը փայլատակի. օն արդ, առէ՛ք ուրեմն ձեր զըրահները, առէ՛ք ձեր վահանները, վառեցէ՛ք կուռ զինուք. կախեցէ՛ք ձեր ուսուբէն մահահոտ սլաքօք լի ձեր կասպարձները, առէ՛ք ձեր նետերը, վաղեցէ՛ք, վաղեցէ՛ք աներկիւղ Ծիրակայ սա ընդարձակ դաշտի մէջ. ամբարձէ՛ք ձեր յաղթ բաղսւկները, թուր շողացուցէ՛ք, տէգ արձակեցէ՛ք, լարեցէ՛ք ձեր նետերը, նշան առէ՛ք, շետակի ուղղեցէ՛ք ձեր մահագոյժ սլաքները, և չարաչար սատակեցէ՛ք այն թշնամի բանակը, որ ժապհեցաւ յանիրաւի ձեր հարցսուրբ շիրիմները կոխկրտել: (Կ'ն, ով քաջք, յարձակեցէ՛ք, արծւոյ նման խոյացէ՛ք թշնամւոյն վերայ, և ուսուցէ՛ք նոցա՝ թէ Հայք քաջհարց ընտիր զաւակներ են, ուսուցէ՛ք նոցա, թէ ՚ի պաշտպանութիւն հայրենեաց արիւն թափելն Հայոց համար միշտ քաղցր է: Ի այց ով սրաննչելեացս, տեսէ՛ք, Յոյն բանակը կը ցրուի, Հայուն զօրութեան առջեւ ահա Յունաստան կը խոնարհի. այն գուռող Յունաստանցիք՝ որք երբեմն յոխորտանօք կը գուռային Հայաստանեայց վերայ, տեսէ՛ք, այժմն ծունդ ՚ի գե-

տին լալագին գթութիւնն կը հայցեն։ Ձեզ  
գթութիւնն, ով անդութք, ձեզ, որ դայաս-  
տանցիս քանի քանի անդամ անխնայ ջարդեցիք,  
ձեզ, որ այս շեն աշխարհը ամայի անապատ մի  
դարձուցիք։ Ով անմիտք, ով ասաց ձեզ, թէ  
վաղեցիք ՚ի չայս. ինչպէս յանդգնեցայ.ք անցա-  
նելայն սահմանեն, զոր դարք այս երկու աղ-  
գաց մէջ սահմանած են։ Դուք մահուան ար-  
ժանի անօրէններ էք, վասնզի արդարութեան  
թշնամի ժողովլդեան մի վաւակներ էք, վասնզի  
նենգութեան ու խաբէութեան որդիներ էք։  
Խարդամնք, մինչեւ ցայսօր բաւէ, որ տառա-  
ղեցուցիք զմեզ, զանազան ստապատիր բանիւք  
դաւեցիք զմեզ, և մոլեռանդ կրօնական յար-  
ձակմամբ շատ չորչարեցիք զմեզ։ Դուք, վատք,  
դուք, որ այսօր լըբաբար կը յանդգնիք խաւա-  
րել չայ աղդայնութեան այն լոյսը, որ մեր ա-  
զատ լերանց վերայ դեռ կը փափիք, դուք պի-  
տի պատժուիք, վասնզի Ա ահրամ, Ա ահրամ  
և չայաստան այսօր ձեր արեւը՝ ձեր կենաց  
լոյսը պիտի մարեն։ (Օ՞ն ուրեմն, երթամ, եր-  
թամ հոն՝ ուր թշնամին դեռ հզօր կ'երեւի։

(ԿԸ ՁԵՆԻ)

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԺՈՂԻԿՈՍ, ԵՄՐԱՆ

**ՊԵՏՐՈՍ (Հողակլանի մի վերայ ՚ի ծռոնը)**

Ո՞ր հսկեսդ անքուն ակամբ ՚ի բարձրութեանէ երկնից ՚ի գաշտավոյրա յայս, ամենական Տէր, հայեաց քաղցրութեամբ ՚ի բանակ մեր Հայկական, որ ՚ի սպաշտականութիւն իւր արդար իրաւանց մզի այժմիկ ՚ի վտանգս, և ձեռն օդնականութեան կարկառեալ զօրացն զնոսա և բարձրացն յաւխտեանո:

( Հ ’Ե Ա Յ Ե )

## ԵՄՐԱՆ

Հայր, տե՛ս, որպիսի քաջութեամբ կը յարձակին Հայ զինւորք :

ՊԵՏՐՈՍ

Քաջութերուեցէք, քաջութերուեցէք, որ գեանիք իսբ:

## ԵՄՐԱՆ

Տէս, Հայ զաւակունքն ՚ի վիճ հայրենեացն աղաղակելով՝ որպիսի արեան գետեր կը հաեցունեն :

ՊԵՏՐՈՍ

Օրհնութիւն, օրհնութիւն ՚ի գլուխս Հայոց :



## ԵՄՐԱՆ

Թաշնամին կը շփոթի , դունդագունդ կը փախչին . տե՛ս , Վահրամ քանի քանի յաղթ մարմիններ յերկիր կը կործանէ :

## ՊԵՏՐՈՍ

Երանի , բիւր երանի :

## ԵՄՐԱՆ

Բայց ալ կարող չեն փախչիլ , վասնպի մեծն Ապիրատ թշնամեաց առաջքն առաւ , տե՛ս , աստի Ապիրատ յետուստ Վահրամ անխնայ կը ջարդեն , տե՛ս , Հայր , ահա Յօյնք ՚ի գետն կը նետուին . լոլեաց ճիշեր կը բարձրանան անտի , ոհ , ջրասոց կը կորնչին :

## ՊԵՏՐՈՍ

Ո՞հ , այս է ուրեմն մահկանացուաց վախճանը . եղուկ . . . :

## ԵՄՐԱՆ

Տե՛ս , Հայր , Այսուրեան դետը ինչպէս կարմրացեալ կը հոսի . Հայր , յաղթութիւնը մեր կ'երեւի :

## ՊԵՏՐՈՍ

Յաղթութիւն Հայոց , պարասութիւն եւ կործանում Յունաց :

## ԵՄՐԱՆ

Առիւծն Վահրամ սուր ՚ի ձեռին ինչպէս որոտագին կը գոռայ . Հարեր անխնայ , հարեր , Հայր , մի երկնչեր ՞ :



## ՊԵՏՐՈՍ

Դժութիւն, Քրիստոնեայք են, եղածը  
են:

## ԵՄՐԱՆ

Բայց ափառա, Կպիրատ ընկաւ . . . :

## ՊԵՏՐՈՍ

Երկինք, գլխա՞ծ Երկինք:

## ԵՄՐԱՆ

Փա՛ռք Երկինից, ելաւ. տե՛ս, Վահրամ աշա  
հա Յունական զօրուն զօրապետ կոստանդինի  
կը հասնի: Հայր, եկ, սա հողաբլին վերսց  
ել, որպէսզի լաւ դիտես:

( Ել Ալինին )

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ուր եմ, աւանդ, մահուան դաշտի մի մէջ.  
անպիտա՞ն զինւոքք, այդովե՛ս անպաշտպան  
թողով զիս՝ զօրապետս ձեր, կը փախչիք. այդ  
է ձեր խոստումն ու երդումը: Կայսեր անհաւ-  
ատարինմ զինւոքք, ուր կը փախչիք. Յունաս-  
տան պիտի խայտառակիէ զձեզ, պիտի պատմէ

զձեղ, վասնզի պատերազմի այս դաշտի մէջ լը-  
քեալ թողուցիք քաջն կոստանդին՝ յաղթող զօ-  
րավարն Արաբաց : Դու, անիծեալդ. Աարգիս,  
դու զիայրն խաբեցիր, դու դաւեցիր գիշու-  
նաստան, թէ Հայք անարի են, դու զմեղ գըր-  
գուեցիր գալ պաշարել զ[նի.] կայսրութիւնը  
արիւնս պիտի խնդրէ քենէ : Դրուժա՞ն, արեդ  
պիտի մարի քիչ ժամանակէն, վասնզի դու շա-  
տերու արեւ մարեցիր այսօր . . . սակայն 'ի  
նանիր է խմ աստանօր դեգերիւ, 'ի նանիր ցա-  
ւալի աղաղակօք դեռ աստ և անդ կը թափա-  
ռիմ. գթութիւն, որո՞ւ հոգ . խուլեն զինւորք,  
խուլ և ինքն խակ Երկինք . փախչիմ, փախչիմ  
շուտով այս արհաւրաց վայրէն . փախչիմ սա  
կողմէն՝ ուր թշնամին տկար կ'երեւի . . . :

## ՏԵՍԱՐԱԿ Բ.

ՍԱՐԳԻՍ, ԿՈՍՏԱՆԴԻՆ

### ՍԱՐԳԻՍ

Լաց, կոստանդին, կաց, ես եմ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Երկինք, ովէ արդեօք :

### ՍԱՐԳԻՍ

Ոիւնեաց իշխան վ եստ Աարգիսն եմ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Դուք, դրուժան, դուք:

ՍԱՐԳԻՍ

Ե՞ս դրուժան:

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Այն դուք, դուք, որ խաբեցիք և գաւեցիք.  
զիս, թէ Հայք անմիաբան ու պառակտեալ են:

ՍԱՐԳԻՍ

Կը խաբիք, Տէր, կը խաբիք. յաղթողէ  
կայսրութիւնը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Յաղթող կայսրութիւնը. խարդախ, յաղ-  
թող կարելի եր լինել, երբ Հայք ըստ քո բա-  
նից երկպատակ ու անմիաբան լինէին, իսկ այ-  
սուհետեւ մեզ յաջողութիւն յուսալ, արդա-  
րեւ մեծ յիմարութիւն:

ՍԱՐԳԻՍ

Կեկն կ'առեմ, յուսամ միշտ, թէ կայսրու-  
թիւնը յաղթողէ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Յուսալ. դիւրին դու կը կարծես այս  
պիսի ահագին բանակի մի յաղթելը:

ՍԱՐԳԻՍ

Երբ Ակնեաց իշխանի խօսից քաջ մտադիք  
լինիք, յաղթողէր, և կայսրութիւնը պիտի յագ-

Թէ այն ժամանակ՝ Երբ ինձ իշխանիս Այւնեաց  
ունկնդիր կը լինի :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

ՎՎ կատաղութեանս . քե՞զ :

ՍԱՐԳԻՍ

Այ՞ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Խաբեքայ, Համոզեցիր զմեզ Թէ Անհ  
տէր ու անպաշտպան լինելու՝ առաջին յարձակ  
մամբ անձնատուր կը լինի, և ահա այսօր ոչ  
Թէ առաջին ու երկրորդ՝ այլ եօթնիցս յարձակ  
մամբ դեռ նա անառիկ է :

ՍԱՐԳԻՍ

Վ ասնզի ձեր խոստումը . . . :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Լ սէ՛ . Համոզեցիր զմեզ Թէ Հայք անմի  
ութեամբ արդէն զիրար կը կործանեն, ուստի  
պատեհ ժամանակ է Անիի առման Համար ՚ի  
Հայաստան արշաւելը :

ՍԱՐԳԻՍ

Պատեհ ժամանակ էր, բայց ձեր խոստու-  
մը . . . :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ի՞նչ պատեհ առիթ էր այդ, Երբ Հայք  
այսպիսի միահամուռ յարձակմամբ մեզ դիմա-  
կալել ահա կարող են :

## ՍԱՐԳԻՍ

Կորուսիք ժամանակը. Հայոց Երկպառակութեամբն անաշխատ պիտի տիրանայիք Անոյ,  
Բայց . . . :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ի՞նչ Երկպառակութիւն է այդ, որոյ արդիւնքն հազարաւոր ու բիւրաւոր քաջք մի աւուր մէջ գումարել, և մեր դէմ ճակատել կը մնի:

## ՍԱՐԳԻՍ

Իշխան, կարող էիք յաղթել, բայց . . . :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Խօսէ՛, շարունակէ՛:

## ՍԱՐԳԻՍ

Կայսրը իւր խոստումը ուշացուց:

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ի՞նչ խոստում էր այդ:

## ՍԱՐԳԻՍ

Դիմէք անշուշտ:

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ի՞նչ:

## ՍԱՐԳԻՍ

Ուա՞գ:

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ապուշ պիտի համարէի զիսյարն, եթէ այդ իւր խոստումը գործադրէր:



## ՍԱՐԳԻՍ

Ինչո՞ւ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Վասնզի անշուշտ եմ, որ պիտի խարդաւանէիր :

## ՍԱՐԳԻՍ

Ի՞նչպէս :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ո՞ք օգնութեամբ նախ թագաւորելով՝ ապա զմեղ պիտի նշկահէիր. այնպէս չէ, իշխան, կը կարմրիս :

## ՍԱՐԳԻՍ

Կը սիսալիք, անկեղծ է հաւատարմութիւնաւոս

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Եթէ անկեղծ էր հաւատարմութիւնդ, նախ պարտ էր քեզ Անին կայսեր յանձնելու համար աշխատիլ, և ապա մեր ձեռամբ թագաւորել :

## ՍԱՐԳԻՍ

Հաւատարմութիւն

ԿՈՍՏԱՆԴԻՆ


Ինչո՞ւ չէ :

## ՍԱՐԳԻՍ

Ես զանձնես ապուշ պիտի համարէի, եթէ այդ պայմանաւ Անւոյ դռները բանայի :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Կը զարմանամ . . . :



## ՍԱՐԳԻՍ

Եշան . երբ Անւոյ տիրապետէք , և ձեր  
խոստումը՝ ի գործ չը դնէք , ըստ՝ , ի՞նչ կարող  
եմ ընել այնուհետեւ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Բողոքել :

## ՍԱՐԳԻՍ

Ո՞ւմ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Եղեի :

## ՍԱՐԳԻՍ

Եղեիս . երեսս պիտի թքնէ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Բողոքէ այլազգեաց և աշխարհի բարբա-  
րոսաց , և կայսրութիւնը արդար բողոքովդ  
խայտառակիէ :

## ՍԱՐԳԻՍ

Պիտի քարշի աշխարհ ինէ , վասնզի մարդկա-  
կանց մէջ ոչ թէ անմտագոյնը պիտի համարուիմ,  
այլեւ ամենէն ամբարշտագոյնը :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ուրեմն պիտի չը համաձայնիմք . . . :

## ՍԱՐԳԻՍ

Եռայժմնէ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Իսկ ասկա՞ :

ԹԵՐԵՇԵԱ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Վ Եսու, կը հասկնամ միտքդ . . . բայց  
գիտցիր, որ եթէ ապրիմ, եթէ այս պատե-  
րազմէն ողջ միանգամեւս Ծիւզանդիս երկնից  
հօրիզոնը տեսնել արժանանամ, վկայ թող լինի  
արեւու, զքեզ պիտի խայտառակեմ, ամբարձ-  
տութիւնդ պիտի չայտնեմ աղդիդ և հայրեն-  
եացդ, վերջապէս . . . :

Եթէ ապրիք, այդ ամենը կարող էք լնել,  
բայց դու մահուան արժանի վատ մի ես, պէտք  
է որ ինչ մեռանիս . . . բայց ոչ. թշնամինե-  
րէդ արդէն պաշարուած ես, պիտի մեռանիս,  
վասնվի Սարգսի բարձրութեան 'ի վաղուց դու  
եւս խոցնդու ես. Յունաստանի մէջ միայն  
զքեզ չը կրցի խաբել . . . մեռիր, ահա գայ  
Վահրամ. . . :

(Ապրիլս կը իսուակ)

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԿՈՍՏԱՆԴԻՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ճշմարիտ խօսեցայ, արդարեւ նենդաւոր  
մի է նա, վաստ նենդաւոր: Վաստ, որ Յու-

նաստան դորս թակարդն ընկած ՚ի նանիր զաւ  
նազան յոյսերու մէջ կը դեգերի . այն , քաջ  
համողուած եմ , որ դա փառասէր միտումներ  
ունի , կը կամի նախ մեր ձեռամբ թագաւու-  
րել և ապա նշկահել : Անմիտ , Յունաստան  
այդպէս քո շողօքորիթ ու կեղծուապատիր խօս-  
քերէն խաբուող չէ . Յունաստանի բաղձանքն  
ինքնիշխան տիրապետելէ Անտոյ , և ոչ թէ նա  
ափի մի ուղիեղ խաբուելով՝ քո թագիդ կը բաղ-  
ձայ : Եթէ այդպիսի փափագ մի ունենար Յու-  
նաստան , իւր ի՞նչ փոյթնէ Ապրգսիդ թագաւու-  
րութիւնը , կը թագաւորեցունէ զԴագիկ , եւ-  
ահա ձեր խոստացած կրկնապատիկը կարող է  
անշուշտ ստանալ Ի՞ագրատունեան տանէն : ՚ի  
նանիր է քո այդ մտածմունք , Ապրգիս . ՚ի նա-  
նիր կը յուսաս , յուսալն իսկ հաւատա զառան-  
ցանք է : Ի՞այց ի՞նչ կը խօսիմ , ահա Ա ահրում ,  
փախչիմ . . . :

## ԶԱՅՆ ՄՒ

Կաց դու , Յոյն կնատ . կաց , վատասիրու-

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Այս ձայնն ում է արդեօք . ո՞հ , կը սար-  
ուիմ , երբ կը խորհիմ , թէ մի գուցէ Վ ահրա-  
մայ ձայնը լինի : Եղուկ , ահա նա ինքն է , որ  
կատաղի բարկութեամբ դէսլ ՚ի աստ կը գայ .  
փախչիմ ուրեմն , բայց ուստաի . աստի Ախու-  
րեան , յետուառ Ապիրատ , տւանիկ և Վ ահ-  
րում , որ հրդեհի մի նման կը լափէ մեր բանակը :

Վւա՞ղ, ահա կը մօտենայ, ահա հրացայտ աչօքն  
ինձ կը նայի, ի՞նձ եղկելւոս : Ովդ գմբաղբու  
թեամա, ի՞նչ ընեմ, մեռանիմ, մեռանիմ առանց  
մշեցա լուծելու այն Արդիս վատ խաբեբայէն,  
որ պիս այս թակարդի մէջ ձգեց : Ո՞հ, կը սոս  
կամ մահուանէ, չեմ ուզեր մեռանիլ. բայց  
ի՞նչ ընեմ, գմութիւն հայցեմ, ուստի, Վահ  
րամէն, այդ գաղանադէմ անգմէն . . . ո՞չ  
Նա փորձուած է, նա չը խնայէր բնաւ և ոչ  
Յունի մի. բայց ի՞նչ օգուտ, փորձեմ միան  
դամ, ոտքն իյնամ, թերեւս արտասուօք կարո  
ղանամ զինքն ամօքել . իսկ եթէ չը գիտայ,  
կ'երդնում ահա Հայոց աշխարհի ՚ի սա արեւ,  
որ Արդսի ամբարշտութիւնը պիտի յայտնեմ,  
պիտի յայտնեմ Վահրամայ՝ թէ Արդիս Հայ  
հայրենեաց մատնիչէ և կործանիչ և աղա թող  
մեռանիմ. . . բայց Երկինք, ահա Վահրամ :

### ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԳԱՀՐԱՄ, ԿՈՍՏԱՆԴԻՆ

ԳԱՀՐԱՄ

Նմամարդի դու, պատրաստուէ մահուան,  
վասնվի կենաց անարժան ես :

ԿՈՍՏԱՆԴԻՆ (կը ծնրէ)

Վաղացէմ, մի սպանաներ անզէն մի. կը

Խոնարհիմզօլութեանդ, կենացս խնայէ. գթութիւն :

ՎԱՀՐԱՄ

Գթութիւն . ինէ գթութիւնյուսալ, մեծ յիմարութիւն : Յոյն դու, գիտցիր, որ ուխտած եմ'ի սուր մաշել ամեն մահկանացու, որ կը յանդգնի անկրաւաբար հարցս շրիմները կովսկրտել :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Տէր իմ, կ'աղաւչեմ, գթա :

ՎԱՀՐԱՄ

Ե՞ս գթամ. ամենեւ ին, երեկը :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ովլ վեհանձն Տէր, գաղտնիք մի ունիմ, զորքեղ յայտնել պատրաստ եմ, եթէ . . . :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ գաղտնիք :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Վատնիչ մի ունիք, սոսկալը մատնիչ :

ՎԱՀՐԱՄ (իսուլած)

Ովլ է այդ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Վեստ Արդիս :

ՎԱՀՐԱՄ

Ովլ Առողուած :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Եա մեղ առաջնորդեց, որպէսզի մեր ձեւ  
ռամբ թագաւորէ :

## ՎԱՀՐԱՄ

Ո՛Լ զայրացմանս :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Տէր, այս գաղտնիք մի էր, զորյայտնեցի,  
կը խնդրեմ, որ խնայէք մեղ :

## ՎԱՀՐԱՄ

Խնայէլ. Եթէ արդարասէր ժողովրդեան  
մի հարազատ զաւակ էիք, ինչու վատի մի բա-  
նից հաւատացիք :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ոլսալեցանք . . . :

## ՎԱՀՐԱՄ

Դուք սլսալեցայք . այդ խակ է յիմարութիւն :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Տէր, նա զմեղ դաւեց, խնայէ՛ մեղ, որ-  
պէսզի մեր ոխն կարողանամք լուծել, երբ ֊ . . . :

## ՎԱՀՐԱՄ

Օ յիս խաբել, ինչ յանդգնութիւն . դուք  
ոսո՞խ Աշրգասի, հաւատալն խակ արդարեւ մէ՛ծ  
անմտութիւն . մեռիր կենաց անարժան ես :

## ԿՈՍՏԱՆԴԻՆ

Վթա՛ :

ՎԱՀՐԱՄ

**ԵՐԵՒՔ :**

ԿՈՍՏԱՆԴԻՆ (յանկարծ ԵԼԵՅՎ)

Եթէ դու մարդ ես, ուրեմն անշուշտ մահուան ենթակայ ես. (ալաք մի արյակելը) 'ի ճակատ անգութ թշնամւոյս :

ՎԱՀՐԱՄ (Բռուր չաշելը)

Եպուշ, առ ուրեմն Հայ բազկի մի արութեան փորձը :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Զգէ՛, ձգէ՛ սուրդ ՚ի գետին, և սարսափեամբ լուր, որ ես կայսերական մեծ բանակի ընդհանուր սպարապետ կոստանդինն եմ:

ՎԱՀՐԱՄ

Դու կոստանդին . այս սուրը, կոստանդին, քո համար պահած էի . տե՛ս մահուանդ դատակնիքն՝ որ այս սրոյս վրայ գրօշմուած կը փայլի . դո՞ւ, կոստանդին, օն, էջ ՚ի դժոխս :

(Քը յարյակի և դոքը կոռուկ մը կոստանդին ի՞նչնայ :

ԿՈՍՏԱՆԴԻՆ

Ո՛հ, զաւակներս . . . :

(Քը մեռանի)

## ՏԵՍԱՐԱՆ ՃԱ.


ՎԱՀՐԱՄ

(Յունակ գույք մատուցութեան առաջին առ հայոց)

ՎԱՀՐԱՄ

Վերջապէս այս մեծ մարդն ալ ընկաւ ,  
 Յունաստանի պատուարն եւմ պարծեցող քաջն  
 ահա արիւնլուսայ փուռւած կայ : Ո՞վ կը հա-  
 ւաստայ , կամ ո՞ւմ մարքէ կ'անցնին թէ կոստանդին  
 այսօր որախովսող պառկած կայ ։ Իրակայ դաշ-  
 տի մէջ : Դուժկան թող երթայ ՚ի Յունաստան,  
 լաց ու ողը թող լսելի լինին Շիւղանդիոնի մէջ ,  
 վասնզի ընկամւ արին կոստանդին : Ավան ,  
 նա ընկաւ , բայց իւր վերջին ձայնն այս եղաւ ,  
 զաւակներա , թշուառակա՞ն , յիշեցիր դու ՞այ-  
 տանի այն թշուառ որդիները , այրիացեալ  
 հարաները , որդեկորոյս մայրերն ու հայրերը ,  
 որք ողարմուկ ձայնիւ դժութիւն կը հայցէին  
 քենէ , իսկ այսօր դու զուակներդ կը յիշես :  
 Թշուառ , շատ լացաւ ՞այտատան , շատ լա-  
 ցին ՞այտատանցի հայրեր , մայրեր ու որդի-  
 ներ . թող լսյ այսուհետեւ Յունաստան , թող  
 լա՞ն Յունաստանցի հայրեր , մայրեր ու որդի-  
 ներ , և թող սովորին թէ որչափ դառն է ար-  
 տասուք թափելը : Այս , լաց դու , Յունաս-  
 տան , ողա՞մ , քանզի կորովի որդիքդ ընկան այ-  
 սօր ։ Իրակայ դաշտի մէջ . ողա՞մ բայց , սար-  
 սափմամբ եւս իմացի՞ր , որ արդարութիւնը  
 երբ ոյժ է ՞այոց , երբ միութիւնը ՞այոց մէջ

կը թագաւորէ , ոչ ոք կարող է յաղթել նոցա :  
 Ավ զարմանացս , տեսէք , ահա Յոյն եղջերու-  
 ներ , վեհերո՞տ իեղջերուներ , որք սարսափած  
 ցանուցիր կը փախչին . այս է ուրեմն Յունաս-  
 տանի զօրութիւնը : Աղօրմելիներ , խրատ թող  
 լինի ձեզ , մի այսուհետեւ թուր վերցունէք  
 արդար ժողովրդոց փայ . սոսկացէք Վրդարու-  
 թեան վրէմինդիր շանթերէն , որք ուշ կամ  
 կանուխ անիրաւ գլուց վերայ կը տեղան : Բայց  
 ահա մեր նախարարք , իշխանիք և ազատք , ահա  
 և Հայրապետն՝ որ ուրախութեամբ յաղթու-  
 թիւն կ'աղաղակիէ . ես ինչո՞ւ ուրեմն այսպէս  
 լուռ ու մունչ կամ . ( յեռա յերինա ) փառքքեզ .  
 Աստուած , փառքքեզ :



### ՏԵՍԱՐԱԿ ՃԲ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ , ՎԱՀՐԱՄ ԵՒ ԱՊԻՐԱՏ

ՊԵՏՐՈՍ

Յաղթութիւն , յաղթութիւն :

ԱՊԻՐԱՏ

ԲԵՐԿՐԱՈՒԹ օր :

ՎԱՀՐԱՄ

Ա.Քանչելի՛ օր :

ՊԵՏՐՈՍ

Յնծութիւն , ալ թողբերկրի Հայաստան ,

վասնզի իւր յաղթաբազուկ իշխանաց չնորհիւ  
ստացաւ յաղթութիւնը . ապրիք դուք , ո՞ ար-  
ժանաւոր զաւակը հայրենեաց . դարուց՝ իդարա  
գուրք պիտի ապրիք , զի այս աւուր յիշատակը  
անջնջելի պիտի մնայ ։ այ յետագայ սերնդեան  
սրտերու մէջ : Վկ արի զաւակը իմ , ծն , բա-  
ցէք յաղթական դրօշն հայութեան . թող տես-  
նէ մայրն ։ այստան իւր ազատութեան դը-  
րօշն ծածանիլը , և գովաստանական ձայնիւ թող  
փառաբանէ ձեր անմահ անունները :

### ՎԱՀՐԱՄ

։ այր հայրենեաց , ահա ստացաւ հայրե-  
նիք իւր կատարեալ յաղթութիւնը . կայ և մնայ  
մեզ արդ պատրաստել ։ այստանեաց տպա-  
գայ անդորրութիւնը , երթանիք յէնի , և հոն  
կաթողիկէ եկեղեցւոյ մէջ նախ Եստուծոյ եր-  
կրպագելով՝ տպա խորհիմք ազգին ասլագայ վե-  
ճակին վերայ :

### ՊԵՏՐՈՍ


Եյո , երթանիք , սուլէ ժամանակն . ժամ  
յառաջ ազգին ապառնի բարօրութիւնն աւ  
պատրաստեմք , որպէսզի մէր յաղթական փա-  
ռաց պսակն կատարեալ ըլլայ :

( Կ Բ Ի Ն Ի )



## ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

ՅԱՆԻ , յապարանս Սարգսի : Դահլշին որմոց վերայ ՚ի  
կախ կ'երեւին Անւոյ գրանց բանալիներն ու Բագրատու-  
նեան թագաւորաց զինանշանները : Յանդիման ասղարանին  
արքունի ղօրաց ձմերոցն է :



## ՏԵՍԱՐԱԿ Ա.

ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ

### ՍԱՐԳԻՍ

ԵՂՅԻԿ , ահա ժողովուրդն է , որ գեռ  
յաղթական աօն կը կատարէ , այս , ժողովուրդն  
է , որ միշտ ուրախութեամբ կը յիշէ յաղթաղ  
զօրաց յէնի մակց շքեղ հանդեսը . եզրւկ , ա-  
հա նյոն չարափառ ծերն է , որ միշտ իւր ձեռ-  
նը դէպ ՚ի յերկինս վերուցած , իմ ամեն ջանից ու  
ճգանց հակառակ՝ կը քարոզէ ժողովդեան յու-  
սալ , յուսան և սպասել բարեբաստիկ աւուրց .  
այս , միայն այն աւուրց , յարս Գագիկ՝ աքայ  
Հայոց սպակեալ , կառավարութեան զէկը իւր  
ձեռնը առած՝ պիսոի բարօրէ զՀայաստան : Ա-  
ւանդ , սարառելով արտարեւ կը յիշեմ այն օքք ,  
յօր այս անզգամ ծերը Հայ բանակի մի առաջ-  
նորդ հանդիսացած , թշնամի շեղաշեղը դիա-  
կաց վրայ կտիկառելով՝ կարողացաւ յաղթու-

թիւն գոռալ։ Այս, յաղթեցիր դու, չարա-  
սիրս ծեր, յաղթեցիք դուք, Հայք, բայց ոչ  
Աղատ Աարդսի. դեռ Աարդիս պիտի պատե-  
րազմի ծեր դէմ, մինչեւ որ բոլորէք թագա-  
ւորական թագը նորա փառահեղ գլուխը։ Աը  
խոստովանիմ, սեփականութիւնս չէ այդ, բայց  
հայրենեաց օգուտն կը սպահանջէ թագաւոր  
մի ունենալ, թագաւոր հզօր, թագաւոր խմա-  
տուն, և ոչ վեշտասանամեաց թեթեւ պատա-  
նի մի, անմիտ մի։

Դուեցէք դուք, խելացնոր խմաստակք, Ա-  
ռեցէք, խաբեբայ փիլսոփայք, հաղարաւոր  
տարիէ ՚ի վեր դուք զաշսարհ խաբեցիք, ժա-  
ռանգութիւնը դուք օրինաւորութիւն քարո-  
զեցիք, և համոզեցիք զմարդիկ՝ թէ ժառան-  
գորդի մի իրաւունքն յափշտակեն՝ ամբարձ-  
տութիւն է։ Վէ, անմիտք, արդարութիւն չէ  
ընաւ ընդհանրութեան արեամբն ու քրտամբ  
գնեալ իրաւունք մի թագ մի որդւոց որդի ժա-  
ռանգական ստացուածք լինել. Երկնային պար-  
գեւ մի է այն, որ միայն արժանաւոր գլուխ-  
ներ կրնայ հանգչիլ։ Դուք, մոլար քարտվեչք  
աշխարհի, դուք, արքայից և բռնակալ պետաց  
հաճոյ լինելու. համար, գիտէք, մարդկանց ի՞նչ  
քարոզեցիք. — աշխարհիս ունայնութիւնը. որ-  
պէսզի մարդիկ աշխարհիս վայելից ու փառաց  
վերայ պաղ ակնարկօք նայելով՝ աբքայք և պետք  
ըստ հաճոյս իւրեանց ամեն ինչ գործեն, ամեն  
ինչ անօրինեն։ Վէ. խաբեբայք, աշխարհոս ու-

նայն չէ . աշխարհիս բարիքն վայելելու համար  
սահմանուած էակ մի է մարդս : Աշխարհիս ու-  
նայնութիւնը , գնացէ՛ք , ողորմն՝ կ խելառք , այն  
անմտաց քարոզեցէ՛ք , որք խխունջի նման ծեր-  
պերու և ծմաներու մէջ կծկուած՝ սինլքոր ու-  
աննշան կեանք մի կը վարեն : Հս պիտի բար-  
ձրանամ , ես պիտի թագաւորեմ , վասնզի աշ-  
խարհիս ունայնութիւնը չեմ ճանչեր , վասնզի  
հզօր եմ , հզօր և զօրաւոր :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱԲԱՍ ԵՒ ՎԵՍ

ԱԲԱՍ

Եթէ հզօր՝ ուրեմն թագաւոր էք :

ՍԱՐԳԻՍ

Դմէք էք , քաջ :

ԱԲԱՍ

Այս ես եմ . ես՝ որ ձեր թագաւորութեան  
աւուր յանշափա կը բաղձամ :

ՍԱՐԳԻՍ

Այս աւուր արդէն հասած եմք :

ԱԲԱՍ

Հաւատա՞մ :

ՍԱՐԳԻՍ

Հաւատա՞մ . վասնզի մեր հակառակորդաց

պրեթէ ամենն ալ սարսափահար յուսահատած  
կան, քանի որ աշխարհ մեղ կուսակից կը տես-  
նեն :

## ԱԲԱՍ

Իսկ նախարարքն ու իշխաններ :

## ՍԱՐԳԻՍ

Բաց ՚ի մի քանի Պահլաւ իշխանաց՝ միւս  
ամենն ալ մեղ համամիտ են :

## ԱԲԱՍ

Արդարեւ հրաշք է այդ :

## ՍԱՐԳԻՍ

Այս, աղատ Արդգսի թեւ ու թիկունք քա-  
նի որ քաջն ՚Երենիկէ, յաղթողէ միշտ Արդիա:

## ԱԲԱՍ

Իշխանաց արդի երկպառակութիւնը մեր  
յաջողութեան կարապետն է :

## ՍԱՐԳԻՍ

Եւ այդ երկպառակութիւնը քաջն ՚Երեն-  
կայ հնարիմաց խորագիտութեան արդիւնքն է,  
արդիւնք մի՛ որ թերեւս այսօր կամ վաղիւ-  
քաղեմք :

## ԱԲԱՍ

Բայց Յունաստան եթէ կոստանդինի մահ-  
ուան վրէմը խնդրէ, յայնժամ ի՞նչ սկսի ը-  
նէք :

## ՍԱՐԳԻՍ

Պաղ ժպիտով մի պիտի քամահրեմ կայս  
ըռութիւնը :

## ԱԲԱՍ

Բայց . . . :

## ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ, այսուհետեւ Յունաց յուսալ . . .  
Երբէք : Հայոց զօրութեամք Հայոց վրայ ինք-  
նիշնան պիտի թագաւորեմ: Բայց դու առայ-  
ժըմ գնա՛ շուտ կոչել զԴերենիկ, նաեւ տեղեւ-  
կացիր, թէ Դուրգէն Գագկայ սպանութեան  
համար մեր խորհածն կատարել յաջողա՞ծ է:

(Աբաս կը մէնի)

## ՏԵՍԱԲԱՆ Գ.

## ՍԱՐԳԻՍ

## ՍԱՐԳԻՍ

Թող գայ այդ հանձարեղ մեծ մարդը, վա-  
սրնպի իւր հանձարսն բարձր զօրութիւնն ա-  
մեն դժուարութիւններ կարող է դիւրել: Ով  
Դերենիկ, խորագէտ իմաստութեանդ վրայ կը  
զարմանամ միշտ: Դերենիկ, կը խոստովանիմ, թէ  
խորամանկութեանդ շնորհիւն է նախարարաց  
մէջտիրած այժմու երկպառակութիւնը: Աակայն  
և դու եւս պիտի հիսնաս իմ մեծ հնարագէտ  
ճարտարութեանս վերայ, որով կարող եղայ կեղ-  
ծաւոր ընթացիւքս՝ իւր միակ պաշտպան մայրա-

քաղաքիս՝ միքանի աւուր մէջ Անուոյ սա բանալեաց տէր լինել. (Բանալեաց պըսակները խառնելով) ահաւասիկ Օազգկոյի դրան, ահա Արեւելեան ու Արեւմտեան դրանց բանալիները. ով, ինչպէս ըլցնծամ, երբ կը մտածեմ, թէ այս բանալեաց շնորհիւ օր մը յանկարծ քաղաքիսդաները փակելով սկսի կարողանամ դանձնը Թագաւոր հոչակել աշխարհի։ Իսկ սա զինանշոնաց համար ինչպէս ըլխայտամ, երբ այժմէն խակ այսպէս տէր եմ եղած ոչ թէ մի այն թագաւորական գանձուն՝ այլեւ տէրութեան բովանդակ զինուց՝ զրահուց և դարդուց։ Ուրեմն ալ այսուհետեւ ինչ կը մնայ ինձ. — միսյն մի աստիճան, աստիճան թագաւորութեան. սակայն այդ եւս իմ համար ալ դիւրացած է, վասնզի հերիք է, որ միանդամ թագաւորական գահուն աստիճանի վրայ ոտքը դնեմ. ալ այնուհետեւ աշխարհ խոնարհեալ սկսի հպատակի, և իւր հնազմնդութեան խոնարհ յարգանքը խոնարհութեամբ ողիսի մատուցանէ իմ հզօր զօրութեան։

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԴԵԲԵՆԻԿ, ՍԱՐԳԻՍ

ԴԵԲԵՆԻԿ

Ոչինչ այդ, Իշխան, ոչինչ Անուոյ բանալեաց ձեր տէր լինել:

## ՍԱՐԳԻՍ

Բայց քաջդ՝ Դերենիկ, ՚ի պահանջել հարակին կարող սկսուի լինիմք քաղաքիս դռները փակել, և թագաւոր Հայոց օծել տալով զանձնս, տիրանալ հայկական միւս ամեն գաւառաց :

## ԱԲԱՍ

Աբ կրկնեմ դարձեալ, թէ այդ ոչինչ է :

## ՍԱՐԳԻՍ

Ինչո՞ւ :

## ԴԵՐԵՆԻԿ

Եթէ նախարարը ուղեն, երբ լինի կարող են մերժել ձեր թագին օրինաւորութիւնը :

## ՍԱՐԳԻՍ

Բայց Անւոյ արքունական բանակին հրամանատարութեամբս կրնամ զապել այնու հետեւ որ և իցէ ազստամբական ցոյցեր :

## ԴԵՐԵՆԻԿ

Դիւրին գործ չէ այդ :

## ՍԱՐԳԻՍ

Ասկայն բայց յայսմանէ ուրիշ ի՞նչ կը մը նայ մեզ ընել :

## ԴԵՐԵՆԻԿ

Իշխանութեանդ հաստատութիւնը պարագ նախարարաց ձայնիւ միայն լինել :

## ՍԱՐԳԻՍ

Իսկ այդ ի՞նչպէս կարող եմք ընել :

ԴԵՐԵՆԻԿ

Համոզել և խոստանալ :

ՍԱՐԳԻՍ

Եթէ մերժեն ամեն խոստում . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Եղա արդի անմիտւթիւնը ամեն ինչ կը  
դիւրացունէ , արդէն որա համար էր ; որ նա  
խարարաց մէջ անմիտւթեան որոմ ցանեցի , ուս  
տի և յաջողեցայ դիւրաւ որսալ : Բայց այս յա  
ջողութեան արդիւնքը պարախմբ անմիջապէս  
քաղել :

ՍԱՐԳԻՍ

Խօնչալէս :

ԴԵՐԵՆԻԿ

Իշխան , գիտէք այսօր , որ նախարարք , իշ  
խանք և աղասոք ձեզ կուսակից են , այնալէս չէ :

ՍԱՐԳԻՍ

Այս :

ԴԵՐԵՆԻԿ

Այս պատեհ առիթ մի է , ո՞ գիտէ , թե  
քեւս օր մը ձեր և նախարարաց մէջ գժտութիւն  
մի կրնայ ծագիլ , որով այն ժամանակ կ'անհետ  
տանան մեր ամեն ակնհաղութիւնները :

ՍԱՐԳԻՍ

Այդ շատ կարելի է :

ԴԵՐԵՆԻԿ

Արդ քանի որ դեղք մեր համար յաջող են ,

քանի որ ժամանակն մեղ կ'օգնէ , խոհեմու-  
թեամբ գործեմք : Տէր Ախւնեաց , այսօր Հայ-  
րապետն երբ ձեղներկայանայ , առաջարկեցէք  
զձեղ վաղիւ անպատճառ թագաւոր օծել :

## ՍԱՐԳԻՍ

Վաղիւ :

ԴԵՐԵՆԻԿ

Այս . վասնղի երբէք ժամանակ տալրւ չէ  
Կաթողիկոսին , որ ՚ի հեծուկս մեր գործէ , և ժո-  
ղովրդեան միտքն ալզտորէ :

## ՍԱՐԳԻՍ

Դժուարին :

ԴԵՐԵՆԻԿ

Դժուարին չէ , Իշխան , քանի որ Գագիկ  
յնի չէ , քանի որ նախարարք , իշխանք և ժո-  
ղովրդեան գրեթէ մեծ մասն մեղ համամխտ են,  
առաջարկեցէք , այս խնդիր մի է , որով մեր  
բաղդն պիտի վճռուի : Հաւատացէք , արդէն  
վստահ եմ , որ Հայրապետն պիտի ըստ գժուարի,  
երբ տեսնէ նախարարաց բաղմութիւն մի հա-  
մահաւաքեալ ձեր շուրջը , և . . . :

## ՍԱՐԳԻՍ

Հայց եթէ դժուարի . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Անհոգ եղիր . վասնղի միջոցն մեղ այսուհե-  
տեւ կ'օգնէ :

ՍԱՐԳԻՍ (աշխուժիւ)

Ե՞նչպէս :

ԴԵՐԵՆԻԿ

Կը յիշէք, մեծ մարդ մի երբեմն մեր ձեզ  
ռամբ կաթողիկոս եղաւ :

ՍԱՐԳԻՍ

Դէռուկորո՞ս :

ԴԵՐԵՆԻԿ

Այս . այս մարդն յետոյ կաթողիկոսութենիւ  
անկաւ, գիտէք արդէն՝ թէ այս մարդն ոսով է  
Պետրոսի, և մեզ եւս հաւատարիմ կուսակից :

ՍԱՐԳԻՍ

Այս :

ԴԵՐԵՆԻԿ

Այս մարդն գալոտ յէնի մոցունել յաջուցեցայ :

ՍԱՐԳԻՍ (այլայլած)

Ճշմարիտ է՞ք :

ԴԵՐԵՆԻԿ

Այս . Դէռուկորոսի ներկայութիւնը զՊետրոս պիտի խուսվէ, և պիտի ստիպուի զձեզ թագաւոր օծել, վասնզի իւր անկումը ակներև պիտի տեսնէ :

ՍԱՐԳԻՍ

Իշխան, կը զարմանամ ձեր ճարապիկութեան վերայ :

ԴԵՐԵՆԻԿ

Դէսկորեայ հաւանութիւնը ստացած եմ,  
նոյնպէս և նախարարաց և իշխանաց, ուստի  
յայտ է՝ թէ մեղայսուհետեւ տարակուսանաց  
հարկ չը մնար :

ՍԱՐԳԻՍ

Բայց եթէ Պետրոս իսպառ մերժէ . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Պատրաստէ Դէսկորոս :

ՍԱՐԳԻՍ

Իսկ եթէ բողոքէ . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Ո՞ւմ :

ՍԱՐԳԻՍ

Ժողովրդեան :

ԴԵՐԵՆԻԿ

Միամիտ կաց . Իշխան, ժողովուրդն ոչինչ  
կարող է առնել, մեծամեծք են միշտ ժողովր-  
դեան երասմանակը բոնաղ կառավարիչները, և  
արդեն ժողովրդեան մեծ ու կարեւոր մասն այսօր  
մեղ համամիտ է, եւ բանակն իսկ ՚ի սղահան-  
ջել հարկին մեղ պաշտպանելու պատրաստ :

ՍԱՐԳԻՍ

Լո՞ւչ կ'առէք, իրա՞ւ, բանակն եւս մեղ հա-  
մամիտ եղա՞ւ :

## ԴԵԲԵՑԻԿ

Այս . մի քանի աւուր մէջ կարողացայ որ-  
սալ . . . Տէր Այւնեաց , աբբունի պալատան  
ընդարձակ տարածութեան մէջ հրամանատարք  
և սեպուհք իւրեանց գնդերովն զձեղընդունե-  
լու համար պիտի սպասեն :

## ՍԱՐԳԻՍ

Վիլուրախութեանս :

## ԴԵԲԵՆԻԿ

Ուստի , Իշխան , երբ Հայրապետն իսպառ  
մերժէ , սպառնացիր մահ , մահ ամեն նոցա ,  
որք պիտի յանդգնին չը ճանաչել ձեր թագնու-  
իշխանութիւնը . վասնզի , Իշխան , կարող եմք  
այսուհետեւ մեր հակառակրդաց դէմքուոն  
զօրութեամբ մաքառիլ . վասնզի եթէ այս մի  
ջոցն եւս կորանցունեմք , գիտցիր , որ մեր բա-  
րեբաղդութիւնն ՚ի դժբաղդութիւն պիտի փո-  
խուի , և Գագիկ պիտի թագաւորէ :

## ՍԱՐԳԻՍ ( իսոռվաճ )

Իրա՞ւ :

## ԴԵԲԵՆԻԿ

Նըէկ լսեցի , թէ ժողովուրդն ճանձրանա-  
լով այս անիշխանութենէն՝ խուռն բազմու-  
թեամբ կաթողիկէի առջեւ գումարած , խըն-  
դրած են կաթողիկասէն թագաւոր օծել կամ  
Գագիկ , եթէ կենդանի է , և կամ այլ ոք :

## ՍԱՐԳԻՍ

Տէր Աստուած :

## ԴԵՐԵՆԻԿ

Գիտէք, Տէր Այսնեաց, եթէ Գագիկ թագաւորէ, մեր ամեն յոյսեր կ'ոչնչանան. և Այս գիս և Դերենիկ այնուհետեւ վատութեամբ պիտի խոնարհին տասնեւլվեցամեայ մանկան մի թագաւորական գահուն առջեւ, ցածութիւն, պժդալի՛ ցածութիւն :

## ՍԱՐԳԻՑ

Ովկատաղութեանս :

## ԴԵՐԵՆԻԿ

Գիտէք, յանդգնութիւնը երբեմն մեծածամեծ յաջողութեան և անկարծելի երջանկութեան բանալին ըսուած է և կ'ըսուի միշտ :

## ՍԱՐԳԻՑ

Այս :

## ԴԵՐԵՆԻԿ

Ուրեմն այս մեծ յանդգնութիւնն ալ մէք 'ի գործ դնեմք, վաղիւ կաթողիկէի մէջ զձեղ 'ի ներկայութեան նախարարաց դադս թագաւոր օծել տալով, գիտեմ, ժողովուրդն 'ի սկզբան թերեւս շփոթի, բայց երբ կաթողիկէն արքայալայել շքեղութեամբ ելնէք, և հասանիք 'ի պալատն թագաւորական, ուր բանակին արքունի ամենայն վատաւորութեամբ ձեղ պիտի դիմաւորէ, անշուշտ եմ, որ պիտի ընդունի ձեզ իշխանութիւնը :

## ՍԱՐԳԻՒՄ

Ըստ է մինչեւ ցարդ, Իշխան, մեր այս  
տարտամը ընթացքը ։ Վճռենք, կամ մահ կամ  
երջանիկ կեանք ։ այս թողլինի մեր նպատակն  
ու դիտաւորութիւնը :

## ԴԵՐԵՆԻԿ

Կաց բարեաւ առ այժմ, Իշխան, աւանիկ  
կ'երթամնախարարներն ու իշխաններն ժողովել  
և գալ աստ Հայրապետէն, ձեր թագաւորու-  
թիւնը խնդրելու համար :

( Կը Խինի )

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

## Վ.ԵՍՏ-ՍԱՐԳԻՍ

## ՍԱՐԳԻՍ

Վ երջապէս այն երջանիկ վայրկենին ահա  
կը հասնիմ, զոր ՚ի վաղուց հետէ կաթողին կը  
բաղձայի : Ով, այս երանաւէտ պահուն այս  
խմ մահկանացու սիրուր միմէ կարելին է յուսաւ  
հատութեսն ամսով ծածկել : Արդեօք նոյն  
չարամիտ ծերը՝ այս անդամուն ալ զիս պիտի  
դլորէ յանդունդս յուսահատութեան : Այս,  
բառ մի, լոկ բառ մի դիմադրանաց, եթէ շր-  
մէդ դուրս արձակելու ըլլառ՝ անպիտա՞ն ծեր,  
ու սերահար պիտի փոեմ զքեզ, զգուշացիր,  
վասնդի այս բերկրաւիթ պահս ինձ Եղատ

Արդսիս միայն յաղթութիւն կ'աւետէ : Հերլիք է որ մինչեւ դայժմ զիս կործանեցիր , ամեն ջանիցս հակառակ զիս տապալեցիր , վերջապէս ամօթահար յերկիր գլորեցիր . ոչ , ամենեւին չեմ խնայեր այսուհետեւ նոյն իսկ կեանքս . բարձրանալ կը բաղձամ , թագաւորել կը փափագիմ , այս փափագս միշտ իմ սրտիս մէջ պիտի մնայ , այս փափագաւս պիտի իջնեմ 'ի գերեզման : Վ այ այնմ , որ այս իմ փափագանաց հակառակ կը կանգնի . . . բայց ահա Վքաս :



## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԳԵՍՏ-ՍԱՐԳԻՍ , ԱԲԱՍ

ԱԲԱՍ

Վ երջապէս , Տէ՛ր Աիւնեաց , կը հասանի  
Դուրգէն 'ի Բջնի . բայց աւազ , որ դէպք  
դարձեալ կը հակառակին :

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչպէս :

ԱԲԱՍ

Կը գտնէ զԴագիկ , կը մտերմանայ , բայց  
Դագիկյանկարծ կ'անհետանայ :

ՍԱՐԳԻՍ

ԵՐԵ :

ԱԲԱՍ

Դիշեր ժամանսկ :

ՍԱՐԳԻՍ

Ոխյնսկ :

ԱԲԱՍ

ՈՒ :

ՍԱՐԳԻՍ

Հապա :

ԱԲԱՍ

Եմբանաց հեռ :

ՍԱՐԳԻՍ

Խոչսլէս :

ԱԲԱՍ

Ենիէն Եմբան յանկարծ ՚ի թջնի կը դայ, և  
զԴագիկ առնլով՝ մի քանի ձիաւորաւ դաղտ  
կը մեկնի :

ՍԱՐԳԻՍ

Ուր :

ԱԲԱՍ

Դեռ ստոյդ յայտնի չե :

ՍԱՐԳԻՍ

Իսկ Դուրդէն :

ԱԲԱՍ

Դուրդէն բոլորավին ապշաճ այս յանկար-  
ծահաս դէպքի վերայ, թէեւ շատ կը ջանայ  
Դրիգոր Պահլաւէն ձիշդ տեղեկութիւն մի ըս-  
տանալ, բայց ՚ի դուր :

## ՍԱՐԳԻՍ

**Ա**լը զարմանամ . . . :

## ԱԲԱՍ

Ասկայն Գուրգեն բերդապահ գուեհկաց  
մէջ սպտուած զբայցներեն հաղիւ թէ կարող կը  
լինի այսչափ իմանալ, թէ Գագիկ առ Տուղթիւ  
Պարսից սուլթանն ապաստանած է :

## ՍԱՐԳԻՍ

**Թ**երեւո :

## ԱԲԱՍ

Տէր իշխան, կը կասկածիմ, թէ մի գուցէ  
Գագիկ Տուղթիլայ ձեռամք թաղաւորէ : Տէր,  
հակառակորդներդ կը շարժին . . . :

## ՍԱՐԳԻՍ

**Թ**ող շարժին, յաղթութիւնն մեր է :

## ԱԲԱՍ

Տէր, քանի որ այսպէս տարսամ կը շար-  
ժիմք, մի յուսար :

## ՍԱՐԳԻՍ (Եպիփանիան)

Ի՞նչ, չը յուսան. Թող Գագիկ առ Տուղթիւ  
ապաստանի, հոգ չէ . Ասրդսի բազդն այսօր  
կամ վաղիւ սկիտի վճռուի :

## ԱԲԱՍ

**Ի**՞նչ :

## ՍԱՐԳԻՍ

Յաղթութիւն կամ պարտութիւն :

ԱԲԱՍ

**Ի՞՞նչպէս :**

ՍԱՐԳԻՍ

Հայրապետն այժմիկ աստ պիտի գայ, պիտի  
առաջարկեմ զիս թագաւոր օծել:

ԱԲԱՍ

**Ե՞րբ :**

ՍԱՐԳԻՍ

**Վ աղիւ :**

ԱԲԱՍ

**Իրա՞ւ :**

ՍԱՐԳԻՍ

Այս . վասնզի քաջին Դերնկայ հետ զայս  
միայն հնար գտանք մեր դիտաւորութեան  
շուտ յաջողութեան համար , վասնզի միջոցն  
որչափ երկարի, Գագկայ թագաւորութիւնն ալ  
այնքան կը դիւրանայ . . . բայց ոտնաձայն կը  
կը լսեմ, Հայրապեան է . գնամ, Աբաս, Դերն-  
կայ իմացուր, որ նախարարաց հետ ՚ի միասին  
անոն դալ փութա՛ :

(Աբաս կը մինի)

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՀԵԽՏ-ՍԱՐԳԻՒՑ

### ՍԱՐԳԻՍ

Ահա երկու տարի է, չայր, որ անիշխանութեան մէջ կը դեգերիմք, քաղեցինք սորադասն պտուղը. չայր, հզօր և խմաստուն ազատ չայ մի թագաւոր հաստատեմք :

### ՊԵՏՐՈՍ

Անկարելին. օրինաւոր ժառանգն թագաւորութեան Բագրատունեան տունն է :

### ՍԱՐԳԻՍ

Աակայն դժբաղդ պիտի լինի չայաստան, եթէ Բագրատունի թագակալ գլուխ մի կառավարութեան երասանակը վարել իշխէ :

### ՊԵՏՐՈՍ

Լնչպէս :

### ՍԱՐԳԻՍ

Ո՞եղայ բազմութեան համար. վասնզի ամբարշտեցաւ այդ տունը Աստուածութեան և մարդկութեան առջեւ :

### ՊԵՏՐՈՍ

Կը սխալիս, իշխան, այդ տանէն քանի քանի ընտիր զաւակներ ունեցաւ չայաստան, որք իւր իտոքն մինչ ՚ի յերկին վեր առին յիշե՛

նահատակն Ամբատ, ողորմածն Աշոտ և մեծաւործն Գրագիկ, և այլ անթիւ հայրենանուէր զաւակներ :

### ՍԱՐԳԻՍ

Կը մոռանանս ուրեմն այն երկնային նշանները՝ որք այդ տան կործանումը գումացին : Կը մոռանանս, երք մարդ մի, հաղ զգվառվն, աջնիկ կուրծո, աստ և անդ վազելով՝ անդադար կ'աղաղակէր . Ալ այ ինձ, վայ ինձ, եղնւկ . . . այս մարդոյն քարոզութեան շրջանն եօմն տարի տեւեց : Այս մարդն կենդանի վկայ էր Բագրատունեան տան ամբարշտութեանց . . . այս մարդն երկնազդեցիկ զօրութենէ շարժեալ երկնային մարդ մի էր :

### ՊԵՏՐՈՍ

Յիմար մի :

### ՍԱՐԳԻՍ

Յիմար այն մարդ, որ աստուածային վրէժ խնդրութեան աւուր մերձենալը կը քարոզէր . Քայց միտ դիր, գիտե՞ս, երք այս մարդոյն քարոզութեան շրջանը վերջանալու վերայ էր, երք արեգակն խաւարեցաւ, երկիր սարսեցաւ, և այլ սարսափելի նշանք տեղի ունեցան, գուք, Հայր, դուք և թագաւորն զիս և զԴրիգոր Պահլաւն կոչեցիք, կը միշէք, ինչո՞ւ :

### ՊԵՏՐՈՍ

Դեսլ առ կողեւն Յովհաննես հոգետես

վարդապետ, և տեղեկանալ աշխարհի այս անցից վերայ:

### ՍԱՐԳԻՍ

Դնացինք: Բայց այն մարդն առանձին ինձ մեկին խօսեցաւ, թէ Բագրատունեան տան անօրէնութեանց և մեղաց չափին լցուած է, եւ լարվ գումեց ինձ Կըինից վրէմինդրութեան կայծակի իջումը այս տան վերայ:

### ՊԵՏՐՈՍ

Օ արմանալի՛:

### ՍԱՐԳԻՍ

Ուստի համոզուած եմ, որ եթէ Բագրատունեան տունն դարձեալ թագաւորէ, պիտի դժբաղդանայ Հայաստան, ուստի պիտի մերմէմ:

### ՊԵՏՐՈՍ

Երդարութեան օրինաց դէմ կը մեղանէք այն ժամանակ:

### ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ, օրինաւորութիւնն է, անմոի մի, ապուշ պատանիի մի Հայոց վերայ թագաւորելը:

### ՊԵՏՐՈՍ

Ճողովսդեան ճայնիւ ընդունուածն օրինաւորութիւնն է:

### ՍԱՐԳԻՍ

Եթէ ժողովսւրդն մերժէ, այն ժամանակ:

## ՊԵՏՐՈՍ

Ժողովողեան ձայնը կարող է ընտրել ու  
ըիշ մի :

## ՍԱՐԳԻՍ

Այս մերժեն նորա թագաւորութիւնը իշխանք, նախարարք և ժողովուրդն, և միայն օրիւնաւոր հանձնարեղ քաջի մի թագաւորութիւնը կը խնդրեն :

## ՊԵՏՐՈՍ

Ո՞վ է այդ :

## ՍԱՐԳԻՍ

Ահւնեաց իշխանն Ազատն Ասրդիս :

## ՊԵՏՐՈՍ

Դո՞ւք :

## ՍԱՐԳԻՍ

Այս մեք, ըստ որում մինչեւ ցարդ հայրենիեացս մատուցած անթիւ բարենպատակ ծառայութիւններս կը վիխայեն բարելաւութեանս և թագաւորավայել ձրիցս :

## ՊԵՏՐՈՍ

Դո՞ւք, որ դաւեցիք զհայրենիս, կամակլից գտնուելով Անւայ վաճառման հայութեաննախատինք այն վատ գործոյն :

## ՍԱՐԳԻՍ

Ահւատ :

## ՊԵՏՐՈՍ

Դուք, որ գէշ նպատակաւ քանիցս գլուխութիւն ձգեցիք նախարարաց մէջ, և չարութեան որում ցանեցիք բարի որտերու մէջ . . . :

## ՍԱՐԳԻՍ

Ամենեւի՞ն :

## ՊԵՏՐՈՍ

Դուք, որ թշնամւոյն ճանապարհ բացիք մինչեւ Կնույ դռները, որպէսզի Յունաց օգնութեամբ թագաւորէք . . . :

## ՍԱՐԳԻՍ

Կը ստէք. Ոիւնեաց իշխաննե երբէք այդպիսի ազգաւեր գործոց մէջ մասնակից եղած չէ :

## ՊԵՏՐՈՍ

Եթէ մասնակից չէիք, ինչու թշնամւոյն ընթացքը չ'արգիլեցիք :

## ՍԱՐԳԻՍ

Վասնզի անկարող էի :

## ՊԵՏՐՈՍ

Դու ինսամակալ էիք տէրութեան և մեծ իշխան, ուստի աւելի քեզ անկ էր թուր ՚ի ձեռին վաղել և թշնամւոյն դիմադրել :

## ՍԱՐԳԻՍ

Եզդային խեղճ վիճակն զիս կասեցոց . . . :

ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ էր մեր վիճակը :

ՍԱՐԳԻՍ

Անմիտ թիւն . ուստի և Աստուած վճռած  
էր . . . :

ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ :

ՍԱՐԳԻՍ

Պարատ թիւն՝ ի թշնամեաց , և . . . :

ՊԵՏՐՈՍ

Լուէ . գթած Աստուած մի է այն՝ որ ՚ի յա-  
ւիտենից մեր հայրենեաց վերայ կը հսկէ :

ՍԱՐԳԻՍ

Լուէ . մեղաց բազմութիւն մի թխատիպ  
ամփոց նման բարձրանալ՝ Երկնից ահեղ զօ-  
րութենէն միշտ վրէմինդրութիւն կը խնդրէ .  
քանդի այս արքայական տան թագակալները  
քանիներու հոգիներ յանիբաւի ՚ի յաւիտենա-  
կանութիւն յուղարկեցին , քանիներու արդար  
արեւամբ ներկեցին Անւոյ պարսպաց յատակնե-  
րը . այսպիսի եղեռնագործութեանց համար է ,  
որ սյաօր գթածն Աստուած հակառակ է այս  
տան , և իւր աստուածային վրէմինդրութեան  
շանթը պիտի լավիէ տակաւին զնոսա եւս՝ որք  
այս եղեռնաւոր տան պաշտպան են . . . :

ՊԵՏՐՈՍ

Կը հայհոյիս , նղոփք կը ժայթքէ բերնէդ ,

Բագրատունեան տունն երբէք այդքան ոճրա-  
գործութեամբ ամբարշտած չէ :

ՍԱՐԳԻՍ

Դուք այդպէս դիտցիք, այդ իմ վոյլմս չէ,  
երկար վիճաբանութեան եւս հարկ չը կայ. ձեզ  
կ'ասեմ, Հայր, կ'ընդունիք մեր թագին օրի-  
նաւորութիւնը :

ՊԵՏՐՈՍ

ԱՅՀ :

ՍԱՐԳԻՍ

ԻՆՉԻ :

ՊԵՏՐՈՍ

Ըստ որում ապօրէն է. ժողովրդեան ձայ-  
նը միայն կրնայ վճռել դորա օրինաւորութիւնը:

ՍԱՐԳԻՍ

Իսկ դո՞ւք :

ՊԵՏՐՈՍ

ԱՅՀ, Իշխան, շողոքորմէլ ուսած չեմ մինչեւ  
ձերութեանս այս օրը. անիլաւ էք դո՞ւք :

ՍԱՐԳԻՍ

Իսկ եթէ ժողովրդն, իշխանիք և ազատք  
զիս ընտրեն :

ՊԵՏՐՈՍ

Պիտի գոշեմ, թէ բուն ժառանգն թագին՝  
Աշոտայ որդին Գագիկ է :

ՍԱՐԳԻՍ

Իսկ եթէ ձեր այդ ձայնը մերժեն, և . . . :

## ՊԵՏՐՈՍ

Վ կայ լիցի Աստուած ընդ իս և ընդ ձեզ  
ասելով, թագաւոր պիտի օծեմ զնա, զոր ժռ  
զովուրդն կ'ընտրէ:

## ՍԱՐԳԻՍ

Իսկ այնուհետեւ :

## ՊԵՏՐՈՍ

Պիտի ողբամ ժողովրդեանս այս տիմար ա-  
րարքի վերայ, և հառաջանօք պիտի արտա-  
սուեմ այն արքայազն խեղճ մանկան դժբաղդու-  
թիւնը, որոյ սեպհական իրաւունքն յափշտա-  
կեցաւ:

## ՍԱՐԳԻՍ

Այդ ձեր գիտնալիքն է . տես, Հայր, ահա  
իջնանք և նախարարք հոս կը գան . . . :

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ · ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ, ԴԵՐԵՆԻԿ  
ԵՒ ԱՍՐԳԻՄ ԿՈՒՍԱԿԻՑ ԻՇԽԱՆՔ

## —♦—

## ԴԵՐԵՆԻԿ

Ո՞նչեւ ե՞րբ, ով Հայր, պիտի պաշտպանէք  
Բագրստունեան տունը, որ Հայաստանեայց  
այսպիս ամառ տղետից սկսած եղաւ և  
կը լինի մինչւ ցարդ :

## ՊԵՏՐՈՍ

Պարտականութիւնն է, որ կը կատարեմ.

Բագրատունեան տան շնորհիւ աւելի բարեկ  
վայելած է Հայաստանքանթէ չարիք :

### ԴԵՐԵՆԻԿ

Ըստ այդ պարագաւցդ գործադրութեամբն  
պիտի թշուառանաց Հայաստան :

### ՊԵՏՐՈՍ

Երբէք . ազգին փափագն է՝ զոր գործադրել կը ջանամ . ընդհանրութեան ձայնիւ հաստատեալ իրողութիւն մի երբէք ցաւալի վախճան չունենար :

### ԴԵՐԵՆԻԿ

Ասկայն ժողովրդեան ամբողջութիւնն չէ ,  
որ այդ պարագաւցդ գործադրութիւնն կը խընդրէ , այլ խումբ մի Վագիսյ կուսակից սինկըոր մաս մի . ազգային կարեւոր մեծ մաս մի կը մերժէ երիտասարդ անփորձ պատանիի մի թագաւորութիւնը :

### ՊԵՏՐՈՍ

Այք են դոքա :

### ԴԵՐԵՆԻԿ

Ահա մէք , նախարարք , իշխանք և աղաոք .  
մէք , Հայր , կը մերժեմք զՄագիկ , և միայն Տեառնս Արևեաց վավիւթագաւորելը կը խընդրեմք , վասնզի . . . :

### ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ կ'ըսէք , վաղիւ :

ԻՇԽԱՆՔ

Այսուհետեւ կը կամիսք :

ՊԵՏՐՈՍ

Աը ցնորդիք . ի՞նչ հարկ իսյ այդքան սճառ  
սլարանաց :

ԻՇԽԱՆՔ

Հայր , վասնզի . . . . :

ՊԵՏՐՈՍ

Բայց ազգն եթէ . . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Ազգին պատուիսանառու մեք եմք :

ՊԵՏՐՈՍ

Արդեակն իմ , մի այդպէս բռնանայք ժռ  
զովոդեան իրաւանց վերայ , կ'աղաչեմ :

ԴԵՐԵՆԻԿ

Իրաւանց բռնաբարութիւն չէ այս , Հայր ,  
այլ ազգն խռովութենէ և արիւնահեղութենէ  
զերծ պահելց դիւր հնար մի :

ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ . միթէ խռովութիւն կը ծագի ազգին  
մէջ , երբ ձեր ընտրութիւնն աղգին ծանուցա  
նէք , այնպէս կը կարծէք :

ԻՇԽԱՆՔ

Այսուհետեւ :

ՊԵՏՐՈՍ

Ի՞՞նչպէս :

ԴԵԲԵՆԻԿ

Խաժամումն թերեւս մերմէ մեր ընտրու-  
թիւնը, որով . . . :

ՊԵՏՐՈՍ

Ի՞այց, որդեակը իմ, ժողովրդեան ձայնի  
ձեզ հնազանդիլ պարտ է :

ԻՇԽԱՆՔ

ԵՐԵՒՔ :

ՊԵՏՐՈՍ

Որդեակը իմ, կ'ազաշեմ. . . :

ԴԵԲԵՆԻԿ

Ժողովրդեան ձայնի հարկ չը կայ, ժողովրդ-  
ութն իւր ձայնն ՚ի դարուց անտի մեծամեծաց է  
յանձնած. ժողովրդեան առաւել պարտ է հը-  
նազանդիլքանթէ հրամայել :

ՊԵՏՐՈՍ

Որդեակը իմ, մի՛ այդպիսի . . . :

ԴԵԲԵՆԻԿ

Հայր, երկար վիճաբանութեան հարկ չըկոյ,  
ձեզ միայն օծել անկ է, կ'օծեք :

ՊԵՏՐՈՍ

Օ՞՞լ :

ԷՇԽԱՆՔ

ՕԱՐԴԻՒ :

ՊԵՏՐՈՍ

ԱԼՈՒ ՃԱՅՆԻՒ :

ԷՇԽԱՆՔ

ՄԵՐ :

ՊԵՏՐՈՍ

Ամենեւին, երբէք չեմ կարող ժողովրդեան  
ճայնը ձեր կամաց զոհել. «Չայն բազմաց, ճայն  
Աստուծոյ.» Աարդսի ընտրութիւնը երբ ընդ-  
հանրութեան ճայնիւ լինի՝ ընդունելի է, ասպա-  
թէ ոչ երբէք :

ԴԵՐԵՆԻԿ

Չայն բազմաց, ճայն Աստուծոյ, այնժամա-  
նակ՝ երբ ամբողջութեան սրտի մէջ ընտրելու  
կարողութեան լցուր կը վառի. ագէտ խուժանի  
ճայնն Աստուծոյ ճայն ընդունելը յիմարու-  
թիւն է :

ՊԵՏՐՈՍ

Ժողովրդեանն ալ ազատ կամաց ճայնը բըռ-  
նաբարելն, տմբարշտութիւն է :

ԷՇԽԱՆ ՄԻ (ՅԵ-ՀԸ ԱՌԵՐԻՆ ՊԱՆԵԼՈՎ)

Ամբարշտութիւն, ինչ կուզէ թող լինի.  
Աիւնեաց իշխանի թագաւորութիւնը կը խըն-  
դրեմք, կը մերժէք :

ՊԵՏՐՈՍ (Պարտահանցն Երինյունելով)

Ալ մերժեմ:

ԴԵՐԵՆԻԿ

Առ իշխանն . կայ : առ հայրապետն . Այս վաղվազեր այդպէս մահուան , վասնզի մահը շատքաղը է այն կեանքէն՝ զոր այսուհետեւ պիտի վարես . սարսափմամբ լսէ՛ ուրեմն . գիտոցիր , որ պիտի տեսնես քիչ օրէն Հայաստանի հորիզօնի վերայ մշտնջենաւոր խաւար , խաւար մի , զոր յետագայ սերունդը հազարաւոր տարիներէ զինի պիտի չը կարողանայ փարատել , և անիծից կարկուտ պիտի տեղայ չիրմիդ վերայ , որովհետեւ մերժեցիր նախարարաց ազգին այս փրկաւէտ խնդիրը , և յամառութեամբդ նորա կործանումը աւելի փութացուցիր :

ՊԵՏՐՈՍ

Եյդ սպառնալեօքն , ո՞հ , կը յայտնէք՝ թէ ազգին . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Եյդ , և արտասուաց հեղեղով պիտի լըւամք զՀայաստան , մինչեւ որ թագաւորէ Աշատն Արգիս :

ՊԵՏՐՈՍ

Ո՞հ , դթացէք , դթացէք , որդեակը իմ . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Դու գթա՛ , անգութ , և կատարէ այս մեր խնդիրը , քեզինչը լնդհանուր աղդի ձայնը :

## ՊԵՏՐՈՍ

Որովհետեւ այսքան կը պնդէք, և անհնարինէ ինձ զձեզ համոզել աղքին ամբողջութեան ձայնը ճանաչելու, ահա 'ի վերջո բացարձակ կը բայտնեմ, թէ այսչոփ միայն կարող եմ զի՞շանիլ, որ պատրաստ եմ զդա օծել թագաւոր, եթէ գէթ լնուց ժողովուրդն ընտրէ զդա . . . կացէք բարեաւ :

(Կը մէկն)

## ՍԱՐԳԻՒ

Յամանու ծեր :

ԴԵԲԵՆԻԿ

Խ՞նչ շուարեալ կայք, ի՞նչ կը տարակուսիք . Եթէ վաղիւ այդ չար ծերն մեր և թէ մեր կուսակցաց ձայնը լսել վաքր ինչ գմկամակի, գիտցիք, որ 'Դէսոկորոս' որ այժմն աստ յի՞նի է, պատրաստ է լոկ մեր ձայնիւ թագաւոր օծել զՏէրդ Աիւնեաց :

## ԻՇԽԱՆՔ

Աւրեմն տարակուսաց մեզ ի՞նչ հարկ կոյ :

ԴԵԲԵՆԻԿ

Իշխանք, տեարք, աղանդք Հայոց, վաղիւ բռնի Կաթողիկէին գոները կը բանամք, և Կաթողիկոսն քաշկատելով կը բերեմք 'ի տաճարըն . "Հայրապետ, կ'ասեմք, ահա մեր թագաւորը, օծէ՛, և ապա թող աղքն ողջունէ իւր թագաւորը : "

## ԻՇԽԱՆՔ

Իմէ եթէ մերժէ . . . :

## ԴԵՐԵՆԻԿ

Կ'ընկենումք զնա 'ի կաթողիկոսութենէ, և 'ի  
ձեռն Դէստիորեայ թագաւոր օծելով զՏէրս Սիւ-  
նեաց, զնա ևս կը հաստատեմք 'ի կաթողիկոս :

## ԻՇԽԱՆՔ

Դործենք, գործենք անլշատ :

ԴԵՐԵՆԻԿ առ Սարգիս

Տէր Սիւնեաց, կ'օծուի ճակատդ, աբքայ-  
ավայեւ շքեղութեամք կ'ելնէք տաճարէն դէ-  
պի տրքունի պայտար, ուր բանակն զձեղ ամե-  
նայն սիրով պիտի ընդունի . անհոգ լեր . գուրք  
այնուհետեւ Հայոց թագաւոր էք :

## ՍԱՐԳԻՍ

Իշխանք, տեարք և ազատք, ապահով եմ,  
որ վաղիւ ձեր շնորհիւ պիտի թագաւորեմ;  
առայժմ գնացէք, և մինչեւ ցվաղիւ իմացուցէք  
մեր եղբարց, որ կանուխ գալ փութան 'ի կա-  
թողիկէն, եւ ջանացէք նաեւ մեր կուսակցաց  
թիւն դրամի զօրութեամք եւս քան զեւս բազ-  
մացունել :

## ԻՇԽԱՆՔ

Ամենայն հաճութեամք :

( կը մէկին )

ԱԵՍՏ-ՄԱՐԳԻՒ

ՄԱՐԳԻՒ

Յաջողէ ամեն ինչ . վաղիւ աշուշտ եմ, որ  
 նախարարաց և կուսակից բազմաթիւ ժողովքը-  
 դեանս ձայնիւ Հայոց թագաւոր պիտի հրո-  
 շակուիմ: Երջանիկ եմ, երջանիկ այնուհետեւ .  
 վասնզի ոչ ոք հակառակ ինձ ախցյեան կանգնած՝  
 պիտի իշխէ բողոքել ընտրութեանս դէմ: Այս,  
 ոչ ոք տրտնջանաց բառ մի իւր շրմէն սիխոի  
 յանդգնի արձակել, բոյց եթէ Բագրատու-  
 նեան տան կուսակից սինլքոր մաս մի, ոչինչ  
 մաս մի: Ողբըմելինե՞ր, 'ի զուր պիտի մաքառիք,  
 'ի զմւր ասս անդ սիխոի շաղակրատեք, քանզի  
 Արգիս՝ Արգիսն հզօր կարողէ զձեղ 'ի սուր  
 սպառել, 'ի հուր դատել: Անմիտնե՞ր, 'ի վուր  
 կը յուսայք դուք ծերսյն Ա ահրամայ, 'ի զմւր  
 այդ ապիկար Հայրապետին, վասնզի դոքա իսկ  
 այս իմ զօրեղ բուանս մէջ ճմել կարող եմ:  
 Յիշեցէք միանգամաշխարհասարսափ զօրու-  
 թիւնս, յիշեցէք և 'ի միտ առեք, որ ոչ թէ նա-  
 խարաբը, իշխանը և տունն Աիւնեաց ինձ թեկն  
 ու թեւ են այսօր, ոյլ արքունի բանակն իսկ  
 իւր զօրապետօքն հանդերձ արդէն համամիտ  
 ինձ լինելով՝ ամենայն ճգամբ զիս պաշտպանել

պատրաստ են: (Դիմելոցեն հեշտունք կողը) Արոտացե՛ք դուք, շեփորքդ Հայկեան, գոռացե՛ք դուք, պատերազմակա՞ն փաղք հայութեան, գոռացե՛ք, քանզի ձեր ձայնը ինձ քաղցրէ, քանզի ինձ փառք կ'աւետէ, քանզի դուք վազիւ առաջին աւետատուք պիտի լինիք արքայութեանս փափառող ժողովդեան:

### ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՎԵՍՏ-ՄԱՐԳԻՍ, ԱԲԱՍ

### ԱԲԱՍ

Տէ՛ր Ախնեաց, մի քանի Հագրանունիք այսօր Հայրապետին կը ներկայանան, սակայն Հայրապետն լալով կը գումէնոցա, թէ Ասրդսի ընտրութեան դէմ Հակառակին անօգուտ է, երբ ազդին ձայնիւն է:

### ՄԱՐԳԻՍ

Իշա՞ւ:

### ԱԲԱՍ

Դեռ ոչ այսչափ. նոյն խակ Ա ահրամ, որ ժամանակէ մի հետէ յէրգինաքաշուած կը դիտէ մեր այս յաջող ընթացքը, Հագրանունեաց յայտնած է, թէ ինքն ոչինչ կարող է առնել, քանի որ Ասրդսի ընտրութեան նախարարք, իշխանք, ազատք և գրեթէ ժողովուրդն փափացող են:

## ՍԱՐԳԻՒՄ

**ՈՎ ուրախութեանս :**

## ԱԲԱՍ

Տէ՛ր, անշուշտ եմ; Թէ վազիւ ձեր թագադրութեան ներկայ Դագկայ կուռակից ոչ ոք պիտի գտնուի, և դուք առանց խուզվութեան պիտի օծուիք . բայց, Տէ՛ր իշխան, պիտի մոռանայք մեր այս անդուլ ջանից արդիւնաւէտ ծառայութիւնները :

## ՍԱՐԳԻՒՄ

**Վ կայ է Երկինք . Երբե՞ք :**

## ԱԲԱՍ

Դուք գիտէք արդէն մեր ձենէ ակնկալութիւնը . — Ը իրակայ արեւմտեան գաւառաց իշխանութիւնը . այս խնդիր մի է, պիտի կատարե՞ք :

## ՍԱՐԳԻՒՄ

**Կ'երդնում, այո՛ այո՛ :**

## ԱԲԱՍ

Ուստի և ես կը խոստանամ կենացս մինչեւ վերջին օրն հաւատարմաբար ձեղ ծառսյել : Կաց առայժմ, Իշխան, ահա կ'երթամ վաղւան ձեր թագադրութիւնն աշխարհի աւետել :

( կը մինի )

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

## ՎԵՍ-ՍԱՐԳԻՍ

## ՍԱՐԳԻՍ

Ովքերկրութեանս . ուրեմն վաղիւ արքայ աշուք փառաւորութեամբ պիտի երեւմ , և աշխարհի “ կեցցէ ” արքայն մեր ” աղաղակաւն պիտի բերկլիմ : Այն , կը խոստովանիմ՝ թէ մահկանացուաց ամենաերջանիկ ժամն այն է , այս անցաւոր աշխարհիս վերայ կստարեալ երջանկութեան սիրալի ժամն այն է , երբ մարդիւր յուսացածին կը համնի : Իսյց ես այժմէն ահա երջանիկ կը համարիմ զանձնս , երբ կը յիշեմ՝ թէ վաղիւ չայ արքունական գահուն վերայ բազմած՝ ամբողջ չայաստանի խոնարհ հըպատակութեան խորին յարդանքն ընդունիլ արժանի պիտի լինիմ : Երբ կը խորհիմ՝ թէ վաղիւ համայն չայաստանեայք զիս բովանդակ ազգին միակ թագաւոր ճանաչելով՝ գոհութեամբ և յօժարութեամբ պիտի կամին օրհնել ու փառաւորել իմ մեծ անունը : Ովդու , առաւօտեան գեղեցիկ աստղ , Ոիւնեաց իշխանի յուսոյ աստղիկ , ահա անհամբեր երեւմանդ կըսպասեմ , երեւցիր , չայկազն բիբ մի զքեղ կաթոգին պիտի ողջունէ :

Ով , կը յուղիմ . ո՞հ , ահա սաստիկ կը յուղիմ

... դուք, մվ աստղեր, դուք, որ այս պահուն զիս կը դիաեք, դուք, որ այս իմ սրտի յուղման յայտնի վկայքն էք, ասացեք, թէ կայ արդեօք յերկրի մարդկային անհատ մի, որ ինձ նման այսպէս յուսոյ և ակնկալութեանց ծովաւ մէջ դեգերեալ ծփի: Կայ անհատ մի, որ այսպէս մասայոց՝ անհամբեր սպասէ վաղւան արեւը՝ կենաց լոսր տեսնելու համար... բայց ինչ կը խօսիմ, ժամանակն թանկագին է, երթամ վաղուան համար այլ և այլ սպատրաստութիւններ տեսնել:

(ԱՆԴԻՆԻ)

## ԱՐԱՐՈՒԱԾ Ե .

ՅԱՆԻ , 'ի կաթողիկէ եկեղեցին , ուր խորան հայկական  
և բեմ ի խորս տեսլարանի երաժշտութեան լսի սրաւ-  
ուռը եղանակ : Խոկ Պետրոս կաթողիկոս 'ի վերայ քեմին  
'ի ծունդ երեւի \* :



## ՏԵՍԱՐԱՆ Ա .

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՊԵՏՐՈՍ

ԱՍՏՈՒՅՇ վառաց , դու՝ որ լնդ գարս  
ամբաւ օրհնեցեր զայաստան համօրէն , դու՝  
որ պահեցեր զերկիր մեր հարց 'ի խնամն աս-  
տուածութեանդ , դու՝ Աստուած ողորմու-  
թեան , Աստուած գլխութեան , դու՝ որ պա-  
հեցեր և զիս անարտատ մինչեւ ցայսօր , և 'ի վր-  
տանգս անսասան պահեալ զիս , զօրութեան  
ետուր ինձ սիրտ . սիրտ , նահատակ արդարու-  
թեան . սիրտ , վկայ հաւատարիմ աստուածա-  
յին վառացդ . այսօր աւանիկ , Տէր , ձեռն  
ժպիրհ և ամբարիշտ ծանրացեալ 'ի վերայ իմ՝

\* Աերկայացումն եթէ թատեր մէջ է , ուղանի ուղղու-  
թեամբ 'ի վայր պէտք է պաստառ մի ձգել , վասնզի ուղանի  
մէջ եղած սուրբ անօթք՝ խաչ , սկիհ , պատկեր և այլն , թա-  
տեր մէջ ներկայանալն անվայելուշ համարուած է :

սպառնայ ինձ ՚ի զուր անիրաւութեան տալ  
թեկն և վատութեան չարութեան իւրոյ կալ  
պաշտպան։ Տէր, քաւ լիցի ինձ, յարիւն շա-  
ղախել զծեռն իմ ամբիծ։ քաւ լիցի, մոռանալ  
ինձ զերախտիսդ այնչափ, այլ նահատակիլ  
կամիմ յօժարութեամք ՚ի սէր արդարութեան՝  
քան տեսանել զերաւունս արդարոյն կոխան  
ամբարշտաց։ Ընկալ զիս ուրեմն, Տէր, պա-  
տարագ ուղղութեան, պատարագ արդարու-  
թեան, պատարագ ճշմարտութեան։ Եւ մի  
տար անիրաւին յալթանակել արդարութեան։  
այլբարձրացն զարդարն ՚ի կորանս ամբարշտաց։  
զի փառաւորեսցի ամենասուրբ անունքո այժմ  
և միշտ և յաւխտեանս յաւխտենից, ամէն։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՊԱՐԱԿՈՐՔ

## ՊԱՐՆ Ա.

Լուր, Աստուած մեր, ընր, Տէր մեր,  
Հօր մեր զազօթս որբանըւէր.  
Եւ ակնարկաւդ զըմութեան  
Դու բարձրացն զհայատան։

## ՊԱՐՆ Բ.

Ի խորանէդ աստուածեան, Տէր,  
Յաւերս հայեաց հայրենեաց մեր,  
Եւ սուրբ սղովդ պահեան, Աստուած։  
Հզհամօրէն հայաստանեայս։

ՊԵՏՐՈՍ

Հայկայ զարմին , ով մանկունկը ,  
Դուք յօյտ 'ի սիրո լըւարուք .  
Զեր շըրթանց ազօթիեր  
Լըւիցէ անշուշտ Տէր :

ՊԱՐՆ Ա .

Տէր Աստուածն այն կենդանի  
Հայաստանեայց հովանի  
Անշուշտ կացցէ , ով սուրբ Հոյր :  
Ի յաւիտեան յամա յամայր :

ՊԱՐՆ Բ .

Այս այն , այն մեր Աստուած ,  
Ուր զէայաստան ցըդարս պահեաց .  
Գահպանեսցէ միշտ անսատան  
Չորդիս Հոյկոյ մինչ յաւիտեան :

ՊԵՏՐՈՍ

Լուր գու , լուր , Հայոց տուն ,  
Բարձրելիցն ակն անքուն  
Ցոգի հայի ուղղութեան ,  
Յարդոր նայի սիրո մարդկան :

ՊԱՐՆ Ա .

Օրհնեալ լիցին հարք մեր , ով հոյր ,  
Օրհնեալ նորա , որք անդադար  
Պագեալ զերկիր , ոնմահ էին  
Չօնելով փառո՝ յաստեաց ելն . . . :

ՊԱՐՆ Բ .

Ով Հայաստան , հարց մեր սուրբ վայր ,  
Արդարութեան գու կաց պատկառ ,  
Զի մի անկեալ , լիցիս կոխան  
Ի թշնամեաց վատ և դաժան :

ՊԵՏՐՈՍ

Սիրո իմ ճմին զերգ ողեցդ ,  
Անձն իմ այսպէս է՞ր 'ի յոցդ .

Ըզգամի, աւազը, լզգամի, ահ,  
Զի Հայաստան գլուխ ՚ի մահ . . . :

## ՊԱՅՆ ՄԻ

ԵՇՎ:

ՊԵՏՐՈՍ

Ո՛վ Հայաստան, տնեն լուսատու,  
Հարցդ ՚ի շաւղաց խոտորիմ գու . . . :

ՊԱՐԱԿՈՐՔ

ԵՐԿԻՆՔ:

ՊԵՏՐՈՍ

Ո՛հ, մորմաքիմ, ցաւիմ յօյժ,  
Ո՛վ հայրենիք, քեզ տամ գօյժ,  
Յո՞ լորդիսդ տանին բըսնի,  
Յո՞ զկուսանարդ գեղանի . . . :

ՊԱՐԱԿՈՐՔ

Հպայը, մի այդպէս բովանդակ,  
Հայոց լինիք չար գուշակ :

ՊԵՏՐՈՍ

Ո՛վ, զի՞ է, զի Հայաստան,  
Անկեալ գլնիս գու ՚ի կործան . . .  
Խոկ յաշարակըս քոյին,  
Վասն էր Անի, բուք թառին . . . ,  
Այդ է աւանդ, տնեն Հայկայ,  
Քո անշուք փառքն ապագայ.  
Ողբամ ըզքեզ, Հայոց աշխարհ,  
Ըզքո տեսեալ լիճանկ խոնարհ:  
Աւանդ . . . :

(Ի խորոց աեւլարանին վերստին լսէ Երաժշտութեան  
սրբալարժ եղանակ, և ապա պարաւորչն ՚ի ծունը  
անիւտալ թշլ յայնիւ Երգեսյեն ) :

ՊԱՐԱԿՈՐՔ

Յուշ քեզ, Աստուած :

Հայաստանեայս .  
Եւ գու , եւ յայց ,  
Հայեաց 'ի Հայս .

### ՊԵՏՐՈՍ (ՅՈՒՂԵԱԼ)

Օ՞ն , փող հարէք , հարէք շեփոր ,  
Մանկունք Հայոց , հարէք թմբուկ .  
Իսկ դուք Հայկոյ դատելը ազւոր ,  
Փառաց դափնիք հիւսեցէք դուք .  
Ո՞վ , զի ահա 'ի Հայաստան  
Կոր օք ծագի , օր փրկութեան . . . .

### ՊԱՐԱՒԱՐՔ

Երկինք :

### ՊԵՏՐՈՍ

Յազանն Մատիս և 'ի Նըպատ ,  
Տեսէք , ահա Հայկեան որդիք  
Գոռան գոչեն բաց 'ի Ճակատ .  
Աքա եմք որդիք , ով հայրենիք ո :  
Եւ Հայաստան ահա ծնանի ,  
Տեսէք , փայլի յիւր փառո նախնի . . . .

### ՊԱՐԵՆ Ա .

Ո՞վ Հայաստան , ո՞վ Հայաստան :

### ՊԱՐԵՆ Բ .

Ո՞վ հայրենիք , ո՞վ հայրենիք :

### ՊԵՏՐՈՍ

Բաց գու լուր , լուր , Հայկոյ տուն ,  
Գիտա՛ , զի քեզ էն գերաբուն  
Է հովանի և այցելու ,  
Արգաբութեան թէ կոյցես հլու :

### ԶԱՅՆ ՄԻ

Հայք , ահա Գրիգոր Պահլաւ :

### ՊԵՏՐՈՍ

Ո՞վ որդեակիք իմ աղօթաւոր ,

Գնացեալ կացէք ունել պահ։

Զի արքայ ձեր նստցի պարօք

Յարքայութեան յիւրն ՚ի դահ։

( կը մէկնին )

( խորանի աւագ վարդադոյրը կը չգուե )

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ

### ՊԵՏՐՈՍ

Դուք, Պահլաւ տէք, դուք իսկ բազ գիւ  
տէք, թէ քանի կաթողին ըղձիւ կը փափագիմ  
Գագկայ թագաւորութեան։

### ԳՐԻԳՈՐ

Արդարութեան սպաշտօնէի եւ աշխարհի  
մարդասէք Փրկչի հաւատարիմ զինւորի մի ճիշդ  
պարտականութիւնն է, որ կը կատարէք։

### ՊԵՏՐՈՍ

Յաւիտենական Փրկչին փառաց սպաշտօնէի  
մի բուն պարտականութիւնն արդարութեան  
գործադրութիւնն է, իսկ իւր աղաղակն ու քա-  
րտագն է սէք, սէք, մինչեւ իւր մահուան յե-  
տին կետը։ Կը յիշէք դուք, Տէք Պահլաւ, այն  
օրը, այն գժբաղդ օրը, յոր երկու Հայ բանա-  
կըք Անեց սպարսալաց տակ դէմ յանդիման ճա-  
կատած՝ երբ երկու արքայակն համարիւն եղ-

բարք սոյա պարագլուխ եղած զիրար գաղա-  
նօրէն խողսողելու համար պիտի յարձակէին ,  
կը միշէք :

ԳՐԻԳՈՐ

Այս , չարաշնեք օր :

ՊԵՏՐՈՍ

Բանակէ բանակ խոյացայ , և սէր աղաղա-  
կելով արտասուօք թրջեցի այն Աշոտ գոռոզ  
իշխանի ոտից փոշին , որպէսզի իւր արքայ եղ  
քօր հետ հաշտիլ հաճի :

ԳՐԻԳՈՐ

Աակայն արդար էր Աշոտ , վասնզի չէր ու-  
ղեր իւր կնատ եղքօր թագաւորելը . և չէր վա-  
յել արդարեւ , այր , այնպիսի ապիկար անձի  
մի թագաւորելն այսոց վերայ :

ՊԵՏՐՈՍ

Բայց նա էր անդրանիկն ու օրինաւոր ժա-  
ռանդն արքայութեան :

ԳՐԻԳՈՐ

Աակայն նորա թագաւորութեամբ դժբաղ-  
դացաւ այսաստան :

ՊԵՏՐՈՍ

Եւ ոչ անագան զղացին նորա թագաւո-  
րութեան պաշտպան նախարարք ու իշխանք , և  
լացին այս ամենայն , երբ այս երկշոտ ար-

բայի անխոհեմ՝ ընթացից վախճանը տեսան :

ԳՐԻԳՈՐ

Եւ նորա այս ասլօրէն ընթացից գործակից  
կարծեց զքել Հայաստան, և . . . :

ՊԵՏՐՈՍ

Վ ասնզի Անւոյ վաճառման հայութեան  
յաւիտեան նախատինք այս գործոյն զիս մաս-  
նակից կարծեց :

ԳՐԻԳՈՐ

Որովհետեւ վաճառման չարսդոյժ թղթոյն  
ներկայացուցիչ գտնուեցար, և . . . :

ՊԵՏՐՈՍ

Եղուկ գմբաղդութեան . լէ՛, Իշխան,  
լէ՛ ձիշդը, զոր պիտի պատմեմ ձեզ: Աքծ-  
րունեան տան մայրաքաղաք՝ ի Աերաստիա էի  
գաղթական այն խեղճ ժողովրդեան միիթա-  
րութեան համար. բայց օր մի, անմոռանալի  
տիսուր օր, յանկարծ մի քանի Հայ պատգա-  
մաւորք մեր Յովհաննէս—Ամբատ արքայէն ե-  
կան, և մենէ խնդրեցին գնալ առ Կայսրն Յու-  
նաց հաշտութեան աղադաւ: Գնացի. և թա-  
գաւորէն առ Կայսրն առաքեալ թուղթն Կայ-  
սեր ներկայացուցի :

ԳՐԻԳՈՐ

Ոռոկալի՞ օր :

## ՊԵՏՐՈՍ

ԵՐԲ Հաղիւ թէ կայսրն իւր ընթերցումն  
վերջացուց , յայտնեց ինձ նամակին պարունա-  
կութիւնը . երբ լսեցի՝ սոսկացի , և յուսահա-  
տական ձայնիւ գոչեցի , ոճիր սոսկալի :

Գ.ԻՒԳ.ՈՒ

## Առակո՞ւմն :

## ՊԵՏՐՈՍ

Անիծելով այն անխոհեմ արքայն՝ լացի այնու-  
հետեւ ազգիս գժբաղդութիւնը : Այնուհետեւ  
՚ի նանիր կ'աշխատէր կայսրն զիս միսիթարել և  
տիրազդեաց սրախս վշտերն ամսիքել : Երբ Զ քր-  
օրհնեաց օրն հասաւ , և խուռն Հայ բազմու-  
թիւն մի գետեզը կրապատէր Զ քրօրհնեաց հան-  
դիսի կատարումը տեսնելու համար . տիուր  
էի այն օրը , քանզի ակներեւ կը տեսնէի , որ  
քիչ ժամանակէն գետոյն այն վճիտ ալիքն Հայ  
արտասուաց կաթիլներով պիտի դառնանային :

Գ.ԻՒԳ.ՈՒ

## Եփսոս :

## ՊԵՏՐՈՍ

Հոն ներկայ էր նաեւ կայսրը : Երբ գե-  
տեզըն մերձեցայ , Փայտն կենաց՝ Ասաուա-  
ծորդւոյն արեամք ներկեալ այն խաչը վերուցին  
յիշեցի ահա ազգիս ապագայ խեղճ վիճակը ,  
և հաղիւ թէ հառաջանօք՝ « Ասուամծ , ոզոր-

մեա՞ն այս ձայնը՝ շրթէս թուաւ, ով անպատում հիացմանն . ահա դետոյն ջուրը՝ ՚ի միմեանց բաժանելով հանդարտեցան, և լուսոյ ճառագայթներ անդադար կը փայլէին . սորա վերայ կայսրն սքանչանալով փառօք և ընծայ իւք պատուեց զիս : Ահա այս պատիւն էր, որ ռամկին կարծել տուաւ, թէ մատնտու էի արքային այն աղդամինաս դործոյն . բայց գիտէ Տէր՝ թէ որչափ թախանձեցի զլայսրն յետո դարձունել այն անիրատ վաճառման թուղթը . բայց աւազը, անլսելի եղեւ մեր ձայնը, և Հայաստան քաղեց իւր այս անմիտ արքայի ընթացից պտուղը . բայց ահա Եմրան :



## ՏԵՍԱՐԱՆ Դ:

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈԼԻԿՈՍ, ԳՐԻԳՈՐ, ԵՄՐԱՆ, ԱՇՈՏ

### ԵՄՐԱՆ

Կատարեցի, Հայր, ձեր բոլոր հրամանները . դադոնի առաջնորդեցի աղդային մեր հաւատարիմ գնդաց դալ ՚ի տաճարս . (՚ի խորա պէսլարանին կ'երեւին զինուոներ) Հայր, ահա աղատագունդ մեր :

### ԳՐԻԳՈՐ

Քաջը Հայոց, աներկիւղ լերուք . ձեր վերայ այսօր կայացած է հայրենեաց ապագայ անդորրութեան յօյսն ու ակնկալութիւնը :

## ՊԵՏՐՈՍ

Այս, արի՝ զաւակունք, 'ի ձեղայժմկը հաշ  
ի Հայաստան, 'ի ձեղ կը նային ամեն Հայ  
աշկունք, որք արդարութեան յաղթանակի ժա  
մուն սրտագին կը բաղձան։ Յանացէք, որ  
դեակը իմ, ջանացէք ՚ի սեր Հայ ազգայնու  
թեան արիւն ու քիրտ չը խնայել։

## ԵՄՐԱՆ

Հայր, կ'երդնումք, որ մեր սուսելք ՚ի պատ  
եան պիտի չը մոնեն, մինչեւ որ արդարու  
թիւնը յաղթանակէ և Հայաստան վերակեն  
դանանայ։

## ՊԵՏՐՈՍ

Հաւատացէք, որդեամկը իմ, արդարութեան Մատն ՚ի ձեր ճակատ աստուածահիւս  
դափնիք պիտի հիւսէ. խել Հայաստան օրհն  
նալիք նուագօք յաւիտեան զձեղ պիտի օրհնէ:  
առ Եմբան. Բայց Խշան, ուր է Վահրամ, ուր  
նախարարք մեր և իշխանք։

## ԵՄՐԱՆ

Նախարարք և իշխանք, Հայր, յօժարութեամք խոստացան անմիջապէս գալ. և մեծն Ապիրատ գաղտնի պիտի առաջնորդէ նոցա,  
որպէսպէ նոցա այնպէս միահամուռ գալուստը  
կասկած չը տայ Արդարի կուսակցաց։

## ԳՐԻԳՈՐ Առ Եմբան

Փութու ուրեմն, Խշան, և այս մեր արի

Եղարց հետ տաճարիս ներքին կողմնը դարա  
նամուլտ կաց. առ զենուորս. խակ դուք՝ քաջք, սու-  
սերամերկ պատրաստ կացէք. և երբ լաէք ժողո-  
վոդեան «Խեցցէ՛ Դագիկ» ձայնը, յերեւան ե-  
ելէք, և վազեցէք ցրուել այն խուժանը՝ որ լզ-  
Սարգիս պաշտպանել պիտի իշխէ՛ ։ Հայց ջա-  
նացէ՛ք մինչեւ այն պահուն երբէք շշուկ մի չը-  
հանել, որով թշնամեաց կասկած տալով՝ մեր  
գաղտնեաց մատնառու չը լինիք։ (՚ի խորս դեսլա-  
րանին կ'անհետին զենուորս. ) առ Աշու սպա. Իսկ դու,  
Աշու, եկ այսր։

## ԱՇՈՏ

Տէր իմ։

ԳՐԻԳՈՐ

Դու եւս, քաջ, գնա դիտել դաւադրաց  
ամեն ընթացից և ձեռնարկելիք դործոց պատ-  
րաստութիւնները, և մեզ ձիշդ տեղեկութիւն  
բերել փութացիք։

(Աշու կը մինի)

## ՊԵՏՐՈՍ

Արդարեւ, Տէր Պահլաւ, ամօթահար  
պիտի ապշին այն նենդաւոր դաւադիրներն,  
երբ տեսնեն նախարարաց ու ժողովոդեան ձայ-  
նիւ Դագիկ ՚ի դահ բաղմած. այն դաւադրաց  
համար կ'ասեմ, որք միշտ Պագկայ կենաց ո-  
սոխ եղած են, և են։ Աը յիշէք, Տէր, քիչ մի  
յառաջ թագաւոր մի յիշեցի, որոյ աղդամինաս  
արարոց մին երբ պատմեցի, սոսկացիք։

## ԳՐԻԳՈՐ

Այս, անիծեալ թագաւոր մի, անիծեալ  
յաւիտեան :

## ՊԵՏՐՈՍ

Ո՞վ անիծաներ շլրմի մէջ ննջող մեղաւոր  
թագաւոր մի, թերեւս անմեղ թագաւոր մի :

## ԳՐԻԳՈՐ

Ինչո՞ւ :

## ՊԵՏՐՈՍ

Քանզի նա իւր կենաց վերջին օրերուն մէջ  
ինձ դաղսնիք մի յայտնեց :

## ԳՐԻԳՈՐ

Ի՞նչ դաղսնիք :

## ՊԵՏՐՈՍ

Այն օրը, երբ նա ՚ի յաւիտենականութիւն  
գնալ կը պատրաստուէր, ցաւոց մութ ամազ մի  
պատաճ էր նորա Ճակատի վերայ, և քրտունք  
ոլուն ոլուն կը թանային նորա ամբողջ մար-  
մինը : “ Հայր, ըստ հեկեկալով, մեղաւոր մի  
եմ, ո՛հ, եղիելի մեղաւոր, զի այսօր կըզգամ ”  
թէ անթողի մեղք մի գործած եմ :

## ԳՐԻԳՈՐ

Տէր Աստուած . ի՞նչ կըլսեմ :

## ՊԵՏՐՈՍ

Զայն հոս մարեցաւ, և վայրիեան մի կանգ  
առնելէն զինի՝ յաւելցուց : “ Այս, անքաւելի ”

մեղք . Հայրենեացս կործանման առիթ , օրինաւոր անմեղ ժառանգի մի անփրաւութիւն , վերջապէս Հայ ազգի անջնջելի նախատինք մեղք մի ։

ԳՐԻԳՈՐ

Ի՞նչ մեղք , Հայր :

ՊԵՏՐՈՍ

Արդարեւ անթողլի մեղք մի , Խշան ,  
բայց չէ նա ինքն այնչափ յանցաւոր , որչափ  
զինքն խաբող ամբարիշտները . . . Հոս լեզուս  
յառաջ չերթար , կը կարկամիմ , սարսուո մի  
է , որ զիս կը պաշարէ . . . Հայաստան , այդ-  
պիսի անագործն զաւակներ կը սնուցանեն եւ  
զեր ծոցոյդ մէջ :

ԳՐԻԳՈՐ

Կարունակէ՛ , Հայր , կ'սղաչէմ :

ՊԵՏՐՈՍ

Հոգեվարք արքայն յայտնի խոստովանեացաւ , թէ վատ ոմանկը զինքն համոզիկեր բանիւք խաբած են , իբրու թէ Գագիկ իւր կենաց դաւադիրէ : Երբ ինքն բարկութենէն ինչընելն քդիսէր , ահա մարդկային մի հրէշ թուղթ ՚ի ձեռին իւր կը ներկայանայ և կ'ասէ . “Տէր արքայ , երբ լինի անորդի պիտի մեռանիս , ինչ հարկ կայ այդպիսի ապերախա ժառանգորդի մի թողուլ այդչափի հարատութիւն . ողատմէ՛

յանցաւորը, յանձնէ՛ կայսրութեան թագաւու  
բական այս քաղաքը ։

ԳՐԻԳՈՐ ( զարմանօք )

ՈՎԼԵԱՍՏՈՒԹՅՈՒՆ :

ՊԵՏՐՈՍ

Դիտես, ովլէր այն մարդկային ճիւաղը :

ԳՐԻԳՈՐ

ՈՎԼ :

ՊԵՏՐՈՍ

ՎԵՍՏ ՄԱՐԴԻԱ :

ԳՐԻԳՈՐ

ՈՎԼՔԱՐԿՈՒԹԵԱՆ :

ՊԵՏՐՈՍ

Լ սէ՛ տակաւին, Իշխան . նա իւր կենաց  
վերջին օրերուն մէջ հասու կը լինի, թէ այս  
դաւադրութիւնն մի եղեր է :

ԳՐԻԳՈՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱւադրութիւն :

ՊԵՏՐՈՍ

Վ ասնզի ՎԵՍՏ իւր այս խաքէական ձեռա  
նարկութեամբ դիտաւորութիւնն կ'ունենայ  
Յունաց ձեռամբ թագաւորել. ուստի իւր  
համախահից ձեռամբ այսպիսի հնարիւք նախ  
զինքն բարկացուցած և առա ՎԵՍՏ ահճամբ

ազգին կործանման առիթ նոյն թուղթը իւր  
ներկայացուցած, և ապա անմիջապէս իւր կու-  
սակից պատգամաւորք ինձ յղած է . զոր ես,  
ովդբաղդութեանս, միամտօրէն կայսեր յան-  
ձնեցի :

ԳՐԻԳՈՐ

**Ա**լը սոսկամ արդարեւ, ո՞հ . . . :

ՊԵՏՐՈՍ

Ի վերջոյ ողօրմելի արքայն յաւելցուց . “Այս  
է ահա անխոհեմ թագաւորութեանս արդիւն-  
քը . վոէժս ըլ կրցի լուծել, քանզի ահա կը  
մեռանիմ” :

ԳՐԻԳՈՐ

**Ա**ւանդ:

ՊԵՏՐՈՍ

“Բայց այս անքաւելի մեղացս թողսւթեան  
դիտե՞ս, միակ հնարն ի՞նչէ, Հայր . — թագա-  
ւորեցունել զԴագիկ . գիտցիր, որ այն ժամա-  
նակ գերեզմանիս մէջ պիտի հանգչին այս իմ մե-  
ղաւոր ոսկորներս . այս իմ առքեղ կտակս է,  
Հայր ” . ասաց և մեռաւ :

ԳՐԻԳՈՐ

**Ո**վակշութեանս :

ՊԵՏՐՈՍ

**Ո**վակչան, ահա այսպէս Վեստ իւր խար-

դախ կեղծաւորութեամբն կարողացաւ այս ա-  
մենն ընել . մեղ կը մնայ առայժմ արդարու-  
թեան յաղթանակի համար աշխատիլ . . .  
քայց ով ուրախութեանս , տես , ահա Ա ահ-  
րամ . վութան ուրեմն , Իշխան , գնա՞ առ Եմբան  
և նորա հետ պատրաստութիւն տե՛ս Դագկայ  
թագաւորութեան յաջողութեան համար :

( Գիդոր կը մինի )

## ՏԵՍԱՐԱՆ Ե .

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՆԻԿՈՍ , ՎԱՀՐԱՄ

ՊԵՏՐՈՍ

Տէ՛ր սպարապետ , վտանգ կայ մեղ , մե՛ծ  
վտանգ :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ վտանգ :

ՊԵՏՐՈՍ

Եղտադաւ թշնամիք կը շարժին . Տէ՛ր . . .

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ կը խօսիք :

ՊԵՏՐՈՍ

Եւյ՛ կը շարժին , և կը յանդգնին . . . .

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ :

ՊԵՏՐՈՍ

Պաղ:

ՎԱՀՐԱՄ

Ուր:

ՊԵՏՐՈՍ

Վաս:

ՎԱՀՐԱՄ

Վետու:

ՊԵՏՐՈՍ

Խնդրել:

ՎԱՀՐԱՄ

Օյնչ:

ՊԵՏՐՈՍ

Օծում:

ՎԱՀՐԱՄ

Օծում. ի՞նչ օծում:

ՊԵՏՐՈՍ

Թագաւորութեան:

ՎԱՀՐԱՄ

Աը յիմարիմ

ՊԵՏՐՈՍ

Դեռ ոչ այսչափ. համարձակեցան նու

բա

ՎԱՀՐԱՄ

Խոսի:

ՊԵՏՐՈՍ

Ապառնալ :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչպէս :

ՊԵՏՐՈՍ

Ի մահ մատնել ամեն զնոսա , որը պիտի  
հակառակին իւրեանց ձայնի :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ է իւրեանց ձայնը :

ՊԵՏՐՈՍ

Ալ կամին՝ որ թագաւորէ :

ՎԱՀՐԱՄ

Ո՞վ :

ՊԵՏՐՈՍ

Վ եստ Ապրդիս :

ՎԱՀՐԱՄ

Վ եստ Ապրդիս :

ՊԵՏՐՈՍ

Եմ' :

ՎԱՀՐԱՄ

Իսկ աղջին :

ՊԵՏՐՈՍ

Եղդէտ է :

ՎԱՀՐԱՄ

Իրած , առանց աղդին դիսութեան :

ՊԵՏՐՈՍ

ԱՅՆ :

ՎԱՀՐԱՄ

ՈՎԼ բարկութեանս :

ՊԵՏՐՈՍ

Նոյն իսկ վեստ համարձակեցաւ սպառնալինձ, եթէ . . . :

ՎԱՀՐԱՄ

ՈՎԼ Աստուած իմ, այդպիսի վաստ մի դեռկ'ապրի. երթամ . . . :

ՊԵՏՐՈՍ ( յեռնը բոնելով )

Կայ, որդեակ, կայ :

ՎԱՀՐԱՄ

Թող զիս, թող :

ՊԵՏՐՈՍ

Որդեակ, խորհիմք, և ապա . . . :

ՎԱՀՐԱՄ

Դեռ խորհիմ, երբ վաստ մի . . . :

ՊԵՏՐՈՍ

Որդեակ, յիշէ միանդամ՝ թէ երբ Աարդիս  
մահու արեան մէջ լողայ, ի՞նչ սկիտի լինի Հայ-  
աստան :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչ :

ՊԵՏՐՈՍ

Չը գիտե՞ք միթէ , որ Ախանիք և Շագրա-  
տունիք զիրար պիտի կոտորեն , և ատելու-  
թեան հուրն . . . :

ՎԱՀՐԱՄ

Շայց , Հայր . . . :

ՊԵՏՐՈՍ

Համբերութիւն , որդեակ իմ , Խորհիմք ,  
քանդի զօրաւոր է Արդիս :

ՎԱՀՐԱՄ

Ի՞նչպէս :

ՊԵՏՐՈՍ

Կախարարք , իշխանիք և շատ ազատք նորա  
թիկունիք են :

ՎԱՀՐԱՄ

Հոդ չէ :

ՊԵՏՐՈՍ

Եւ բանակն ողջոցն :

ՎԱՀՐԱՄ

Բանակն :

ՊԵՏՐՈՍ

Այս :

ՎԱՀՐԱՄ

Ավանն . . . :

## ՊԵՏՐՈՍ

Մի վհատիր, որդեակի իմ, այլ . . . :

## ՎԱՀՐԱՄ

Ես վհատիմ, ես . երբէք . Հայաստանի արեւու տակ անիրաւութեան դրօն պիտի ըլծածանի, քանի որ Վահրամկ'ապրի:

## ՊԵՏՐՈՍ

Օ այդ քաջ գիտելս էր, Տէր սպարապետ, որ անմիջապէս զիմրան յլրդինա առ ձեղ յլշղել փութացի, որպէսզի ձեր պաշտպանութեան յանձնեմ զԴադիկ:

## ՎԱՀՐԱՄ

Այս, պիտի պաշտպանեմ զԴադիկ. կ'երդնում, որ այսօր սա բեմին վերայ կամ Դադիկ Հայոց արքայ պիտի օծուի, և կամ Վահրամ արիւնուայ պիտի փռուի:

## ՊԵՏՐՈՍ

Յաղ գան դեռ ազգին հաւատարիմ նախարարք, և ապա . . . :

## ՎԱՀՐԱՄ

Բայց Դադիկ, Հայր . . . :

## ՊԵՏՐՈՍ

Դուք արդէն գիտէք, որ Դրիգոր ձեր եղբօրորդւոյ հետ զնա 'ի Ծնի յղեցի. բայց որովհետեւ Դադկայ բացակայութիւնը զիս անհանգիստ միշտ կ'ընէր, ուստի պատերազմէն

վերջ անմիջապէս խրկեցի զլումրան ՚ի Ռջնի :

ՎԱՀՐԱՄ

ԲԵՐԱՄ :

ՊԵՏՐՈՍ

Այս, և այժմն ասոյլնի է :

ՎԱՀՐԱՄ

ՎԴ ուրախութեան :

ՊԵՏՐՈՍ

Ասկայն Եմրան խոհեմութիւն համարած է  
թէ Ռջնւոյ մէջ և թէ Անւոյ մէջ զրոյ ձգել,  
թէ Գագիկ առ Տուղիլ ապաստանած է, որ  
պէսզի Արդսի կասկած չը տոյ թէ Գագիկ  
Հայաստանի մէջ է . բայց ահա Աշոտ :



## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՎԱՀՐԱՄ, ԱՇՈՏ

ԱՇՈՏ

Հայր, տաճարիս գաւթի մեծ դրան առ  
ջեւ բաւական մեծ բազմութիւն խռնուած  
է, և իւրաքանչիւր պք արդարեւ Արդսի թա-  
գաւորութեան կը բաղձայ :

ՊԵՏՐՈՍ (Հանդարաօրէն)

Հոգ չէ, որդեակ :

## ԱՀՈՏ

Հայր, տաճարիս Արեւմուեան դրան առ  
ջեւ Արգսի կուսակից դաւադրաց խումբ մի  
գաղտ կըսպասէ . Հայր կարծեմ թէ Արգիս  
նոյն դրանեն լոելեայն 'ի տաճարս պիտի մտնէ ,  
և . . . :

## ՊԵՏՐՈՍ

Հոգ չէ, որդեակ :

## ԱՀՈՏ

Հայր, բանակն համօրէն արքունի պալատը  
զջապատած է, և զէն 'ի ձեռին պատրաստ է  
յընդունելութիւն Արգսի : Հայր, բանակի  
հրամանատարը և զօրապեաք կաշառուած են ,  
ուստի . . . :

## ՊԵՏՐՈՍ

Հոգ չէ, որդեակ :

## ԱՀՈՏ

Հայր, զօրաւոր է Արգիս, և զջահայեաց  
խորագէտ : Հայր, եթէ մերժէք, գիտցիր, որ  
դաւադիրք Արեւմուեան դրանեն մտնելով՝ տա-  
ճարիս դուռները 'ի ներքուատ պիտի փակեն ,  
և . . . :

## ՊԵՏՐՈՍ

Խօսէ՛, որդեակ :

## ԱՀՈՏ

Եւ 'Կէսսկորեայ ձեռամբ թագաւորական

Թագն Արդգսի ղլսի վերաց պիտի հանգչի :

ՊԵՏՐՈՍ (ԵԿԱՆԻՎԵԱԼ)

Է՞նչ կը խօսիք, որդեանկ :

ԱՇԽԾ

Հաւատուա, Հայր, Դէսոկորոս աստ յէն-  
նի է :

ՊԵՏՐՈՍ

Իրամն :

ԱՇԽԾ

Այս :

ՊԵՏՐՈՍ

Ուստի գիտէք :

ԱՇԽԾ

Հայր, դաւադրաց խմբի մէջ, որոյ պարա-  
գլուխն Աքաս էր, բարձրահասակ մ. բդ մի  
նշմարեցի . դիտեցի և ճանցայ, որ Դէսոկորոս  
էր . ուստի, Հայր, անշուշտ եմ, թէ Դէսո-  
կորեայ ձեռամբ Արդիս պիտի յաջողի . . . :

ՎԱՀՐԱՄ

Ո՞յ զարմացմանս :

ԱՇԽԾ

Հայր, վտանգ կայ մեղ, ուրիշ միջացներու-  
ձեռնարկեմք :

ՊԵՏՐՈՍ (ԵԿԱՆԻՎԵԱԼ)

Երբէք . յէստուած վստահ այսօր Գագ-

կայ իրաւանց համար պարտիմք գործել, և . . . :

### ԱՀՈՏ

Բայց, Հայր, Եթէ . . . :

### ՊԵՏՐՈՍ

Կ'երկմտիս դու, ովքաջ, Անմահին զօրութեան վերայ, որ ամբարիշտ վատաց պատիմն ըստ արժանւոյն միշտ կը հատուցանէ . յերկինս նայէ, տե՛ս, Յաւիտենականին արդարութեան սուրբն ի՞նչպէս ամբարիշտ գլխոց վերայ կը շողայ : Աստուած, որ Հայկայ, Վարդանայ բաղսւեները զօրացոց, Աստուած, որ մեր առաքինի հարց առաջնորդեց, Աստուած, որ զՀայաստան քանիօն պահեաց, այսօր միթէ լքեալ կը թողո՞ւ զՀայաստան, միթէ արդարութիւնն ոտնակրիսել կը տայ : — Երբէք : Յուսանիք յԱստուած, յուսանիք ու գործենիք :

### ՎԱՀՐԱՄ ԵՒ ԱՀՈՏ

Հայր :

### ՊԵՏՐՈՍ


Որդեակը իմ, այսօր մեր անմահութեան օրն է . այսօր ՚իսէր արդարութեան Աստուծոց և հայրենեաց եթէ զոհ ու պատարագ լինիմք, մեծ փառք չչ մեղ այս :

### ՎԱՀՐԱՄ ԵՒ ԱՀՈՏ

Այս, Հայր :

## ՊԵՏՐՈՍ

Անխոռով մեռանինք , որդեսնկը , անխոռով մեռանինք ՚ի սէր արդար իրաւանց : Ե՞ւ Ելզա . որդեակ իմ , խակքեղ այսօր սա միայն կը մնայ ըներերք “ Կեցցէ Գագիկ ” մողովոդեան այս ձայնք լսես , կ’առնուս Բագրատունեան տան խաչանիշ գրօշը , ամենայն ճեպով կը վազես , և արքունի պալատան բարձր աշտարակի վերայ կանգնած կ’աղաղակես առ վինուորս բանակին . “ Քա՞նդք Հայոց , կենդանի է Գագիկ . օճաւթագաւոր . կեցցէ արքայն մեր Գագիկ . . . ” բայց ովք բերկըութեանս . ահա նախարարք մեր , ահա տեարք և աղատք . . . . :



## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ . ՎԱՀՐԱՄ . ԱՊԻՐԱՑ  
ԵՒ ՀԱԽԱՏԱՐԻՄ ՆԱԽԱՐԱՐՔ

## ՊԵՏՐՈՍ

“ Ամխարարք , իշխանիք , աղմաք Հայոց . կարեւոր էր ձեր գալաւատը , արդարեւ շնորհարեւոր , վասնվի ահա հայրենիք հետզհետէ կը թշուաւանայ մեր անտարքերութեան պատճառաւ .”

## ԱՊԻՐԱՑ

Ի՞նչ աղէտ , ի՞նչ թշուաւութիւն աղգին 12

կրկին պատահեցաւ, որ այդպէս կը խօսիք,  
Հայր :

## ՊԵՏՐՈՍ

Ի՞չ աղէտ . Հայրենեաց անտերունչ ու անշ  
պաշտպան վիճակին չար ստահակը ոգի առ  
նլով՝ անդադար աղքին աղէտքն կը կրկնապատ  
կեն : Ոիմէ դուք տեղեակ չէք նոցա չարու  
թեանց ու ոճրից :

## ԱՊԻՐԱՏ

Արդէն յայտնի Ճշմարտութիւն մի է, թէ  
միշտ անիշխանութիւնն է մեծամեծ չարեաց  
բուն պատճառը :

## ՊԵՏՐՈՍ

Կը խոստովանիք զայդ, այնպէս չէ :

## ՆԱԽԱՐԱՐԻՔ

Այս :

## ՊԵՏՐՈՍ

Ո՞նչեւ ցայսօր զանազան ապատամբական  
ցոյցեր, մեծամեծ եղեռնագործութիւններ,  
անթիւ անիբաւութիւններ տեղի ունենալէ  
զինի, ժպիրհք բոլորովին երես առեալ ահա  
այսօր կը յանդգնին աղքակործան մեծ չարու  
թեան մի ձեռնամուխ լինել :

## ԱՊԻՐԱՏ

Ի՞նչ չարութեան :

ՊԵՏՐՈՍ

Թագաւոր Հաստատել :

ՆԱԽԱՐԱՐԻՔ

Օ միջ :

ՊԵՏՐՈՍ

Ոիւնեաց իշխան Ազատն Վարդիս :

ԱՊԻՐԱՏ

Խակ աղջն :

ՊԵՏՐՈՍ

Կը մերժեն ընդհանուր աղդին ձայնել :

ՆԱԽԱՐԱՐԻՔ

Ոսկալի՛ յանդդնութիւն :

ՎԱՀՐԱՄ

Աշոելի՛ ամբարշտութիւն :

ԱՊԻՐԱՏ

Կը սարսուիմ :

ՊԵՏՐՈՍ

Արդարեւ, Տեամբք, զայս յիշելն խակ մարդոց սարսուռ կ'ազդէ, թողթէ գործելլ :

ԱՊԻՐԱՏ

Հայր, նոյն ինքն Վարդիս տեղեամկէ դոյս ամօթալի համարձակութեան :

ՊԵՏՐՈՍ

Որդեամկը իմ, նոյն խակ Վարդիս համարձա-

կեցաւ զիս յապարանս իւր կոչել . գիտէք , ինչ  
չո՞ւ . — զիս իւր փառասէք դիտաւորութեան  
գործակից առնելու համար :

ԱՊԻՐԱՏ

Խ՞նչըլէս :

ՊԵՏՐՈՍ

Խնդրելով յինէ թագ :

ՆԱԽԱՐԱՐՔ

Տէր Աստուած :

ՊԵՏՐՈՍ

Աերկայացան հոն նոյն պահուն իւր հա-  
մախոհները . և ինձ՝ ով դժբաղդութեանս ,  
“Հայրապէտ , ըսին , թագաւոր պարտիս օճել  
զԱրդիս՝ տէրա Աիւնեաց” :

ՎԱՀՐԱՄ

Ալ .քստմնիմ , ափառ :

ՊԵՏՐՈՍ

Աերմեցի . . . : Ապառնացան խաւարել  
դայաստան . որդեակիք իմ , հայրենասէ՛ր որ-  
դեակիք իմ , նոքա քիշմիշն հոս գալ սլիտի յան-  
դրդնին , որպէսզի բունի ինձ օճել տան ըդ-  
Աարդիս :

ԱՊԻՐԱՏ

Արքէք . թագին բուն ժառանդն Գագիկ  
է միայն :

## ՊԵՏՐՈՍ

Այս, որդեամկը իմ; թագին օրինաւոր ժառանգն Գագիկ է. կ'ընդունիք և կը կամիք, որ նա թագաւորէ:

## ՆԱԽԱԲԱՐՔ

Այս, Հայր, բայց Գագիկ, . . . :

## ՊԵՏՐՈՍ

Կենդանի է Գագիկ, եթէ խոստանայք նորա կենաց պաշտպանութիւն չը զլանալ:

## ՆԱԽԱԲԱՐՔ

Հայր, երդնումք:

## ՊԵՏՐՈՍ

Ո՞մնչեւ ցարդ զնա գաղանի պահեցի եւ պատսպարեցի, վասնդի Վեստի գաւաճան վըրէմինդրութենէն կը խիթայի. այլայսօր որտէհետեւ կը կամիք, որ թագաւորական տան վերջին մնացորդ նշանը այն սիրելի աւանդն ձեղ յանձնեմ, որպէսզի արդարութիւնն յաղթանակէ, օն ուրեմն, ծունդ դիք, որդեամկը իմ:

## ՆԱԽԱԲԱՐՔ

Հայր, ինչու համար:

## ՊԵՏՐՈՍ

Երդնուլ յանուն Աստուծոյ, յանուն Հայազգայնութեան ՚ի պաշտպանութիւն Գագիայ կենաց:

ՆԱԽԱՐԱՐԻՔ

ԵՇ ապա՞ :

ՊԵՏՐՈՍ

Ապա վստահ ձեր երդման, վստահ ժողովութեան այն ձայնի, որ գԴագիկ միշտ կը խընդուի թագաւոր, ձեզ պիտի յանձնեմ ձեր թագաւորը :

ՆԱԽԱՐԱՐԻՔ (ԿԸ ՃՆՐԵՒ)

Պատրաստ եմք, Հայր :

ՊԵՏՐՈՍ

Երդուարմուք ուրեմն :

ՆԱԽԱՐԱՐԻՔ

Երդնումք յանուն քո, մվ Տէր, երդնումք չամփոփել սուսերք մեր ՚ի պատեան, մինչեւ թագաւորեսցէ արքայն մեր Գագիկ . երդնումք մինչեւ ցլախճան կենաց մերոց չխնայել զարիւն մեր ՚ի փառս հայրենեաց մեր և ՚ի բարօրութիւն համայն Հայաստանեաց : Իսկ թէ ոք ՚ի մէնջ, Տէր, ոք ուխտանենդ դրժեալ զերդումն՝ զոր արդ երդնու, աստուածային շանթք բարկութեան քո իջեն ՚ի գլուխ ամբարշտին, եւ շանթահար սպատուհասեալ յԱստուածութենէդ՝ կորիցէ յերկրէ անուն նորա և յիշատակ :

(յոպէ կ'ԵԼՅԵՒ)

ԶԱՅՆ ՄԻ ՚Ի ԽՈՂՈՅ ՓԵԱԼԱՐԱՆԻՆ

Հայր, ահա դայ Այրդիս, դան դաւադիք:

## ՊԵՏՐՈՍ

թող դան, հոգ չէ : ( Օ՞ն, իշխանազմ՛ւն որ-  
դեակը իմ, վութացէք ուրեմն, վութացէք  
պթագաւորն ձեր ողջունել :

( Ալ Թէնին )

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՎԵՍՏ ՍԱՐԳԻՍ · ԴԵՐԵՆԻԿ · ԴԱՒՏԻՄ  
ԽԸՆԱՆՔ

## ՍԱՐԳԻՍ

Վ երջապէս հասանք ՚ի տաճարս . արդա-  
րեւ ակնկրոքայլել կըստիպուէի, երբ կը նշմա-  
րէի Կաթողիկէիս Արեւմտեան դրան առջեւ  
սպասող մեր հաւատարիմ եղքարց ուրախ ու-  
վառվուռն բիբերն, որք սիրալիր ակնարկօք զիս  
կ'ողջունէին . զիս՝ թագաւորս Հայոց : Բայց  
ինչ կը խօսիմ . ոչ, դեռ թագաւոր չեմ, վասն  
զի օծումն՝ թագաւորական Ճակատի մի վայել  
այն նշանն հանգչած չէ : Բայց հոգ չէ . վայրկե-  
նէ մի զինի ամեն ինչ կը վերջանայ . պիտի օծ-  
ուի Ճակատս, և պիտի պատկուիմ թագաւոր :

( խուժանի խոտնաշխոն Յայնել ) Երջանկութիւն . ա-  
հա ժողովուրդն է, որ կ'աղաղակէ . “ Կեցցէ՛  
արքայ ” : Աղաղակեցէք դուք, սիրելի՛ ժողո-  
վուրդ, ձեր տպագայ բարօրութեան համար է,  
որ Արդիս՝ Տէրն Աիւնեաց իւր թագաւորու-

թեան ըոսկէ մը յառաջ կառարման կը բաղձայ .  
այնպէս չէ՝, քաջդ Դերենիկ :

ԴԵՐԵՆԻԿ

Այս, Տէր աբքայ :

ՍԱՐԳԻՍ

Եւ դու այժմէն զիս աբքայ կ'անուանես .  
այնպէս չէ, դու, մե՛ծդ Դերենիկ, ուրեմն  
ալ համոզուած ես, թէ թագաւոր եմ :

ԴԵՐԵՆԻԿ

Անշուշտ :

ՍԱՐԳԻՍ

Բայց գիտացի՞ր, որ ես՝ Տէրա Ախոնեաց զիւ  
պաց մէջ փորձուած մարդ մի եմ, և կտսկա-  
ծու բաղդին ամեն յեղյեղուկ վայրկենից վե-  
րայ . դեռ թագաւոր չեմ, մի կոչեր զիս թա-  
գաւոր :

ԴԵՐԵՆԻԿ

Այդ կասկածու բնութեամբդ էր, որ տար-  
տամ ընթացիւք մինչեւ ցայժմ լոկ յսսերու  
մէջ կը դեղերէիք, բայց Դերենիկ իւր հանձա-  
րաւն կարողացաւ մի քանի աւուր մէջ ամեն  
ինչ վերջացունել, զնախարար ձեզ համամիտ  
ընել, ո՛Դէսսկորոս համոզել, և այլ շատ գոր-  
ծեր : Տէր Ախոնեաց, աշխարհիս մեծ մարդիկն  
միշտ յանդուդն մարդիկ եղած են :

ՍԱՐԳԻՍ

Աակայն . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Անհոգ կաց . այսօր դուք Հայոց թագաւոր  
պիտի լինեիք , վասնզի դէպէ ու միջոցք մեր հա-  
մար յաջող են :

ՍԱՐԳԻՍ

Ալ կասկածիմ արդարեւ , իշխան :

ԴԵՐԵՆԻԿ

Դուք կը կասկածիք . Տէ՛ր Այւնեաց , երբ  
բանակն է ձեզ թեւ , նախարարս ու իշխանք  
թիկունք , և արդէն ժողովուրդն պատրաստ մեր  
ճայնի ընկերանալով՝ զձեզ թագաւոր ընդու-  
նելու , ովկը կարող է հակառակիլ ձեզ :

ԻՇԽԱՆՔ

Ոչ ո՞ք :

ԴԵՐԵՆԻԿ

Դուք , Տէ՛ր Այւնեաց , դուք պիտի թա-  
գաւորէք . . . բայց ովկ Աստուած , Հայրա-  
պետն է , որ ահա վարագորի ետեւէն ելնե-  
լով՝ բեմին վերայ կ'երեւի :

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈԼԻԿՈՍ , ՎԵՍՏ-ՍԱՐԳԻՍ , ԴԵՐԵՆԻԿ  
ՆԱԽԱՐԱՐՔ , ԻՇԽԱՆՔ ԵՒ ՃՈՂՈՎՈՒՐԴՔ

ԴԵՐԵՆԻԿ

Տէ՛ր Հայրապետ , թագաւորութեան ար-  
ժանաւորն զլարդիս՝ Տէ՛ր Այւնեաց պատրաստ  
էք այսօր թագաւոր օծել :

ՊԵՏՐՈՍ

Այսօր :

ԴԵՐԵՆԻԿ

Այս :

ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ կը խօսիք, կը ցնորի՞ք, հապա ժողովութեալ :

ԴԵՐԵՆԻԿ

ՔԵՂ ինչ ժողովութեալ, ժողովուդեան ողաւասիսանատու մէք եմք :

ՊԵՏՐՈՍ

Երբէք . ընդհանրութեան ընտրածն ու որոշածն միայն կարող եմ թագաւոր օծել :

ԴԵՐԵՆԻԿ

Ժողովուրդն արդէն դուրսը խռնուածէ . օծէ՛, և ապա ժողովուրդն թող ողջունէ իւր թագաւորը :

ՊԵՏՐՈՍ

Ոչ այդպէս, որդեանկը իմ. Աստուած և հայրենիք զայս կը պահանջեն, զայս կը պահանջէ և մարդկային խղճմանասց ձայնը, թագաւոր այն է, որ ժողովուրդն կ'ընտրէ . բացէ՛ք դռները : (Ճանչլուն դրանց)

ԴԵՐԵՆԻԿ

Հայրապետ, ձեր այդ յամառութեամբն ազդին ազէտքն կը կրկնապատիէք . կ'օծէ՛ք, ապա թէ ոչ . . . :

## ՊԵՏՐՈՍ

Ե զուր է ձեր սպառնալիք . Հանքութեան  
ձայնը միայն կարող եմ յարգել , վասնդի ժողո-  
վրդեան ձայնի գործադիր լոկ սպասաւոր մի եմ :

ԶԱՅՆԻ

ԱՅԻ :

ՍԱՐԳԻՍ առ ՚ԻՆԵՇՆԻՇԻ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ է :

ԴԵԲԵՆԻԿ

Հոգ չէ . ( Բարձր ) ժողովրդեան ձայնն ըն-  
դունելի է , այնպէս չէ , այր :

ՊԵՏՐՈՍ

ԱՅԻ :

ԴԵԲԵՆԻԿ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ , ազատք և նախարարք զլար-  
դիս՝ Տէրն Արևնեաց թագաւոր կը կամին . կեց-  
ցէ՛ ուրեմն Աարդիս՝ թագաւորն այսոց :

ԶԱՅՆԻ

ԱԿԵՐԵ՛ :

ՍԱՐԳԻՍ

ՕՐՀԱՆԵԱԼ է Աստուած :

ՊԵՏՐՈՍ

Բայց գիտե՞ք , ժողովներդը այսոց , օրի-  
նաւոր ժառանդ թագին քաջին Աշտայ որդի  
Դագիկ է :

( ասդ և անդ ԱՌԵՆԵՐ )

ԳԵՐԵՆԻԿ

Հայր, դեռ կը յամառիս . ահա ժողովուր-  
դըն զԱրդիս Տէրն Ախոնեաց կ'ընտրէ :

ԴԱՏԱԴԻԲ ԻՇԽԱՆՔ

ԿԵՋԵԼ' Արդիս, կեցցէ :

ՊԵՏՐՈՍ

Ժողովուրդէ Հայոց, գիոցիք, որ Գագիկ  
կենդանի է, զո՞լ կ'ընդունիք, զՄագիկ թէ  
զԱրդիս :

ԶԱՅՆՔ

ԿԵՋԵԼ' Գագիկ, կեցցէ :

ՊԵՏՐՈՍ

Հայոց ժողովուրդ, ահա թագաւոր ձեր :  
( Վարագոյնը իւ բացուի, և Գագիկ ի գոհ բազմած ի՞ն-  
ըեւի . յաջմէ գահուն Ապիրատ արքունական նախն ի յե-  
սին ի՞նըեւի . իսկ ի յախմէ Գրիգոր Առաքիսպրոս գա-  
ղան ի յեսին : Դրօշակիրք երիու և հնգելպասան նախարարք  
տափի և անփի բեմին վերայ իարգաւ ի՞նըեւին : Իսկ մ-  
իուսի Ապահով սուսերամերի արքանացեալ իւ պեսնուի ) :  
Ահա Գագիկ, թագին օրինաւոր ժառանող թա-  
գաւոր ձեր Գագիկ :

ՍԱՐԳԻՍ

ՈՎ ափօռվմեանս . ոՎ կը յուսար . . . .

ԶԱՅՆՔ

ԿԵՋԵԼ' :

ՊԵՏՐՈՍ

Ուրեմն և ես՝ հայրապետոս Տանն Հայկայ,

վատահ ձեր համահաճ հաւանութեան, կը դը-  
նեմ ահաւասիկ թագաժառանդ իշխանիս ար-  
ժանաւոր գլուխը թագաւորական այս թագը.  
(Ենէլը) Յաւխտենականին ամենազօր աջն հո-  
վանսացի ՚ի վերայ քո, արքայ Հայոց :

## ԶԱՅՆՔ

ԿԵՐԵՒ :

ՊԵՏՐՈՍ (Գաւաղանը Գալով)

Ու եղիցի քեզ գաւաղան արդարութեան,  
գաւաղան փառաց, գաւաղան ընորհաց : (Կամ  
Բուրելը Ճակապը) (Օրհնութիւնք որդւոց հայրե-  
նեաց եղիցին դափնիք անմահութեան ճակա-  
կատուդ, և առաքինութիւնքդ սպակ փառաց  
գլխոց : (Խոնարհելը) Թագաւորեսցէ լնդ քեզ  
Տէր Աստուած, և ընդ հովանաւորութեամբ  
Աստուծոյ և ազգիս Հայոց անսասան կացցես  
յաւիտեան :

(Այս նախարարք զադ զադ Գալով կ'ողջունէն  
նորապակ Եագաւորը)

## ՍԱՐԳԻՍ

ՈՎԱՐՍԱՎԻՄԱՆ :

ԴԵՐԵՆԻԿ

Փախչիմք, (Գաճարին ներքնակողմէն զնուողներ  
իերեւին .) ահա Պահլաւ Տան աղատագունդն  
է, որ սուսերամերկ կը խուժէ . փախչիմք :

## ՍԱՐԳԻՍ

Եղմէկ, ով կը յուսար, թէ . . . :

ԴԵՐԵՆԻԿ

Տե՛ս, ահա բոցանշոյ թուրք, որք սպառ-



նալից կը շղան մեր կուսակցաց վերայ, վասխ  
չմբ :

### ՍԱՐԳԻՑ

Դերենիկ, փրկէ զլտ, փրկէ . անիծեալ  
թագն ու թագաւորութիւն . սարսափելի է  
մահ . փախչմբ :

(Կը դական)

### ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԵԿՈՍ . ԳԱԳԻԿ, ՎԱՀՐԱՄ, ԳՐԻԳՈՐ,  
ՆԱԽԱՐԱՐՔ ԵՒ ՃՈՂՈՎՈՒՐԴԻՔ

### Գ.ՐԻԳՈՐ

Տէր արքայ, թշնամիներդ սպառեցան, 'ի  
մահ մատնեցան ամեն նորա, որը պաշտպանել  
կ'իշխէին զլարդիս . միայն նա ինքն Աարդիս և  
Դերենիկ 'ի Աերքնաբերդն անկեալ գլխութեանդ  
կ'ապաւինին :

### ՎԱՀՐԱՄ

Գլխութիւն, անկարելին . գնա՛ , քա՞ղդ Գը-  
րիկոր, պաշարել Աերքնաբերդը, մինչեւ անձ  
նատուր լինին կամ սովամահ հօն կորսուին :

### Գ.ԱԳԻԿ

Ալմէ գլխութիւնը, Տէր սպարապետ, գե-  
րագոյն առաքինութիւն մի է, գլխամբ . չեմ  
փափագիր բնաւ, որ այսօր այնալիսի Հայ ա-  
րիւն մի թափուի, որ գլխութիւն կը խնդրէ :



## ՊԵՏՐՈՍ

Այս բարի քրիստոնէական զգացմամբ ըստ քանչելի կը հանդիսացունեկը զձեղ, Տէ՛ր արքայ. ներե՛լ թշնամւոյն, երբ գլխութիւն կը հայցէ, արդարեւ մեծ առաքինութիւն :

## ԳՐԻԳՈՐ

Նայնպէս, Տէ՛ր արքայ, բանակն հնազանդեցաւ ձեղ. զէնընկէց եղեն ամեն Հայք, որը Վարդսի խորագէտ ճարտարմատութենէն թշնամւալ կ'ուղէին պաշտպանել նորա թագաւորութիւնը: (Գողց հնալուն) Տէ՛ր արքայ, ահա արքունի բանակն առաջնորդութեամբ քաշին Կմբանայ և Աշոտայ ձեր թագաւորական տան դրօշն բացած՝ զարքայդ նորապսակ ողջունել կը փութայ :

## ԶԱՅՆՔ

Կեցցէ՛ արքայն մեր Գագիկ, կեցցէ՛ :

## ՊԵՏՐՈՍ


Ժաղավիշտրդք, ձեր այդ աղաղակաւն աւանիկ Հայաստան նոր կենդանութիւն կ'ստանայ, և Արարատայ ազատ բարձունքն խնդագին ահա կը կրկնեն ձեր “Կեցցէ՛ արքայն մեր Գագիկ ո ձայնները:

## ԶԱՅՆՔ

Կեցցէ՛ :

## ՊԵՏՐՈՍ

Բայց առայժմ լուռ լեզուք, Հայոց ժողո-



վուրդք, և ուշադրութեամբ՝ ՚ի միտ առէք,  
զօր պիտի ասեմձեզ. հաւատացէք դուք, ով  
որդիք Հայկայ, թէ կոյ յերկինա ամենատես  
Աչք մի, որ ամբարշտաց որտի խարերը դիտե-  
լով՝ ըստ այնմնոցա պատիմն ու պատուհան  
կը տնօրինէ. արդ՝ արդարութեան միշտ հե-  
տեւողլիբուք, ովդորդեակը իմ:

ԳԱԳԻԿ, ՆԱԽԱՐԱՐՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՔ

Հայր, ուխտեմք արդարութեան միշտ կալ  
հպատակ:

### ՊԵՏՐՈՍ

Աւրեմն ցնծա, խնդա, զուարձացիր, ով  
Հայաստան, զի ահա որդիք քո ուխտեն եւ  
երդնուն Այտուածութեան լինել զաւակքարի,  
զաւակ արժանաւոր Հայ ազգայնութեան,  
և զաւակ լնտիր հանուր մարդկութեան:

ԳԱԳԻԿ

Այս մեր ուխտ և երդում, ՚ի փառս քո է,  
Հայաստան: Հայաստան, ՚ի փառս քո մե-  
ռանիլ ուխտեմք յաւխտեան:

### ՎԵՐՅ

#### ՆՈՒԷՐ

Ս. Էջմիածնի Գէորգէան

Ժառանգաւորաց Ճեմարտնին

ՄՈՒՐԱՑԱՆ ից

25 Սեպտեմբ. 1899 ամի.





